1.2.34. **Լոտ՝** գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մաս, որը առանձնացված է որոշակի չափանիշներին համաձայն, որի համար, համաձայն մրցակցային գնման մասին հայտարարության և փաստաթղթերի, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերով կամ գնանշումների հարցման մասին հայտարարության համաձայն թույլատրվում է գնմանը մասնակցելու առանձին հայտի ներկայացում և գնման արդյունքներով առանձին պայմանագրի կնքում:

1.2.35. **Մարքեթինգային հետազոտություններ՝** մրցակցային գնման ձևի եղանակ, որի ժամանակ Պատվիրատուն էլեկտրոնային մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի (ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) իրականացման հնարավորության հարցման, մասնագիտացված տեղեկատվական համկարգերում կամ Ինտերնետ-հարթակներում տեղադրման միջոցով հնարավոր մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից ուղարկվող պատվերի) համաձայն՝ գնման մասնակիցների կողմից առաջադրվածների թվից ընտրում է իր համար պայմանագրի կատարման առավել շահեկան պայմանները:

1.2.36. **Պայմանագրի նախնական (առավելագույն) գինը (լոտի, գնման առարկայի արժեքը)**՝ գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների առավելագույն գինը:

1.2.37. **Ոչ մրցակցային գնում**՝ գնում, որի կատարման պայմանները չեն համախառնախանում 1.2.29 և 1.2.30 կետերով նախատեսված մրցակցային գնման իրականացման բոլոր պայմաններին միաժամանակ:

1.2.38. **Ոչ մրցակցային գնում էլեկտրոնային եղանակով**՝ ոչ մրցակցային գնման կատարման եղանակ, որի ժամանակ փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթերի ձևով, որոնք փոխանցվում են Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից հաստատված էլեկտրոնային հարթակի (մասնագիտացված տեղեկատվական համակարգի, Ինտերնետ-հարթակի) միջոցով:

1.2.39. **Վերջնական առաջարկ**՝ մրցակցային գնման ձևի իրականացման ժամանակ գնման մասնակիցների կողմից սույն Կարգի պահանջներին համապատասխան տրվող տեղեկություններ ապրանքի գործառնության ընթացքների (սպառողական հատկությունների), աշխատանքի, ծառայության որակի և պայմանագրի կատարման այլ պայմանների մասին:

1.2.40. **Էլեկտրոնային հարթակի օպերատոր**՝ առևտրային իրավաբանական անձ, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ փակ բաժնետիրական ընկերության

կազմակերպարավական ձևով, որի կանոնադրական կապիտալում օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա իրավաբանական անձանց բաժնեմասը կամ քվեարկող բաժնետոմսերի քանակը, որոնք պատկանում են նշված քաղաքացիներին և անձանց, կազմում է ոչ ավել, քան քսանհինգ տոկոս, որը տիրապետում է էլեկտրոնային հարթակին, այդ թվում՝ դրա գործունեության համար անհրաժեշտ սարքավորումներին և ծրագրավորման տեխնիկական միջոցներին (այսուհետ նաև՝ էլեկտրոնային հարթակի ծրագրավորման տեխնիկական միջոցներ) և որը ապահովում է էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման կատարումը սույն Կարգին, էլեկտրոնային հարթակում գործող կանոններին և Պատվիրատուի ու էլեկտրոնային հարթակի օպերատորի միջև կնքված համաձայնությանը համապատասխան:

1.2.41. **Նախաորակավորման կազմակերպիչ՝** «Գազպրոմ» ՀԲԸ (Դեպարտամենտ):

1.2.42. **Կազմակերպիչ՝** «Գազպրոմ» ՀԲԸ (Դեպարտամենտ), Գազպրոմ իմբի մասնագիտացված ընկերություն, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (Գնումների նախապատրաստման և անցկացման բաժին), որն իրականացնում է գնումների գործընթացի կազմակերպում և անցկացում:

1.2.43. **Բաց մրցակցային գնում՝** մրցակցային գնում, որի անցկացման մասին տեղեկատվությունը հաղորդվում է մրցակցային գնման կատարման մասին հայտարարությունը մրցակցային գնման մասին փաստաթղթերի կցմամբ տեղեկատվական համակարգում անսահմանափակ շրջանակի անձանց հասանելի եղանակով տեղադրելու միջոցով:

1.2.44. **Նախաորակավորում՝** որոշակի տեսակի աշխատանքների (ծառայություններ) կատարելու (մատուցելու), արտադրական գործընթացներին ներկայացվող պահանջներին համապատասխան, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արդյունքների որակին և անվտանգությանը ներկայացվող սահմանված պահանջներին համապատասխան որոշակի ապրանքների մատակարարում իրականացնելուն ունակ Գազպրոմ Խմբի կողմից կատարվող գնումների հնարավոր մասնակիցների որոշման բաց գործընթաց, որի արդյունքում ձևավորվում է Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստր ըստ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների տեսակների:

1.2.45. **Գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանում՝** «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում, որը ստեղծված է գնումների նախապատրաստման և անցկացման գործառույթների իրականացման համար, գնումների կազմակերպման և անցկացման հետ կապված այլ գործառույթների իրականացման համար, ինչպես նաև այն դեպքերում, եթե նման կառուցվածքային ստորաբաժանում ձևավորված չէ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում կամ իրավասու անձ, ով պատասխանատու է գնումների կազմակերպման և անցկացման, գնումների կազմակերպման և կատարման հետ կապված այլ գործառույթների իրականացման համար:

1.2.46. **Պատվիրատուի կայք՝** տեղեկատվական հեռահաղորդակցման Ինտերնետ ցանցում կայք, որտեղ տեղակայվում է Պատվիրատուի գնումների մասին տեղեկատվությունը:

1.2.47. **Մեկնարկային գին՝** ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման նվազագույն գին, որը որոշվում է Կազմակերպչի կողմից սույն Կարգի դրույթներին և մրցակցային գնման փաստաթղթերին համապատասխան՝ նախնական (առավելագույն) գնի համեմատ նվազեցված չափով գնման մասնակիցների կողմից մրցակցային գնման իրականացման ժամանակ գնի վերաբերյալ ավելացման քայլով առաջարկներ ներկայացնելու նպատակով:

1.2.48. **Առևտրային պորտալ՝** էլեկտրոնային հարթակի գործիքային-ծրագրային համալիրի

առանձնացված մաս կամ այլ տեղեկատվական համակարհի կամ Ինտերնետ-հարթակ, որը որոշված է Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից, որն ապահովում է մատակարարների (կապալառուների, կատարողների) կողմից մատակարարվող ապրանքների (կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների) գնացուցակների հրապարակումը (տեղադրումը) և Պատվիրատուի կողմից մատակարարին (կապալառուին, կատարողին) որոշումը:

1.2.49. **Գնման մասնակից**՝ ցանկացած մեկ կամ մի քանի իրավաբանական անձ, որոնք հանդես են գալիս գնման մեկ մասնակցի կողմում՝ անկախ կազմակերպարարական ձևից, սեփականության ձևից, գտնվելու վայրից և կապիտալի ծագման վայրից կամ ցանկացած մեկ կամ մի քանի ֆիզիկական անձինք, որոնք հանդես են գալիս գնման մեկ մասնակցի կողմում, այդ թվում՝ անհատ ձեռներեց կամ մի քանի անհատ ձեռներեցներ, որոնք հանդես են գալիս գնման մեկ մասնակցի կողմում:

1.2.50. **Էլեկտրոնային հարթակ**՝ Ինտերնետ տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցում, որտեղ իրականացվում են էլեկտրոնային եղանակով գնումներ:

1.2.51. **Էլեկտրոնային ստորագրություն**՝ էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն, որը համակցված է այլ էլեկտրոնային եղանակով տեղեկատվությանը (ստորագրությամբ դրոշմվող տեղեկատվությանը) կամ այլ եղանակով կապված է նման տեղեկատվության հետ և որը օգտագործվում է տեղեկատվությունը ստորագրող անձի նույնականացման համար:

Պարզ, ուժեղացված, որակավորված և չորակավորված էլեկտրոնային ստորագրությանը վերաբերող եզրույթներն ու հասկացությունները կիրառվում են էլեկտրոնային ստորագրության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

1.2.52. **Էլեկտրոնային փաստաթուղթ**՝ տեղեկատվություն, որի փոխանակումը Պատվիրատուի, Կազմակերպչի, էլեկտրոնային հարթակի օպերատորի, գնման մասնակիցների միջև իրականացվում է էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային հարթակում նրանց կողմից հավատարմագրում ստանալուց հետո, որը կապված է էլեկտրոնային եղանակով գնման իրականացման հետ և որը ստորագրված է այն անձի էլեկտրոնային ստորագրությամբ, ով իրավունք ունի գործելու համապատասխանաբար Պատվիրատուի, Կազմակերպչի, էլեկտրոնային հարթակի օպերատորի, գնման մասնակցի անունից էլեկտրոնային եղանակով:

1.2.53. **«Գազպրոմ» ՀԲԸ օբյեկտներում օգտագործման թույլատրված և «Գազպրոմ» ՀԲԸ պահանջներին համապատասխանող նյութատեխնիկական ռեսուրսների միասնական ռեեստր (ՆՏՌ միասնական ռեեստր)**՝ «Գազպրոմ» ՀԲԸ կողմից սահմանված կարգով «Գազպրոմ» ՀԲԸ օբյեկտներում կիրառմանը թույլտվության գործընթաց անցած նյութատեխնիկական ռեսուրսների և դրանց արտադրողների մասին համակարգված տեղեկությունների ամբողջություն:

1.3. Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմին

Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմինը «Գազպրոմ» ՀԲԸ կառուցվածքային ստորաբաժանում է, որը ստեղծված է սույն Կարգով սահմանված սկզբունքներին համաձայն Գազպրոմ Խմբի գնման գործունեության ոլորտում քաղաքականության իրականացման համար:

Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմինն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1.3.1. Գազպրոմ Խմբի գնումների պլանավորումը, որի շրջանակներում՝

1.3.1.1. Ձևավորում է և հաստատում Գազպրոմ Խմբի գնումների տարեկան պլանը, դրա կիսամյակային փոփոխություններն ու լրացումները:

1.3.1.2. Սույն Կարգի համաձայն՝ սահմանում է գնման եղանակները:

1.3.1.3. Որոշում է մրցակցային գնման, ինչպես նաև ոչ մրցակցային գնումների

Կազմակերպիչներին «Գազպրոմ» ՀԲԸ և Գազպրոմ Ընկերությունների Խմբի կարիքների համար մարքեթինգային հետազոտությունների իրականացման միջոցով (այսուհետ՝ 1.3 կետի կիրառման նպատակով՝ Գնում):

1.3.1.4. Գնման նախաձեռնողին տալիս է խորհուրդներ կամ ցուցումներ պլանավորվող Գնումների լոտերի ձևավորման վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում լոտերը ձևավորում է ինքնուրույն:

1.3.1.5. Կայացնում է Գազպրոմ Խմբի Ընկերությունների համատեղ գնումների կատարման մասին որոշում:

1.3.2. Պատվիրատուի և Կազմակերպչի համագործակցության կարգի որոշումը, Գազպրոմ Խմբի Գնումների նախապատրաստման, կազմակերպման և կատարման ժամանակ նրանց միջև գործառնությունների բաշխումը:

1.3.3. Նախատրակավորման կազմակերպումը և անցկացումը, Նախատրակավորման արդյունքներով Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստրի կազմումը և վարումը:

1.3.4. Գնումների կազմակերպումը և կատարումը, որոնց շրջանակներում՝

1.3.4.1. Որոշում է Պատվիրատուի (Գնման նախաձեռնողի) կողմից Գնման կազմակերպման և կատարման համար ներկայացվող ելակետային տվյալների ցանկը՝ կախված գնման եղանակից և գնման առարկայից:

1.3.4.2. Իրականացնում է Կոմիտեի (Մարքեթինգային հետազոտությունների Կոմիտեի) կազմի մասին տնօրինչական փաստաթղթի նախապատրաստումը և հաստատումը:

1.3.4.3. Մասնակցում է Գնման կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստմանը: Հաստատում է Գնման մասին փաստաթղթերը, Գնմանը մասնակցության հայտերի գնահատման չափորոշիչները և մեթոդիկան:

1.3.4.4. Իրականացնում է Գնման մասին փաստաթղթերի վերլուծություն՝ նպատակ ունենալով բացառելու մրցակցությունը սահմանափակող պահանջները, ինչպես նաև պարզելու Գնման նախնական (առավելագույն) գնի հիմնավորվածությունը, անհրաժեշտության դեպքում ինքնուրույն ձևավորում է գնման փաստաթղթերում ներառված փաստաթղթերի կազմը:

1.3.4.5. Իրականացնում է սույն Կարգով նախատեսված Գնումների կազմակերպման և կատարման այլ գործառնություններ:

1.3.5. Գազպրոմ Ընկերությունների Խմբի գնման գործունեության նկատմամբ հսկողության իրականացում:

1.3.6. Գազպրոմ Խմբի Ընկերությունների կողմից Դեպարտամենտ ներկայացվող գնումների և ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման արդյունքում կնքված պայմանագրերի մասին տեղեկատվության կազմի, ձևի և տրամադրման կարգի սահմանումը:

1.3.7. Գազպրոմ Խմբի Ընկերությունների գնման գործունեության մեթոդալոգիական ուղեկցումը, այդ թվում՝

1.3.7.1. Մշակում է Գազպրոմ Ընկերությունների Խմբի կողմից Գնումների կատարման ժամանակ կիրառվող և Գնման մասին փաստաթղթերի, գնանշումների հարցումում իրականացնելու մասին հայտարարության մեջ ներառվող փաստաթղթերի տիպային ձևերը, ձևանմուշները և օրինակները:

1.3.7.2. Ձևավորում է Գնումների գործընթացների կատարման ժամանակ օգտագործվող տիպային պայմանագրերի/կոնտրակտների (տիպային պայմանների) շտեմարան:

1.3.7.3. Մշակում է Գազպրոմ Ընկերությունների Խմբի կողմից Գնումների ժամանակ, Գնման

մասին փաստաթղթերում, գնանշումների հարցման հայտարարությունում օգտագործման համար գնահատման տիպային մեթոդիկաներ:

1.3.7.4. Մշակում է գնումների կազմակերպման առանձին հարցերի վերաբերյալ հրամանների, հրահանգների, առաջարկությունների և ընթացակարգերի նախագծեր:

1.3.7.5. Գազապրոմ Խմբի գնման գործունեության մեթոդալոգիական հարցերի վերաբերյալ իրականացնում է համագործակցություն պետական մարմինների և կազմակերպությունների, պետական ձեռնարկությունների և այլ շահագրգիռ անձանց հետ:

1.3.8. Սույն Կարգի կիրառման կարգի և գնման գործունեությունը կարգավորող այլ հարցերի պարզաբանումը «Գազապրոմ» ՀԲԸ ստորաբաժանումների և Գազապրոմ Խմբի Ընկերությունների հայտերով:

1.3.9. Գազապրոմ Խմբի Ընկերությունների գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանումների գործունեության կորդինացում, որի շրջանակներում՝

1.3.9.1. Իրականացնում է Գազապրոմ Խմբի Ընկերությունների գնման գործունեության մոնիթորինգ:

1.3.9.2. Գազապրոմ Խմբի Ընկերություններին տալիս է ցուցումներ գնումների կազմակերպման և կատարման հարցերով:

1.3.9.3. Գազապրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի ղեկավարն իրավունք ունի տալու ցուցումներ պաշտոնի նշանակելու և/կամ պաշտոնից ազատելու՝ Գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանման ղեկավարին (պարտականությունները կատարողին), Գազապրոմ Խմբի Ընկերությունների գնման գործունեության ապահովման համար պատասխանատու մասնագետին (Գազապրոմ Խմբի Ընկերությունում Գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանման բացակայության դեպքում): Նշված անձանց պաշտոնի նշանակումը և/կամ պաշտոնից ազատումն ենթակա է Գազապրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի ղեկավարի հետ նախնական համաձայնեցման:

1.4. Գնման հանձնաժողով, կազմավորման, գործունեության կարգը և իրավասությունները

1.4.1. Գնման հանձնաժողովի կազմը սահմանվում է Կազմակերպչի կողմից: Գնման հանձնաժողովի անդամների թիվը պետք է լինի հինգից ոչ պակաս:

1.4.2. Գնման հանձնաժողովի կազմը ձևավորվում է Կազմակերպչի կողմից (Դեպարտամենտի, գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանման կողմից) Գնման հանձնաժողովի հնարավոր անդամների հաստատված կազմում ներառված անձանց թվից:

1.4.3. Գնման հանձնաժողովի հնարավոր անդամների կազմը «Գազապրոմ» ՀԲԸ-ում ձևավորվում է Դեպարտամենտի կողմից «Գազապրոմ» ՀԲԸ ստորաբաժանումների առաջարկությունների հիման վրա և հաստատվում է «Գազապրոմ» ՀԲԸ Վարչության նախագահի կողմից:

1.4.4. Գնման հանձնաժողովի հնարավոր անդամների կազմը «Գազապրոմ Արմենիա» ՓԲԸ-ում ձևավորվում է Գնումների նախապատրաստման և անցկացման բաժնի կողմից «Գազապրոմ Արմենիա» ՓԲԸ կառուցվածքային ստորաբաժանումների առաջարկությունների հիման վրա, համաձայնեցվում է Դեպարտամենտի հետ և հաստատվում է «Գազապրոմ Արմենիա» ՓԲԸ ղեկավարի կողմից:

1.4.5. Գնման հանձնաժողովի մեջ կարող են մտնել ինչպես Պատվիրատուի (Կազմակերպչի) աշխատողները, այնպես էլ այլ անձինք:

1.4.6. Գնման հանձնաժողովի անդամները, որոնք շահագրգռվածություն ունեն գնման որոշակի արդյունքներում, այդ թվում՝ ով ներկայացրել է գնման (մարքեթինգային հետազոտության) մասնակցության հայտ, ով աշխատում է կամ հանդիսանում է մրցակցային գնման (մարքեթինգային

հետազոտությանը) մասնակցության հայտ ներկայացրած կազմակերպությունների կառավարման մարմինների անդամ, պետք է ներկայացնեն ինքնաբացարկ, ինչի մասին արվում է գրառում արձանագրությունում, և չմասնակցեն տվյալ հարցով քվեարկությանը: Գնման հանձնաժողովի շահագրգիռ անդամների ձայները հաշվի չեն առնվում գնման արդյունքում անցկացվող քվեարկության արդյունքները հաշվարկելիս:

1.4.7. Գնման հանձնաժողովն իր գործունեությունում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն Կարգով, ինչպես նաև «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ներքին իրավական ակտերով:

1.4.8. Գնման հանձնաժողովն իրավունք ունի կայացնելու որոշումներ, եթե դրա նիստին ներկա են անդամների կեսից ոչ պակաս անձինք: Գնման հանձնաժողովը որոշումներ է ընդունում նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

1.4.9. Հանձնաժողովն ըստ գնման արդյունքերի որոշում է ընդունում մատակարարի (կապալառուի, կատարողի) որոշման մասին հիմնվելով գնման մասնակիցների հանդեպ արդար, հավասար և օբյեկտիվ վերաբերմունքի սկզբունքների վրա՝ հաշվի առնելով հայտերի գնահատման և համադրման չափանիշները, որոնք նշված են մրցակցային գնման փաստաթղթերում (գնանշումների հարցման կատարման հայտարարությունում): Լավագույնն է ճանաչվում այն հայտը, որը մյուսների համեմատ հավաքել է առավելագույն միավորներ մրցակցային գնման մասին փաստաթղթերում, գնանշումների հարցման մասին հայտարարությունում ներառված հայտերի գնահատման մեթոդիկայի համաձայն):

1.4.10. Մարքեթինգային հետազոտությունների կոմիտեն մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ուսումնասիրման, գնահատման և համադրության արդյունքների հիման վրա որոշում է կայացնում 15 բաժնի և ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

1.4.11. Գնման հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որը պետք է ստորագրված լինի նիստին ներկա Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

1.4.12. Գնման հանձնաժողովի որոշումները պարտադիր են Պատվիրատուի համար:

1.4.13. Գնման հանձնաժողովի նիստերի նախապատրաստումն իրականացնում է Կազմակերպիչը:

1.5. Գնման մասնակիցներին ներկայացվող պահանջներ

1.5.1. Գնումների կատարման ժամանակ մասնակիցների նկատմամբ սահմանվում են հետևյալ պարտադիր պահանջները՝

1.5.1.1. Գնման մասնակցի համապատասխանությունը իրավունակության և գործունակության պահանջներին:

1.5.1.2 Գնման մասնակիցների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն գնման առարկա հանդիսցող ապրանքների մատակարարում, աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում իրականացնող անձանց ներկայացվող պահանջներին:

1.5.1.3. Գնման մասնակից իրավաբանական անձի լուծարման գործընթացի բացակայություն և գնման մասնակից իրավաբանական անձը, անհատ ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելու և սնանկության վարույթ սկսելու մասին դատարանի որոշման բացակայություն:

1.5.1.4. Վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված կարգով գնման մասնակցի գործունեությունը դադարեցված չլինելը պայմանագրի կնքման օրվա դրությամբ:

1.5.2. Գնումների կատարման ժամանակ գնումների մասնակիցներին կարող են ներկայացվել նաև հետևյալ պահանջները՝

1.5.2.1. Գնման մասնակիցների մոտ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքների առկայությունը, եթե պայմանագրի կատարման կապակցությամբ Պատվիրատուն ձեռք է բերում իրավունքներ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում է գնում գրականության կամ արվեստի ստեղծագործությունների (բացառությամբ էՀՄ ծրագրերի, տվյալների բազաների) ստեղծման, ազգային ֆիլմի վարձույթի կամ ցուցադրման գնման դեպքերի:

1.5.2.2. Գնման մասնակիցների և նրանց համակատարողների (ենթակապալառուների) մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գործադիր իշխանության մարմնի կողմից վարվող անբարեխիղճ մատակարարների ռեեստրում բացակայությունը:

1.5.2.3. Գնման մասնակիցների մոտ համապատասխան արտադրական հզորությունների, տեխնոլոգիական սարքավորումների, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների, գնման առարկա հանդիսացող ապրանքների արտադրության (մատակարարման), աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման համար մասնագիտական ունակությունների առկայությունը, ինչպես նաև դրական վարկանիշի, սերտիֆիկատների և այլ տեղեկությունների առկայությունը, որոնք հավաստում են Պատվիրատուի ստանդարտներին համապատասխանությունը:

1.5.2.4. Մրցակցային գնման մասնակցության հայտ ներկայացնելու վերջնաժամկետի ավարտի օրվան նախորդող վերջին երեք տարիների ընթացքում գնման մասնակցի կողմից գնման առարկա հանդիսացող ապրանքների մատակարարմանը, աշխատանքների կատարմանը (ծառայությունների մատուցմանը) համարժեք ապրանքների մատակարարում, աշխատանքների կատարում (ծառայությունների մատուցում) իրականացնելը:

1.5.3. Գնման ժամանակ գնման մասնակիցներին կարող են ներկայացվել սույն Կարգին չհակասող այլ պահանջներ, որոնք այդ թվում ուղղված են պայմանագրի չկատարման ռիսկի բացառմանը, ինչպես նաև մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պարտավորության պատշաճ կատարման երաշխիքների ապահովմանը:

1.5.4. Գնման մասնակիցների նկատմամբ վերոնշյալ պահանջները կարող են նաև սույն Կարգին համապատասխան սահմանվել մրցակցային գնման մասին փաստաթղթերում, գնանշման հարցման մասին հայտարարությունում, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերում նրանց համակատարողների (ենթակապալառուների) նկատմամբ, ովքեր ներգրավվում են գնման մասնակցի կողմից պայմանագրի կատարման համար:

1.5.5. 1.5.2. և 1.5.3. կետերում նշված պահանջները կարող են սահմանվել մրցակցային գնման մասնակիցների նկատմամբ որպես միասնական նախաորակավորման պահանջներ այն դեպքում, երբ մրցակցային գնման մասին փաստաթղթերում նախատեսված է նախաորակավորման անցկացում:

1.5.6. Գնման մասնակիցներին, ինչպես նաև նրանց կողմից պայմանագրի կատարման համար ներգրավվող համակատարողներին (ենթակապալառուներին) ներկայացվող պահանջները ներկայացվում են հավասարապես գնման բոլոր մասնակիցներին և համակատարողներին (ենթակապալառուներին) և պետք է նշված լինեն մրցակցային գնման մասին փաստաթղթերում, գնանշման հարցման կատարման մասին հայտարարությունում, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերում: Գնման մասնակիցներին և համակատարողներին (ենթակապալառուներին)

բացի մրցակցային գնման մասին փաստաթղթերում, գնանշման հարցման կատարման մասին հայտարարությունում, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերում նշվածներից այլ պահանջների ներկայացումը չի թույլատրվում:

1.5.7. Կազմակերպիչն իրավունք ունի գնման ցանկացած փուլում ստուգելու գնման մասնակիցների և նրանց կողմից ներգրավվող համակատարողներին (ենթակապալառուների) համապատասխանությունը, այդ թվում՝ նրանց կողմից հայտարարված արտադրական հզորությունների, տեխնոլոգիական սարքավորումների և աշխատանքային ռեսուրսների համապատասխանությունը մրցակցային գնման մասին փաստաթղթերում, գնանշման հարցման մասին հայտարարությունում, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերում նշված պահանջներին:

1.5.8. Գնման մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ հավաստի տեղեկատվության բացահայտման դեպքում, գնման մասնակցի, ինչպես նաև նրա կողմից պայմանագրի կատարման համար ներգրավվող համակատարողների (ենթակապալառուների)՝ մրցակցային գնման մասին փաստաթղթերում, գնանշման հարցման կատարման մասին հայտարարությունում, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերում գնման մասնակիցներին, համակատարողներին (ենթակապալառուներին) ներկայացված պահանջներին անհամապատասխանության, մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության անհամապատասխանությունը մրցությանին գնման մասին փաստաթղթերում, գնանշման հարցման կատարման մասին հայտարարությունում, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերում մատակարարվող ապրանքներին, կատարվող աշխատանքին, մատուցվող ծառայություններին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության բացահայտման դեպքում Կազմակերպիչը համապատասխան տեղեկությունները հաղորդում է Գնման հանձնաժողովին, և Գնման հանձնաժողովն իրավունք ունի մերժելու գնման նման մասնակցի հայտը գնման ցանկացած փուլում, ավարտելու մրցակցային գնման/մարքեթինգային հետազոտության գործընթացն առանց պայմանագրի կնքելու, ինչպես նաև վերանայելու մրցակցային գնման/մարքեթինգային հետազոտության արդյունքները սույն Կարգով նախատեսված դեպքերում:

1.5.9. Գնման կատարման ժամանակ Պատվիրատում (Կազմակերպիչը)՝ մրցակցային գնման մասին փաստաթղթերում, գնանշման հարցման կատարման մասին հայտարարությունում, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերում նախատեսում է գնման մասնակցի կողմից սեփականատերերի շղթայի, ներառյալ բենեֆիցիարների (այդ թվում՝ վերջնական) մասին տեղեկատվություն՝ համապատասխան փաստաթղթերի հաստատմամբ, ներկայացնելու անհրաժեշտության մասին պայման, ապահովում է պայմանագրի նախագծում պայմանի ներառում, ըստ որի կոնտրագենտը պարտավոր է Պատվիրատուին տրամադրել սեփականատերերի շղթայում փոփոխությունների, ներառյալ՝ բենեֆիցիարների (այդ թվում՝ վերջնական) և (կամ) կոնտրագենտի գործադիր մարմիններում փոփոխությունների մասին տեղեկատվություն նման փոփոխություններից հետո 3 (երեք) օրվա ընթացքում՝ համապատասխան փաստաթղթերի կցմամբ, ինչպես նաև այնպիսի պայմանների, որոնց համապատասխան՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի հրաժարվել պայմանագրի կատարումից այն դեպքում, երբ կոնտրագենտը չի կատարում սույն մասով նախատեսված իր պարտավորությունը:

1.6. Գնման առարկայի նկարագրությանը ներկայացվող պահանջներ

1.6.1. Գնման առարկայի նկարագրությունում նշվում են գնման առարկայի գործառնությանին բնութագրերը (սպառողական հատկությունները), տեխնիկական, որակական բնութագրերը, շահագործման բնութագրերը (անհրաժեշտության դեպքում), ինչպես նաև անվտանգությանը,

աշխատանքի արդյունքներին Պատվիրատուի կողմից սահմանված և տեխնիկական կարգավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համապատասխան տեխնիկական կանոնակարգերով, ստանդարտացման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ընդունված ստանդարտացման ազգային համակարգում մշակվող և կիրառվող փաստաթղթերով նախատեսված պահանջները:

1.6.2. Գնման առարկայի նկարագրությունը կարող է փոխարինվել հղմամբ պետական, ազգային, միջպետական և միջազգային ստանդարտներին, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերին, «Գազպրոմ» ՀԲԸ ստանդարտներին և «Գազպրոմ» ՀԲԸ տեխնիկական կարգավորման համակարգի այլ փաստաթղթերին հղմամբ, որոնք ընդունվել են ստանդարտացման մասին օրենսդրությանը համապատասխան, առանց նման փաստաթղթերի բովանդակության բացահայտման պայմանով, որ տվյալ փաստաթղթերը հասանելի են կամ ազատ տրամադրվում են գնման մասնակիցներին և թույլ են տալիս որոշելու ապրանքի, աշխատանքի կամ ծառայության մրցակցային չափանիշները:

1.6.3. Պատվիրատուն կարող է սահմանել այլ պահանջներ, որոնք դուրս են 1.6.1. կետով սահմանված պահանջների շրջանակից, պայմանով, որ մրցակցային գնման մասին փաստաթղթերում ամրագրված է այլ պահանջների օգտագործման հիմնավորումը՝ կապված մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայությունների համապատասխանությունը Պատվիրատուի պահանջմունքներին որոշելու հետ:

1.6.4. Մրցակցային գնման առարկայի նկարագրության մեջ չպետք է ներառվեն պահանջներ կամ նշումներ ապրանքային նշանների, սպասարկման նշանների, ֆիրմային անվանումների, արտոնագրերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքի ծագման երկրի վերաբերյալ, ապրանքների, տեղեկատվության, աշխատանքների, ծառայությունների նկատմամբ պահանջներ պայմանով, որ նման պահանջները հանգեցնում են գնման մասնակիցների շրջանակի անհիմն կրճատում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա չէ այլ եղանակ, որը ապահովում է գնման առարկայի նշված բնութագրիչների առավել հստակ նկարագրություն:

1.6.5. Մրցակցային գնման առարկայի նկարագրության մեջ ապրանքային նշանի նշում օգտագործելու դեպքում անհրաժեշտ է օգտագործել «կամ համարժեք» արտահայտությունը, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

1.6.5.1. Առկա է այլ ապրանքային նշաններով մակնիշմամբ ապրանքների անհամատեղելիություն և անհրաժեշտ է ապահովել նման ապրանքների փոխգործողություն պատվիրատուի կողմից օգտագործվող ապրանքների հետ:

1.6.5.2. Պատվիրատուի կողմից օգտագործվող մեքենաների ու սարքավորումների պահեստամասերի և սպառվող նյութերի գնումներ՝ նշված մեքենաների և սարքավորումների տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

1.6.5.3. Պետական կամ համայնքային պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ապրանքների գնումներ:

1.6.5.4. Որոշակի ապրանքային նշանների, սպասարկման նշանների, արտոնագրերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքի ծագման վայրի, ապրանքի արտադրողի նշումով գնումների, եթե դա նախատեսված է ՀՀ միջազգային պայմանագրերի դրույթներով՝ նպատակ ունենալով ապահովել այդ իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց, հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորության կատարումը:

1.6.6. Մրցակցային գնման կատարման ժամանակ փաստաթղթերի պայմաններով կարող է նախատեսված լինել արգելք կամ սահմանափակում այնպիսի ապրանքների համար, որոնց ծագման

երկիրը արտասահմանյան պետությունն է կամ արտասահմանյան պետությունների խումբը, աշխատանքների, ծառայությունների համար, համապատասխանաբար կատարվող, մատուցվող օտարերկրյա անձանց կողմից այն դեպքում, եթե տվյալ արգելքները և սահմանափակումները նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.7. Պահանջներ գնումների տեղեկատվական ապահովվածության նկատմամբ

1.7.1. Սույն Կարգը, նշված Կարգում կատարվող փոփոխությունները, սույն Կարգին միանալու որոշումները, սույն Կարգի փոփոխություններին միանալու որոշումները պարտադիր ենթակա են հրապարակման տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան դրանց հաստատումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

1.7.2. Պատվիրատուն տեղեկատվական համակարգում տեղադրում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման նախագիծը (այսուհետ՝ գնումների նախագիծ) ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նման նախագծի ձևավորման կարգին, տեղեկատվական համակարգում տեղադրելու կարգին և ժամկետներին, նման նախագծի ձևին ներկայացվող պահանջներին համապատասխան:

1.7.3. Գնման իրականացման ժամանակ, բացառությամբ միակ մատակարարից (կապալառուից, կատարողից) գնման և փակ եղանակով իրականացվող մրցակցային գնումից, տեղեկատվական համակարգում տեղադրվում է գնման մասին տեղեկատվություն, այդ թվում՝ մրցակցային գնման մասին հայտարարություն, գնման մասին փաստաթղթեր, բացառությամբ գնանշման հարցման, պայմանագրի նախագիծը, որը հանդիսանում է մրցակցային գնման մասին հայտարարության և մրցակցային գնման մասին փաստաթղթերի անբաժանելի մասը, այդ հայտարարությունում և փաստաթղթերում կատարված փոփոխությունները, այդ փաստաթղթերի պարզաբանումները, գնման ընթացքում կազմվող արձանագրությունները, մրցակցային գնման արդյունքներով կազմված արձանագրությունը (այսուհետ՝ ամփոփիչ արձանագրություն), ինչպես նաև այլ տեղեկատվություն, որի տեղադրումը տեղեկատվական համակարգում նախատեսված է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ ՀԾԿՀ առ 19.08.2020թ. N 273 որոշմամբ (փոփոխություններով հաստատված ՀՀ ՀԾԿՀ 06 նոյեմբերի 2024թ. N 360-Ա որոշմամբ) և սույն Կարգով:

Եթե պայմանագրի կնքման կամ կատարման ժամանակ փոփոխվում են գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների քանակը, ծավալը, գինը կամ պայմանագրի կատարման ժամկետները՝ համեմատած ամփոփիչ արձանագրությունում նշվածների հետ, ոչ ուշ, քան պայմանագրում փոփոխությունների ներառման օրվանից տաս օրվա ընթացքում տեղեկատվական համակարգում տեղադրվում է պայմանագրի փոփոխությունների մասին տեղեկատվությունը՝ փոփոխված պայմանների նշմամբ:

Միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնման, ինչպես նաև այնպիսի գնման, որի մասին տեղեկատվությունը Պատվիրատուն իրավունք ունի չտեղադրել տեղեկատվական համակարգում, այդպիսի գնման վերաբերյալ տեղեկատվությունը Պատվիրատուն կարող է տեղադրել տեղեկատվական համակարգում այն դեպքում, եթե նման տեղեկատվության տեղադրումը նախատեսված է սույն Կարգով:

1.7.4. Փաստաթղթերի և տեղեկատվության տեղադրումը տեղեկատվական համակարգում ապահովում է Պատվիրատուն (Կազմակերպիչը):

1.7.5. Պատվիրատուն իրավունք ունի չտեղադրելու տեղեկատվական համակարգում հետևյալ տեղեկությունները՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման մասին, որոնց արժեքը չի գերազանցում 12.0 մլն. ՀՀ դրամը (առանց ԱԱՀ), եթե Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ, ներդրումներում (ներառյալ դեպոզիտային ներդրումները) կազմակերպությունների դրամական միջոցների ներգրավման ծառայությունների գնման, վարկերի և փոխառությունների ստացման, դրամական միջոցների և այլ գույքի հավատարմագրային կառավարման, բանկային երաշխիքների և երաշխավորությունների տրամադրման ծառայությունների գնման, դրամական եղանակով պարտավորությունների կատարում նախատեսող, հաշիվների, ներառյալ ակրեդիտիվները, բացման և վարման ծառայությունների, բրոքերային ծառայությունների, ավանդապահների ծառայությունների գնման մասին, պետական կամ համայնքային գույքի առուվաճառքի, վարձակալության (ենթավարձակալության) պայմանագրի կնքման և կատարման հետ կապված գնման մասին, այլ պայմանագրի, որը նախատեսում է անշարժ գույքի նկատմամբ տիրապետման և (կամ) օգտագործման իրավունքների փոխանցում:

1.7.6. Կազմակերպիչը (Պատվիրատուն) իրավունք ունի լրացուցիչ տեղադրելու փաստաթղթեր, տեղեկատվություն, որոնք ենթակա են տեղադրման տեղեկատվական համակարգում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ ՀԾԿՀ 19.08.2020թ. N273 որոշման (փոփոխություններով հաստատված ՀՀ ՀԾԿՀ 06 նոյեմբերի 2024թ. N 360-Ա որոշմամբ) համաձայն, ինչպես նաև սույն Կարգի համաձայն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կայքում: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կայքում փաստաթղթերի տեղադրումն ապահովում է Կազմակերպիչը:

1.7.7. Մրցակցային գնման մասին հայտարարությունում, մրցակցային գնման մասին փաստաթղթերում, մրցակցային գնման մասին փաստաթղթերի պարզաբանումներում կատարվող փոփոխությունները Կազմակերպչի (Պատվիրատուի) կողմից տեղադրվում են տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան նշված փոփոխությունների կատարման մասին որոշման կայացման, նշված պարզաբանումների տրման օրվանից երեք օրվա ընթացքում:

1.7.8. Գնման ընթացքում կազմվող արձանագրությունները Կազմակերպչի (Պատվիրատուի) կողմից տեղադրվում են տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան նման արձանագրությունների ստորագրման օրվանից երեք օր հետո: Ընդ որում, տեղեկատվական համակարգում տեղադրվող արձանագրությունում թույլատրվում է չնշել արձանագրությունը ստորագրած անձանց մասին տեղեկությունները, Գնման հանձնաժողովի կազմի մասին տեղեկությունները և Գնման հանձնաժողովի անդամների անհատական քվեարկության մասին տեղեկությունները:

1.7.9. Պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ թվում՝ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման արդյունքներով Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի, որոնց արժեքը չի գերազանցում սույն Կարգի 1.7.5. կետով նախատեսված չափերը, Պատվիրատուն տեղեկատվությունը և փաստաթղթերը մուտքագրում է պայմանագրերի ռեեստր:

1.7.10. Տեղեկատվական համակարգի վարումն այդպիսի իրավասություն ունեցող գործադիր իշխանության մարմնի կողմից վարելու դեպքում, եթե առաջանում են տեխնիկական կամ այլ թերություններ, որոնք արգելափակում են տեղեկատվական համակարգին հասանելիությունն ավելի քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սույն Կարգի համաձայն տեղեկատվական համակարգում տեղադրման ենթակա տեղեկատվությունը Պատվիրատուն տեղադրում է Պատվիրատուի կայքում՝ հետագայում տեղեկատվական համակարգին հասանելիությունն ավելի քան մեկ աշխատանքային օրով արգելափակած տեխնիկական կամ այլ թերությունների վերացումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն տեղադրելով տեղեկատվական համակարգում, և նման տեղեկատվությունը համարվում է սահմանված կարգով տեղադրված:

1.7.11. Սույն Կարգի համաձայն տեղեկատվական համակարգում, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

կայքում տեղադրված գնման մասին տեղեկատվությունը, Կարգը, գնումների նախագծերը պետք է ծանոթացման համար հասանելի լինեն առանց վճարի գանձման:

1.7.12. Կետը հանված է:

1.7.13. Ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման և դրանց արդյունքներով կնքված պայմանագրերի մասին տեղեկատվությունը Գազպրոմ Խմբի Ընկերությունների կողմից ներկայացվում է Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմին: Ներկայացվող տեղեկատվության կազմը, ձևը և ներկայացման կարգը սահմանվում է Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից:

2. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

2.1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների պլանավորումն իրականացվում է օրացուցային տարվա համար «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների տարեկան նախագիծը, ինչպես նաև Պատվիրատուների գնումների նախագծերը կազմելով: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների տարեկան նախագիծը հիմք է գնումների իրականացման համար: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների տարեկան նախագծում ներառված որոշակի Պատվիրատուի մրցակցային և ոչ մրցակցային գնումների ցանկը Պատվիրատուի կողմից ներառվում է Պատվիրատուի գնումների նախագծում:

2.2. Գազպրոմ Խմբի գնումների տարեկան նախագիծը հերթական օրացուցային տարվա համար ձևավորվում է Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման կարիքների հիման վրա:

2.3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ տարեկան նախագծում նշվում է գնման առարկայի, լոտերի անվանումը, գնման եղանակները և գնումն իրականացնելու ժամկետները, Պատվիրատուի և Կազմակերպչի անվանումները, գնման առարկայի նախնական (առավելագույն) գնի մասին տեղեկություններ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

2.4. Անհրաժեշտության դեպքում, այդ թվում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ արտադրական գործունեությունն որոշող ծրագրերում և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ բյուջեում փոփոխությունների ներառման կապակցությամբ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների տարեկան նախագծում կատարվում են համապատասխան շտկումներ, լրացումներ, փոփոխություններ, որոնք հաստատվում են Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից: Գնման հայտարարության ժամանակ պայմանագրի առարկայի հստակեցման դեպքում նախագծի շտկում չի պահանջվում:

2.5. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների նախագծերը ձևավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նման նախագծերի ձևին և ձևավորման կարգին սահմանված պահանջներին համապատասխան, ենթակա են տեղադրման գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

2.6. Համատեղ գնումների կատարման մասին որոշումն ընդունում է Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմինը:

2.7. Գազպրոմ Խմբում գնումների նախագծումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով ԷԳԱՀ օգտագործմամբ Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի սահմանած ընթացակարգերով:

3. ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ: ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐ

3.1. Գազպրոմ Խմբի գնումների կատարման ընթացքում մրցակցության անհրաժեշտ մակարդակի ապահովման նպատակով Դեպարտամենտը (Նախատրակավորման Կազմակերպիչը) իրականացնում է բաց Նախատրակավորում:

3.2. Նախատրակավորման խնդիրն է ձևավորել Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստրը, ովքեր ունակ են կատարել որոշակի տեսակի աշխատանքներ, մատուցել որոշակի տեսակի ծառայություններ, իրականացնել որոշակի ապրանքների մատակարարում՝ արտադրական գործընթացների նկատմամբ սահմանված պահանջներին, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակին և անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխան, հետագայում Գազպրոմ Խմբի հայտարարվող գնումներում հնարավոր մասնակիցներին, ում որակավորումը համապատասխանում է գնման որոշակի առարկայի համար պահանջվող մակարդակին, մասնակցության հրավեր ուղարկելու համար:

3.3. Նախատրակավորումը հիմնվում է հետևյալ հիմնական սկզբունքների կիրառման վրա՝
բաց, թափանցիկ, խտրականությունների բացակայություն,
նախատրակավորման անցկացման մասին տեղեկատվության հանրամատչելիություն
անսահմանափակ թվով անձանց մասնակցությունն ապահովելու համար,
մասնակցության կամավորություն,
անհատույց լինելը (Նախատրակավորումն անց է կացվում դրա մասնակիցների համար
անհատույց (անվճար) հիմունքներով):

3.4. Նախատրակավորման անցկացման կարգը և պայմանները, Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստրում ներառելու չափանիշներն որոշվում են Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից, տեղադրվում են Ինտերնետ տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցում, այդ թվում՝ «Գազպրոմ» ՀԲԸ կայքում:

3.5. Նախատրակավորման անցկացման ժամանակ իրականացվում է՝
Նախատրակավորման անցկացման մասին տեղեկատվությունը տեղադրվում է Ինտերնետ տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցում, այդ թվում՝ «Գազպրոմ» ՀԲԸ կայքում,
Նախատրակավորմանը մասնակցության Նախատրակավորման մասնակցի հայտի և այդ հայտի կազմում նրա կողմից ներկայացված տեղեկատվության քննարկումը և գնահատումը,
«Գազպրոմ» ՀԲԸ Կորպորատիվ անվտանգության ծառայության կողմից իրականացվող նախատրակավորման մասնակցի իրավունակության, վճարունակության (ֆինանսական դրության) և գործարար համբավի գնահատում, հայտի փորձագիտական գնահատում,

Նախատրակավորման մասնակցի կողմից մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների որակի մասին տեղեկատվության հավաքագրում, Նախատրակավորման մասնակցի տեխնիկական աուդիտի իրականացում 3.9 և 3.10 կետերին համապատասխան (անհրաժեշտության դեպքում²):

3.6. Նախատրակավորում անցկացնելիս նախատրակավորման մասնակիցների հանդեպ սահմանվում են հետևյալ հիմնական պահանջները Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստր ընդգրկելու համար՝

1.5.1. կետով սահմանված գնման մասնակիցներին ներկայացվող պարտադիր պահանջներին համապատասխանություն,

Վճարունակություն,

Պատշաճ որակի որոշակի տեսակի ապրանքների արտադրության (մատակարարման), որոշակի տեսակի աշխատանքների կատարման, որոշակի տեսակի ծառայությունների մատուցման համար փորձի, որակավորման, արտադրական հզորությունների և որակյալ աշխատանքային

ռեսուրսների առկայությունը, Բացասական գործարար համբավի բացակայությունը:

3.7. Նախաորակավորման պաշտոնական լեզուն հանդիսանում է ռուսերենը: Նախաորակավորմանը մասնակցության համար ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է ձևակերպված լինեն ռուսերեն:

3.8. Նախաորակավորման մասնակիցների՝ Նախաորակավորմանը մասնակցության հայտերի ուսումնասիրության և գնահատման ընթացքում Նախաորակավորման Կազմակերպիչն իրավունք ունի պահանջելու մասնակիցների կողմից ներկայացված տեղեկությունների և փաստաթղթերի պարզաբանում:

3.9. Նախաորակավորման կազմակերպիչը, Նախաորակավորման մասնակցի համաձայնությամբ, իրավունք ունի ստուգելու Նախաորակավորմանը մասնակցելու հայտում մասնակցի կողմից նշված տեղեկությունների համապատասխանությունը փաստացի տվյալներին Նախաորակավորման մասնակցի արտադրական գործունեության վայր մեկնելով (տեխնիկական աուդիտ):

3.10. Նախաորակավորման մասնակցի տեխնիկական աուդիտն իրականացնելու նպատակով Նախաորակավորման Կազմակերպիչը ստեղծում է հանձնաժողով կամ աշխատանքային խումբ և որոշում է տեխնիկական աուդիտի իրականացման կարգը:

Նախաորակավորման մասնակիցները պարտավոր են աջակցություն ցուցաբերել Նախաորակավորման Կազմակերպչի հանձնաժողովին (աշխատանքային խմբին) տեխնիկական աուդիտ իրականացնելու մեջ այդ թվում՝

Կատարվող տեխնիկական աուդիտի հարցերով տրամադրել հավաստի և օպերատիվ տեղեկատվություն,

² Որոշվում է Նախաորակավորման Կազմակերպչի կողմից:

Ապահովել հասանելիությունը տեխնիկական աուդիտի օբյեկտներին, այդ թվում՝ հասանելիությունը տարածք, շինություններ, շենքեր և տեխնիկական օբյեկտների այլ օբյեկտներ,

Անհրաժեշտության դեպքում տրամադրել տարածքներ, կապի միջոցներ, կազմտեխնիկա, տրանսպորտ և այլն հանձնաժողովի (աշխատանքային խմբի) աշխատանքների համար:

Տեխնիկական աուդիտի արդյունքներով հանձնաժողովի (աշխատանքային խմբի) կողմից կարող է ձևակերպվել տեխնիկական աուդիտի անցկացման ակտ:

3.11. Նախաորակավորման մասնակցության հայտերի ուսումնասիրության և գնահատման, Նախաորակավորման մասնակցի գնահատման և տեխնիկական աուդիտի իրականացման (անհրաժեշտության դեպքում) համար Նախաորակավորման Կազմակերպիչը սահմանված կարգով կարող է ներգրավել խորհրդատվական, գիտահետազոտական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև առանձին մասնագետներ և փորձագետներ, ստեղծվել աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ:

3.12. Նախաորակավորման մասնակցության հայտերի ուսումնասիրության և գնահատման և Նախաորակավորման մասնակցի մոտ անցկացված տեխնիկական աուդիտի (այն անցկացվելու դեպքում) արդյունքներով Նախաորակավորման Կազմակերպիչը որոշում է կայացնում Նախաորակավորման մասնակցին ներառելու կամ չներառելու Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստր ըստ որոշակի տեսակի մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների:

3.13. Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստրում ներառված Նախաորակավորման մասնակիցը Նախաորակավորման Կազմակերպչին է ուղարկում արդիականացված փաստաթղթերը և տեղեկությունները դրանց փոփոխման դեպքում:

Նախաորակավորման Կազմակերպիչն իրականացնում է Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստր ներառված Նախաորակավորման մասնակիցների՝ Նախաորակավորման մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխանության մոնիթորինգ:

Եթե Նախաորակավորման Կազմակերպիչը բացահայտում է, որ Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստրում ներառված Նախաորակավորման մասնակիցը տրամադրել է ոչ հավաստի տեղեկություններ կամ Նախաորակավորման Կազմակերպիչը ստանում է տեղեկություններ, որոնք վկայում են Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստրում ներառված Նախաորակավորման մասնակցի բացասական գործարար համբավի կամ նրա իրավունակության փոփոխության մասին, Նախաորակավորման Կազմակերպիչն իրավունք ունի հանել նման մասնակցին նշված ռեեստրից:

3.14. Նախաորակավորման Կազմակերպիչը պարտավորություն չի կրում Նախաորակավորման մասնակիցների առջև հետագա գնումների կատարման համար և իրավունք ունի հրաժարվելու Նախաորակավորում անցկացնելուց դրա ցանկացած փուլում՝ չկրելով որևէ նյութական պատասխանատվություն մասնակիցների առջև:

3.15. Նախաորակավորման մասնակիցն անձամբ է կրում Նախաորակավորման հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում՝ Նախաորակավորման հայտի նախապատրաստման և ներկայացման, իսկ Նախաորակավորման Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ Նախաորակավորման ընթացքից և արդյունքներից:

3.16. Գնման մասնակցի բացակայությունը Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստրում (այդ թվում՝ նրա հանումը ռեեստրից) հիմք չէ գնմանը մասնակցելու նրա հայտի մերժման համար, եթե նման մասնակիցը հայտը ներկայացրել է ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերով, գնանշումների հարցման հայտարարությամբ, մրցակցային գնման մասին փաստաթղթերով սահմանված կարգով:

3.17. Կազմակերպիչը (Վարչությունը) մրցակցային գնման մասին հայտարարությունում և փաստաթղթերում/ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերում կարող է Գազպրոմ Խմբի գնումների հնարավոր մասնակիցների ռեեստրում ներառված անձանց համար սահմանել իրավունք չներկայացնելու առանձին փաստաթղթեր ³, որոնք նրանք նախկինում ներկայացրել են Նախաորակավորում անցնելիս, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնց մեջ կատարվել են փոփոխություններ, և փաստաթղթերի, որոնք գնման մասնակցության հայտ ներկայացնելու պահի դրությամբ կորցրել են ուժը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ) ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ) ԳՆԻ ՈՐՈՇՈՒՄ

4.1. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշումն իրականացվում է Պատվիրատուի կամ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ստորաբաժանումների կողմից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ներքին իրավական ակտերի համաձայն:

4.2. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշումն իրականացվում է հետևյալ մեթոդներից մեկի կամ մի քանիսի կիրառմամբ՝

4.2.1. Համադրելի շուկայական գների մեթոդ (շուկայի ուսումնասիրություն)

4.2.2. Տեսակարար ցուցանիշների մեթոդ (պարամետրական)

4.2.3. Ծախսային մեթոդ

4.2.4. Սակագնային մեթոդ

4.2.5. Նախագծանախահաշվային մեթոդ

4.2.6. Գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական

աշխատանքների հաշվարկման մեթոդ (ՓԿՏԱ)

4.2.7. Արտաքին ազդակների ազդեցության հաշվառմամբ գնի ձևավորման մեթոդ

4.2.8. Երկարաժամկետ արտադրության մեքենաշինական ոլորտի ապրանքների գնի ձևավորման մեթոդ

4.3. Համադրելի շուկայական գների (շուկայի ուսումնասիրություն) մեթոդը առաջնային է հանդիսանում պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման և հիմնավորման համար: Այլ մեթոդների կիրառումը հնարավոր է սույն բաժնով նախատեսված դեպքերում:

4.4. 4.2.1. - 4.2.8. կետերում նշված մեթոդներից որևէ մեկի կիրառության անհնարինության դեպքում կարող են կիրառվել այլ՝ 4.2.1. -4.2.8. կետերում չնշված մեթոդներ:

4.5. Համադրելի շուկայական գների մեթոդ (շուկայի ուսումնասիրություն)

4.5.1. Համադրելի շուկայական գների (շուկայի ուսումնասիրություն) մեթոդը կայանում է գնման ենթակա ապրանքներին, աշխատանքներին, ծառայություններին նույնական ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, կամ դրանց բացակայության դեպքում՝ համասեռ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շուկայական արժեքների

³ Փաստաթղթերի ցանկը սահմանում է Դեպարտամենտը և տեղադրվում է Ինտերնետ ցանցում «Գազպրոմ» ՀԲԸ կայքում: (այսուհետ՝ գնային տեղեկատվություն) մասին տեղեկատվության հիման վրա պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման մեջ:

4.5.2. Նույնական են ճանաչվում՝

4.5.2.1. Ապրանքները, որոնք ունեն նույնական բնութագրիչ հատկություններ (գործառնական, տեխնիկական, որակական, ինչպես նաև շահագործման բնութագրեր): Ապրանքների նույնականության որոշման ժամանակ կարող են հաշվի առնվել, մասնավորապես՝ ապրանքի ծագման երկիրը և արտադրողը: Ապրանքների արտաքին տեսքում աննշան տարբերությունները կարող են հաշվի չառնվել:

4.5.2.2. Նույնական բնորոշ հիմնական հատկություններ (որակական բնութագրեր) ունեցող, այդ թվում՝ նույնական մեթոդների, տեխնոլոգիաների, մոտեցումների կիրառմամբ իրականացվող, համադրելի որակավորում ունեցող կապալառուների, կատարողների կողմից կատարվող (մատուցվող) աշխատանքները, ծառայությունները:

4.5.3. Միասեռ են ճանաչվում՝

4.5.3.1. Ապրանքները, որոնք չհանդիսանալով նույնական, ունեն նման բնութագրեր և կազմված են նման տարրերից, ինչը թույլ է տալիս դրանց կատարելու նույն գործառնությունները և (կամ) լինելու առևտրային փոխարինելիներ: Ապրանքների միասեռությունն որոշելիս հաշվի է առնվում դրանց որակը, վարկանիշը շուկայում, ծագման երկիրը:

4.5.3.2. Աշխատանքները, ծառայությունները, որոնք, չհանդիսանալով նույնական, ունեն նման բնութագրեր, ինչը թույլ է տալիս նրանց լինելու առևտրային և (կամ) գործառնության փոխարինելի: Աշխատանքների, ծառայությունների միասեռությունն որոշելիս հաշվի է առնվում դրանց որակը, վարկանիշը շուկայում, ինչպես նաև աշխատանքների, ծառայությունների տեսակը, դրանց ծավալը, եզակիությունը և առևտրային փոխարինելիությունը:

4.5.4. Եթե գնման ենթակա ապրանքները (աշխատանքները, ծառայությունները) ներկայացված չեն ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համապատասխան շուկայում և (կամ) նման ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) շուկայական գների մասին տվյալները տեղեկատվության աղբյուրներում բացակայում են, պայմանագրի նախնական (առավելագույն) գինը

որոշվում է միասեռ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գների հիման վրա՝ հետագա շտկմամբ՝ հաշվի առնելով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) բնութագրերի տարբերությունը: Ընդ որում, իրականացվում է տվյալների հավաքագրում պահանջվող ապրանքի կոմպլեկտացիայի մեջ մտնող առանձին տարրերի, պահանջվող աշխատանքի (ծառայության) առանձին տեսակի աշխատանքի (ծառայության) կատարման գների մասին տվյալների հավաքում:

4.5.5. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման համար ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին գնային տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են կիրառվել հետևյալ ընթացակարգերը՝

4.5.5.1. Պատվիրատուի կայքերում և/կամ էլեկտրոնային հարթակներում գնի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին հարցումների տեղադրում և/կամ գնի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին հարցումների ուղղում մատակարարներին (կապալառուներին, կատարողներին), ովքեր ունեն համապատասխան ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) փորձ,

այդ թվում՝ մասնագիտացված Ինտերնետ-հարթակների⁴ հնարավորությունների կիրառմամբ:

4.5.5.2. Հանրամատչելի գնային տեղեկատվության հավաքումը և վերլուծություն, այդ թվում՝ գովազդում, կատալոգներում, ապրանքների նկարագրություններում և այդ թվում՝ քաղաքացիական օրենսդրության համաձայն հրապարակային օֆերտա ճանաչվող անորոշ շրջանակի անձանց ուղղված այլ առաջարկություններում պարունակվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին տեղեկատվությունը,

հայկական և արտասահմանյան բորսաներում գնանշումների մասին տեղեկատվությունը, էլեկտրոնային հարթակներում գնանշումների մասին տեղեկատվությունը, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գների մասին պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալները,

ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գների մասին տեղեկատվություն, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության սուբյեկտների օրենսդրությանը, համայնքային նորմատիվ-իրավական ակտերին համաձայն պարունակվում է իրավասու պետական և համայնքային մարմինների տեղեկության պաշտոնական աղբյուրներում, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ հանրամատչելի հրատարակություններում;

գնահատման օբյեկտների շուկայական արժեքի մասին տեղեկատվությունը, որը որոշվել է Հայաստանի Հանրապետությունում գնահատող գործունեությունը կարգավորող օրենսդրությանը համապատասխան,

տեղեկատվական-գնահատման գործակալությունների տեղեկատվությունը: Ընդ որում, խորհուրդ է տրվում հաշվի առնել այն գործակալությունների տեղեկատվությունը, որը տրամադրված է գների հաշվարկման մեթոդոլոգիայի բացահայտմամբ,

տեղեկատվության այլ աղբյուրներ, այդ թվում՝ շուկայի ուսումնասիրության հանրամատչելի արդյունքները:

4.5.5.3. Գնի վերաբերյալ տեղեկատվությունը փնտրվում է պայմանագրերի ռեեստրում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմանագրերի ռեեստրում: Ընդ որում, հաշվի է առնվում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնի մասին տեղեկատվությունը, որը պարունակվում է այնպիսի պայմանագրերում, որոնք կատարվել են և

որոնցով վերջին 3 (երեք) տարվա ընթացքում տույժեր (տուգանքներ) չեն գանձվել՝ կապված այդ պայմանագրերով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ:

4.5.5.4. Իրականացվում է Պատվիրատուի՝ նախկինում կատարված գործարքների (պայմանագրերի, համաձայնությունների, հաշիվ-ապրանքագրերի) նույնական (միասեռ) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գների հավաքումը և վերլուծությունը:

4.5.5.5. Իրականացվում է մրցակցային գնումների մասնակիցների առաջարկություններում ներկայացված նույնական (միասեռ) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գների հավաքումը և վերլուծությունը:

⁴17.1.9 ենթակետով նախատեսված դեպքում միասնական մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ կնքվող պայմանագրի (գնման առարկայի) գնի որոշումը, Սույն ենթակետին համապատասխան, պատվիրատուն իրավունք ունի իրականացնել հաշվի առնելով էլեկտրոնային հարթակի ֆունկցիոնալության առանձնահատկությունների օգտագործմամբ:

4.5.6. 4.5.5.1. կետով նախատեսված գնի տրամադրման վերաբերյալ հարցումը պարունակում է՝

4.5.6.1. Գնման առարկայի մանրամասն նկարագրությունը, ներառյալ՝ չափման միավորի, ապրանքի (աշխատանքի, ծառայության) նշումը:

4.5.6.2. Մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից առաջարկվող ապրանքի (աշխատանքի, ծառայության) նույնականության կամ միասեռության որոշման համար անհրաժեշտ տվյալների ցանկը:

4.5.6.3. Գնի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու ժամկետները:

4.5.6.4. Տեղեկություն այն մասին, որ գնի տրամադրման վերաբերյալ հարցումը հանդիսանում է տեղեկատվության հավաքման ընթացակարգ և չի հանգեցնում Պատվիրատուի որևէ պարտավորության:

4.5.6.5. Նշում այն մասին, որ գնի տրամադրման մասին հարցման պատասխանից միանշանակ պետք է հասկանալի լինեն ապրանքի (աշխատանքի, ծառայության) միավորի գինը և պայմանագրի ընդհանուր գինը այն պայմաններով, որոնք նշված են գնի տրամադրման մասին հարցման մեջ, առաջարկվող գնի գործողության ժամկետը, նման գնի հաշվարկը՝ նպատակ ունենալով խուսափել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնի միտումնավոր բարձրացումից կամ նվազեցումից:

4.5.7. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման համար չեն օգտագործվում ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասին տեղեկատվությունը, որը՝

4.5.7.1. Տրամադրվել են անբարեխիղճ մատակարարների (կապալառուների, կատարողների) ռեեստրում ներառված անձինք:

4.5.7.2. Ստացվել է անհայտ աղբյուրներից:

4.5.7.3. Պարունակվում է Պատվիրատուի հարցումներին ի պատասխան և Պատվիրատուի կողմից նման փաստաթղթերի բովանդակության համար սահմանված պահանջներին չհամապատասխանող փաստաթղթերում:

4.5.8. Համադրելի շուկայական գների (շուկայի ուսումնասիրության) մեթոդի կիրառման ժամանակ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին ստացված տեղեկատվությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով ապրանքների մատակարարման (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) առևտրային և (կամ) ֆինանսական պայմանները, որոնք համադրելի են նախատեսվող գնման պայմանների հետ:

4.5.9. Ապրանքների մատակարարման (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) առևտրային և (կամ) ֆինանսական պայմանները համարվում են համադրելի, եթե

նման պայմանների միջև տարբերությունները չեն ազդում համապատասխան արդյունքների վրա կամ այդ տարբերությունները կարող են հաշվի առնվել նման պայմանների շտկմամբ:

4.5.10. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի հաշվարկման ժամանակ օգտագործվող գները պետք է համապատասխանեցվեն այն նախատեսվող գնման պայմաններին, որի համար որոշվում է պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գների վերահաշվարկման գործակիցների կամ ինդեքսների միջոցով՝ հաշվի առնելով ապրանքների բնութագրերի, ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) առևտրային և (կամ) ֆինանսական պայմանների տարբերությունները: Հաշվարկներում օգտագործվող նշված գործակիցների ցանկը և նշանակությունը խորհուրդ է տրվում որոշել այդ թվում հիմնվելով 4.5.5. կետի համաձայն ձեռքբերված նույնական (միասեռ) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գների վերլուծության արդյունքների վրա: Նշված գործակիցների օգնությամբ կարող են հաշվի առնվել այդ թվում հետևյալ պայմանները՝

պայմանագրի կատարման ժամկետը,

ապրանքի քանակը, աշխատանքների (ծառայությունների) ծավալը,

պայմանագրով կանխավճարի առկայությունը և չափը,

մատակարարման վայրը,

որակի երաշխիքի ժամկետը և ծավալը,

բազային անվանացուցակի (կոմպլեկտայնության, աշխատանքի, ծառայության կազմի) փոփոխությունը՝ պայմանավորված գնման ընդհանուր ծավալում տարբեր դրվագների (ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) տեսակարար կշռի փոփոխությամբ,

լրացուցիչ անվանացուցակը (կոմպլեկտայնությունը)՝ գնման ընդհանուր ծավալում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) նոր կետերի ավելացում (կամ նախկինում նախատեսվածների բացառում),

գնի վերաբերյալ տեղեկատվության ձևավորման ժամկետը (հաշվի է առնվում 4.5.11. կետում նախատեսված կարգով),

հարկման փոփոխությունը,

աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) մեծ ծավալը,

փոխարժեքի տատանում (ներառվող արտադրանքի գնման համար),

մաքսատուրքերի փոփոխություն:
$$k^{nm} = \left(\frac{100}{100} \left(\frac{100}{i-1} - 1 \right) \times C + 1 \right)^{i-1}$$

4.5.11. Կարգի սույն բաժնի համապատասխան հաշվարկներում կիրառվող նախկին ժամանակաշրջանների գները կարող են բերվել գների առկա մակարդակին՝ կիրառելով գործակիցը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

Որտեղ՝

k^{nm} – ներկա մակարդակին նախկին ժամանակաշրջանների գների վերահաշվարկման գործակիցն է,

δ – տարին, որի պայմաններում որոշված է համադրելի շուկայական գինը,

ρ – տարին, որի ընթացքում կատարվում է գնման առարկայի մատակարարումը,

$\frac{100}{i-1}$ – Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության տվյալների

համաձայն՝ արդյունաբերության այն ոլորտի արտադրանք արտադրողների գնի ինդեքս, որին պատկանում է գնման առարկան, i տարում $i-1$ տարվա հարաբերությամբ (այն արտադրանքի համար, որը կարող է դասվել սպառողական ապրանքների շարքին, որպես $III, P^{opi}/i-1$ կիրառվում է սպառողական գների ինդեքսը),

C - «Գազպրոմ» ՀԲԸ ներքին իրավական ակտերին համաձայն որոշվող գնաճի արագության գույքի գործակիցը (եթե կիրառելի է):

4.5.12. Համադրելի շուկայական գների մեթոդով (շուկայի ուսումնասիրություն) պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման նպատակով խորհուրդ է տրվում օգտագործել ապրանքի (աշխատանքի, ծառայության) ոչ պակաս, քան երեք գին, որոնք առաջարկվում են տարբեր մատակարարների (կապալառուների, կատարողների) կողմից:

4.5.13. Համադրելի շուկայական գների մեթոդով (շուկայի ուսումնասիրություն) պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$HMI = \frac{v}{n} * \sum_{i=1}^n Li,$$

որտեղ՝

HMI - Համադրելի շուկայական գների մեթոդով (շուկայի ուսումնասիրություն) պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինն է,

v - գնվող ապրանքի (աշխատանքի, ծառայության) քանակը (ծավալը),

n - հաշվարկում օգտագործվող նշանակությունների քանակը,

i - գնային տեղեկատվության աղբյուրի համարը,

Li - ապրանքի (աշխատանքի, ծառայության) միավորի գինը, որը աղբյուրում ներկայացված է i համարի տակ, ճշգրտված է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գների վերահաշվարկման գործակիցների (ինդեքսների) հաշվառմամբ՝ հաշվի առնելով ապրանքների բնութագրերի, ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) առևտրային և (կամ) ֆինանսական պայմանները, որոնք նախատեսվում են 4.5.10. կետին համաձայն:

Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) նախնական (առավելագույն) գնի որոշման ժամանակ, որոնց շուկան բարձր մրցակցային է, հաշվարկի մեջ կարող է օգտագործվել միայն մեկ արժեք Li -տարբեր մատակարարների (կապալառուների, կատարողների) կողմից առաջարկված բոլոր նվազագույն արժեքը, և միննույն ժամանակ հավասար կլինի 1-ի (մեկ):

4.5.14. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշումը արտասահմանյան արտադրության արտադրանքի համար իրականացվում է արտասահմանյան արտադրողների, պաշտոնական ներկայացուցչությունների, պաշտոնական դիստրիբյուտորների, արտասահմանյան արտադրողների պաշտոնական դիլերների, համապատասխան դիլերային համաձայնություններով Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքի իրացում իրականացնելու համար լիազորված արտաքին տնտեսական գործունեության մասնակից մատակարարների գործող գների հիման վրա՝ արտադրողներին (մատակարարներին) գրավոր հայտեր ուղարկելու միջոցով:

4.5.15. Արտասահմանյան մատակարարների (կապալառուների, կատարողների) կողմից մատակարարվող ապրանքների (կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների)

պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի հաշվարկը կատարվում է արտաբժույթի փոխարժեքով պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի հաշվարկման ամսաթվին առավելագույն մոտեցված ամսաթվի դրությամբ:

4.5.16. Մերիական արտադրության, մեծաքանակ արտադրության ապրանքների գնման և այնպիսի ապրանքների գնման ժամանակ, որոնք չեն հանդիսանում միայն պատվիրատուին անհրաժեշտ ու բացառապես նրա համար մշակվող և նրա պատվերով արտադրվող (անհատական արտադրության ապրանքներ) հատկություններ, նախնական (առավելագույն) գինը կարող է որոշվել ապրանքի անվանակարգային միավորի համար և կարող է որոշվել պայմանագրի գնի առավելագույն չափը (սահմանաչափ) ապրանքի նման միավորների գնման համար կամ պայմանագրի գնի առավելագույն նշանակությունը (սահմանաչափ), եթե գնման պայմաններով պայմանագրի առարկայի մեջ մտնում է ապրանքի մի քանի անվանակարգային միավորների մատակարարում: Պայմանագրի գնի առավելագույն չափը (սահմանաչափ) հաշվարկի նման եղանակի ժամանակ չի հանդիսանում հաշվարկային մեծություն, որոշվում է պատվիրատուի ֆինանսական հնարավորություններով և սահմանվում է նրա կողմից ինքնուրույն:

Սույն Կարգի նպատակների համար անվանակարգային միավոր եզրույթը նշանակում է ապրանքի միավորի անվանում և դրա որակական, գործառութային և տեխնիկական բնութագրերի նկարագրություն, որոնք թույլ են տալիս այն միանշանակորեն անհատականացնել միատեսակ ապրանքների շարքում: Ապրանքի միավորի գործառութային և/կամ տեխնիկական բնութագրերի հստակեցման համար դրա նկարագրությունում կարող է օգտագործվել կոնկրետ արտադրողի ապրանքային նշանի նշումը որպես «համարժեք»:

Նման ապրանքի անվանակարգային միավորի նախնական (առավելագույն) գինը շուկայում մի քանի արտադրողների առկայության դեպքում, որոնք արտադրում են ապրանքը տարբեր քաշային կամ չափային տարայով (փաթեթավորմամբ), պետք է բերվի չափերի և քաշերի (մետր, կիլոմետր, տոննա, գրամ, հատ և այլն) միասնական նշանակությամբ:

Ապրանքների շուկայում միատեսակ ապրանքների միավորների մի քանի արտադրողների առկայության դեպքում, ովքեր իրենց արտադրանքն առաջարկում են տարբեր գնային սեգմենտներում՝ կախված ապրանքի լրացուցիչ բնութագրերից, երաշխիքային կամ ետերաշխիքային սպասարկման որակից, դրա հարմարավետությունից և այլ սպառողական հատկություններից, ապրանքի անվանակարգային միավորի նախնական (առավելագույն) գնի հաշվարկը կարող է կատարվել հաշվի առնելով ապրանքի շուկայական գնային սեգմենտացիան:

Այդ նպատակով ապրանքի անվանակարգային միավորի արժեքի հաշվարկման և գնման փաստաթղթերում նշման ժամանակ կարող է նախատեսվել գնի գրադացիա ըստ որակի կատեգորիաների և բերվել ապրանքի նկարագրությունը որակի յուրաքանչյուր կատեգորիայի համար կամ նշվել ապրանքային նշանը (մի քանի ապրանքային նշաններ) որպես համարժեք: Տվյալ մոտեցման կիրառման պայմաններում գնման կատարման ժամանակ պետք է նախատեսվի մատակարարի պարտականությունը առաջարկելու ապրանքը յուրաքանչյուր գնային սահմաններում, իսկ ապրանքների մատակարարման պայմանագրում պետք է նախատեսվի պատվիրատուի իրավունքը իրականացնելու ապրանքների ընտրություն ցանկացած կատեգորիայից, ինչպես նաև նման ընտրության մեխանիզմը:

Ապրանքների գնային սեգմենտացիայի հաշվառմամբ համեմատության մեթոդով ապրանքի անվանակարգային միավորի նախնական (առավելագույն) գնի հաշվարկի ժամանակ նման գնի նշանակությունը սահմանվում է առանձին՝ 4.5.13 կետի կանոններով ըստ որակի կատեգորիաների:

4.6. Տեսակարար ցուցանիշների մեթոդ (պարամետրական)

4.6.1. Պայմանագրի (զնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի հաշվարկման տեսակարար ցուցանիշների մեթոդը (պարամետրական) կիրառվում է այն դեպքերում, երբ հնարավոր չէ կիրառել համադրելի շուկայական գների (շուկայի ուսումնասիրության) մեթոդը ապրանքների շուկայական գների բացակայության պատճառով, բայց առկա են միասեռ ապրանքների գների մասին տեղեկություններ:

4.6.2. Տեսակարար ցուցանիշների մեթոդը (պարամետրական) հիմնվում է ապրանքի գնի կախվածությունից դրա հիմնական տեխնիկական ցուցանիշներից (հզորություն, արտադրողականություն, չափեր և այլն):

4.6.3. Ապրանքի մատակարարման պայմանագրի (զնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշումը, գնի մակարդակը, որը որոշվում է տվյալ ապրանքի համար էական հանդիսացող մեկ հիմնական ցուցանիշով (օրինակ՝ հզորություն, արտադրողականություն, քաշ, արագություն, ծավալներ և այլն), կատարվում է «տեսակարար գինը հիմնական ցուցանիշին» հաշվարկի միջոցով:

4.6.4. Տեսակարար ցուցանիշների մեթոդով (պարամետրական) պայմանագրի (զնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի հաշվարկման ժամանակ մտցվում են ուղղումներ կապված ապրանքի տեխնիկական ցուցանիշներից, կոմպլեկտայնությունից, միասեռ ապրանքների մատակարարման ժամկետներից և պահանջվող ապրանքից, գործարքի առևտրային պայմաններից:

4.6.5. Տեսակարար ցուցանիշների մեթոդով (պարամետրական) պայմանագրի (զնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի հաշվարկման ժամանակ հաշվի է առնվում, որ գինն աճում է ավելի դանդաղ, քան ապրանքը որոշող ցուցանիշը: Հաշվարկի համար կիրառվում է գնի արգելակման գործակիցը, որը միշտ փոքր է 1 (մեկից):

4.6.6. Գնի արգելակման գործակիցը, որը հաշվարկվում է հիմնական ցուցանիշի ազդեցության աստիճանն ապրանքի գնի նկատմամբ, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$n = \frac{\ln\left(\frac{I_1}{I_2}\right)}{\ln\left(\frac{X_1}{X_2}\right)}$$

որտեղ՝

n – գնի արգելակման գործակից,

I_1 և I_2 – միասեռ ապրանքների գներ,

X_1 և X_2 – միասեռ ապրանքների հիմնական ցուցանիշի ցուցիչը:

4.6.7. Պայմանագրի (զնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը տեսակարար ցուցանիշների մեթոդով (պարամետրական) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$HMI = I_d^* (X_{HMI} / X_d)^n,$$

որտեղ՝

HMI – տեսակարար ցուցանիշների մեթոդով (պարամետրական) որոշվող պայմանագրի (զնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը,

I_d – նախկինում գնվող ապրանքի գործող գինը

X_d – նախկինում գնվող ապրանքի հիմնական ցուցանիշի ցուցիչը,

X_{HMI} – ապրանքի հիմնական ցուցանիշի ցուցիչը, որի հիման վրա որոշվում է նախնական (առավելագույն) գինը,

n – գնի արգելակման գործակից:

4.7. Ծախսային մեթոդ

4.7.1. Ծախսային մեթոդը կիրառվում է համադրելի շուկայական գների (շուկայի ուսումնասիրության) մեթոդի և տեսակարար ցուցանիշների մեթոդի (պարամետրական) կիրառման անհնարինության դեպքում կամ սույն բաժնում նշված մեթոդներին ի լրումն:

4.7.2. Ծախսային մեթոդը կայանում է ապրանքի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի՝ որպես կատարված ծախսերի և որոշակի արտադրական ոլորտում սովորական եկամտի գումարի որոշման մեջ: Միաժամանակ հաշվի են առնվում նման դեպքերում սովորական արտադրության և (կամ) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ուղղակի և անուղղակի ծախսերը, փոխադրման, պահպանության, ապահովագրության և այլ ծախսերը:

4.7.3. Ծախսային մեթոդը կիրառվում է պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման համար շուկայում նույնական և (կամ) միասեռ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) բացակայության դեպքում, այդ թվում՝

4.7.3.1. Նոր մշակվող սարքավորումների գնման ժամանակ,

4.7.3.2. Օրիգինալ տեխնիկական առաջադրանքի համաձայն անհատական սարքավորման արտադրության գնման ժամանակ,

4.7.3.3. Մոնոպոլիստ արտադրողների թողարկած սարքավորումների գնման ժամանակ,

4.7.4. Ծախսային մեթոդով պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն գնի) որոշման ժամանակ կատարվում է խնդրարկված և արտադրողի, մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից ներկայացված հաշվարկը ծախսերի հողվածներով վերծանումների կցմամբ:

4.7.5. Հաշվարկը աղյուսակի տեսքով ներկայացված ծախսերի, ապրանքի կամ ապրանքների խմբաքանակի (աշխատանքի կատարման, ծառայությունների մատուցման) արտադրության և իրացման ծախսերի, ինչպես նաև դրամական արտահայտությամբ եկամտի հաշվապահական հաշվարկն է:

4.8. Սակագնային մեթոդ

4.8.1. Սակագնային մեթոդը կիրառվում է, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գները ենթակա են պետական կարգավորման, սահմանված են համայնքային իրավական ակտերով կամ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ներքին իրավական ակտերով: Այդ դեպքում պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը որոշվում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) կարգավորվող գներով (սակագներով):

4.8.2. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը սակագնային մեթոդով (ՆԱԳ սակագին) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$HMI\text{սակագին} = V * I\text{սակագին}$$

որտեղ՝

V – գնվող ապրանքի (աշխատանքի, ծառայության) քանակն (ծավալն) է,

Iսակագին – ապրանքի (աշխատանքի, ծառայության) միավորի գինն (սակագինն) է:

4.9. Նախագծանախահաշվային մեթոդ

4.9.1. Նախագծանախահաշվային մեթոդը կիրառվում է շինարարության, վերակառուցման և օբյեկտների կապիտալ վերանորոգման պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման համար, ինչպես նաև կարող է կիրառվել շինությունների, շենքերի,

կառույցների, տարածքների ընթացիկ վերանորոգման պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման ժամանակ:

4.9.2. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը նախագծանախահաշվային մեթոդով որոշվում է ըստ սահմանված հաստատված (համաձայնեցված) նախագծային փաստաթղթերի և նախագծային փաստաթղթերի հաստատման (համաձայնեցման) պահից մինչև պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման պահը գների փոփոխության հաշվառմամբ ինդեքսավորված և աշխատանքների կատարման ժամանակաշրջանի գնաճի կանխատեսվող գործակցով ճշգրտված աշխատանքների գնով:

4.10. Գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների հաշվարկման մեթոդ (ՓԿՏԱ)

Գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների գնի հաշվարկման մեթոդն օգտագործվում է գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման համար և կայանում է «Գազպրոմ» ՀԲԸ հրամանով հաստատված ՓԿՏԱ կատարման պայմանագրի նախնական (առավելագույն) գնի մեթոդիկայի կիրառման մեջ:

4.11. Արտաքին ազդակների ազդեցության հաշվառմամբ գնի ձևավորման մեթոդ

4.11.1. Արտաքին ազդակների ազդեցության հաշվառմամբ գնի ձևավորման մեթոդը կիրառվում է այնպիսի ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պայմանագրերի համար, որոնց նախնական (առավելագույն) գինը կախված է (կամ ենթակա է ազդեցության) արտաքին ազդակներից, բացառությամբ 4.10, 4.12 կետերով նախատեսված դեպքերի:

4.11.2. Արտաքին ազդեցություն ասելով հասկանում ենք՝

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից որոշվող՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների գների ինդեքսների փոփոխությունը,

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տվյալներով արտարժույթի փոխարժեքի փոփոխությունը,

Բորսայական ինդեքսների փոփոխությունը,

Միջազգային և ռուսական վերլուծական գործակալությունների ինդեքսների փոփոխությունը,

Ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակական բնութագրերի տարբեր փոփոխությունները,

Այլ հանգամանքներ, որոնց ազդեցությունը կարող է հանգեցնել պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի էական փոփոխության:

4.11.3. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը որոշվում է 4.5-4.9. կետերի համաձայն բանաձևով հետագա ճշգրտմամբ, որը հաշվի է առնում արտաքին ազդակների ազդեցությունը ուսումնասիրվող ապրանքի (աշխատանքի, ծառայության) տեսակի գնի փոփոխության վրա:

4.11.4. Բանաձևը որոշվում է պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի ձևավորման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից 4.1. կետին համապատասխան:

4.12. Երկարաժամկետ արտադրության մեքենաշինական ոլորտի ապրանքների գնի ձևավորման

մեթոդ

4.12.1. Երկարաժամկետ արտադրության մեքենաշինական ոլորտի ապրանքների գնի ձևավորման մեթոդը կիրառվում է ավելի քան 180 օր տևողությամբ պատրաստվող մեքենաշինական ոլորտի ապրանքների մատակարարման պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման ժամանակ:

$$\Pi_{\text{пос}} = (\Pi_{\text{б.руб.}} / (((\frac{\text{ИЦП}_{\text{б.руб.}}^{\text{МС.ЯНВ}}}{\text{б}-1} - 1) \times C + 1)) \times \prod_{i=6}^{\text{пос}} (\frac{\text{ИЦП}_{i}^{\text{МС.пос}}}{100}) \times C + 1) + \Pi_{\text{б.вал.}} \times \frac{K_{\text{вал.пос}}}{K_{\text{вал.б}}} + \Delta \text{ЦТИ}$$

4.12.2. Նախագծային հետազոտական աշխատանքների ժամանակ մեքենաշինական ոլորտի երկարատև արտադրության ապրանքների՝ մատակարարի ընտրությամբ մրցակցային գնումների համար պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը որոշվում է 4.5-4.8 կետերի համաձայն՝ մրցակցային գնման հայտարարման տարվա հունվարի 01-ի դրությամբ գների մակարդակով՝ բանաձևով նախնական (առավելագույն) գնի հետագա ճշգրտմամբ՝ որտեղ՝

$\Pi_{\text{пос}}$ – մատակարարման ժամանակաշրջանում (եռամսյակում) արտադրանքի գնման գինն է,

$\Pi_{\text{б}} = \Pi_{\text{б.руб.}} + \Pi_{\text{б.вал.}}$ – մրցակցային գնման հայտարարման տարվա հունվարի 01-ի դրությամբ գների մակարդակում որոշված արտադրանքի բազային գին, որը նշված է լավագույնը ճանաչված մրցակցային գնման մասնակցության հայտում և չի գերազանցում նախնական (առավելագույն) գինը, $\Pi_{\text{б.руб.}}$ – արտադրանքի բազային գնի մաս, որը կախվածություն չունի ներմուծումից, $\Pi_{\text{б.вал.}}$ – մրցակցային գնման հայտարարման տարվա գների մակարդակում ներմուծվող նյութերի և լրակազմի գնման ծախսեր,

$\text{ИЦП}_{\text{б.руб.}}^{\text{МС.ЯНВ}}$

6 — 1 – Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության տվյալների համաձայն մեքենաշինական արտադրանքի թողարկողների գների ինդեքս, որը գործում է մրցակցային գնման հայրարման տարվա հունվարի 01-ի դրությամբ,

$\text{ИЦП}_{i}^{\text{МС.пос}}$ – Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության տվյալներով մեքենաշինական արտադրանք թողարկողների գների ինդեքս i -թվականին, որոնք գործում են մատակարարման ժամանակաշրջանում, $i=1$;

$K_{\text{вал.б}}$ – մրցակցային գնման հայտարարման թվականի հունվարի 01-ի դրությամբ արտարժույթի փոխարժեք,

$K_{\text{вал.пос}}$ – նախավճարների վճարման, նյութերի և լրակազմի պլանային և փաստացի գնման, ներմուծվող նյութերի, տեխնիկական ռեսուրսների այլ գնման ծախսերը ռուբլով որոշող օբյեկտիվ հանգամանքների հաշվառմամբ ամսաթվի համար արտարժույթի փոխարժեք,

$\Delta \text{ЦТИ}$ – մրցակցային ընթացակարգերի իրականացումից հետո տեխնիկական պահանջների և լրակազմի ճշգրտման արդյունքում արտադրանքի թողարկման համար արտադրողի ծախսերի փոփոխություն,

C - «Գազպրոմ» ՀԲԸ ներքին իրավական ակտերով որոշված գնաճի զսպման գործակից:

4.12.3. Այլ դեպքերում պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գինը որոշվում է 4.5-4.8 կետերի համաձայն՝ մատակարարման նախատեսվող ժամանակաշրջանի գների մակարդակում մակրոտնտեսական ցուցանիշների հաշվառմամբ՝ հետագա ճշգրտմամբ համաձայն բանաձևի՝

$$Ц_{\text{пос}} = (Ц_{\text{конк.руб}} / \prod_{i=6}^{\text{пос}} \left(\frac{\text{ИЦП}_{i-1}^{\text{МС.б}}}{100} - 1 \right) \times C + 1) \times \prod_{i=6}^{\text{пос}} \left(\frac{\text{ИЦП}_{i-1}^{\text{МС.пос}}}{100} \right) \times C + 1) + Ц_{\text{конк.вал.}} \times \frac{K_{\text{вал.пос}}}{K_{\text{вал.б}}} + \Delta Ц_{\text{ТИ}}$$

որտեղ՝

$Ц_{\text{пос}}$ – մատակարարման ժամանակաշրջանում (եռամսյակում) արտադրանքի գնման գինն է,

$Ц_{\text{конк}} = Ц_{\text{конк.руб.}} + Ц_{\text{конк.вал.}}$ – մրցակցային գնման հայտարարման ժամանակաշրջանում (բազային տարում) գործող մակրոտնտեսական ցուցանիշների հաշվառմամբ գնանշումների հարցմանը մասնակցության հայտում նշված, լավագույնը ճանաչված արտադրանքի բազային արժեք, որը որոշվում է մրցակցային գործընթացների արդյունքում,

$Ц_{\text{конруб.}}$ – արտադրանքի բազային գնի մաս, որը կախվածություն չունի ներմուծումից, $Ц_{\text{конвал.}}$ – մրցակցային գնման հայտարարման տարվա գների մակարդակում

ներմուծվող նյութերի և լրակազմի գնման ծախսեր, $\text{ИЦПТ}^{\text{МС}}$

$i - 1$ – Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության տվյալների համաձայն մեքենաշինական արտադրանքի թողարկողների գների ինդեքս, որը հաշվի է առնվել պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման ժամանակ,

$\text{ИЦПТ}^{\text{МС.пос}}$ – Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության տվյալներով մեքենաշինական արտադրանք թողարկողների գների ինդեքս k -թվականին, որոնք գործում են մատակարարման ժամանակաշրջանում, $i - 1$;

$K_{\text{вал.б}}$ – արտարժույթի փոխարժեք, որը հաշվի է առնվել պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի որոշման ժամանակ,

$K_{\text{вал.пос}}$ – նախավճարների վճարման, նյութերի և լրակազմի պլանային և փաստացի գնման, ներմուծվող նյութերի, տեխնիկական ռեսուրսների այլ գնման ծախսերը ռուբլով որոշող օբյեկտիվ հանգամանքների հաշվառմամբ ամսաթվի համար արտարժույթի փոխարժեք,

$\Delta Ц_{\text{ТИ}}$ – մրցակցային ընթացակարգերի իրականացումից հետո տեխնիկական պահանջների և լրակազմի ճշգրտման արդյունքում արտադրանքի թողարկման համար արտադրողի ծախսերի փոփոխություն,

C – «Գազպրոմ» ՀԲԸ ներքին իրավական ակտերով որոշված գնաճի զսպման գործակից:

4.12.4. Մակրոտնտեսական ցուցիչներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության տվյալներով մեքենաշինական արտադրանք թողարկողների գների

ինդեքսները, արտարժույթի փոխարժեքն ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տվյալների:

5. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

5.1. Գնումների կատարումն իրականացվում է Կազմակերպչի կողմից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հաստատված գնումների տարեկան պլանի հիման վրա:

5.2. Եթե Կազմակերպչի կողմից գնումը կատարվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կարիքների համար, ապա Պատվիրատուի և Կազմակերպչի նման հարաբերությունները ձևակերպվում են գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հաստատված գնումների տարեկան պլանի համապատասխան Պատվիրատուն իրականացնում է գնումների կատարման համար պայմանների և պահանջների նախապատրաստում: Սույն Կարգով նախատեսված Կազմակերպչի գործառույթները «Գազպրոմ» ՀԲԸ-ում կատարում է Վարչությունը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում՝ Գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանումը:

5.3. Գնման կազմակերպման և կատարման համար Պատվիրատուի (Գնման նախաձեռնողի) կողմից Կազմակերպչին տրամադրման ենթակա ելակետային տվյալների ցանկը, կապված գնման առարկայի եղանակից և առարկայից, սահմանում է Կազմակերպիչը:

5.4. Գնումների կատարման ժամանակ Կազմակերպիչն իրավունք ունի ներգրավելու Կազմակերպչի («Գազպրոմ» ՀԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համապատասխանաբար) ստորաբաժանումներին, Պատվիրատուին, ովքեր ունեն անհրաժեշտ իրավասություն գնման առարկայի կապակցությամբ:

5.5. Մրցակցային միջավայրի բարելավման, մատակարարի (կատարողի, կապալառուի) կողմից պայմանագրով պարտավորությունների չկատարման ռիսկերի նվազեցման նպատակով գնման առարկան կարող է Պատվիրատուի, Կազմակերպչի կողմից բաժանվել լոտերի կամ միավորվել մեկ լոտում:

Գնման առարկայի բաժանումը լոտերի կամ միավորումը մեկ լոտում կարող է իրականացվել ինչպես «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների տարեկան պլանի ձևավորման, այնպես էլ մրցակցային գնումների մասին փաստաթղթերի, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերի, գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարության նախապատրաստման ժամանակ:

5.6. Կատարվող գնման առավելագույն արդյունավետության ապահովման համար Կազմակերպիչն իրավունք ունի՝

Նվազեցնել պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (լոտի գինը)՝ ելնելով գնման հայտարարման օրվա դրությամբ շուկայի արդիական իրավիճակից,

Կատարելու այլ գործողություններ՝ ուղղված գնումների արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ պայմանագրի գնի նվազեցմանը:

5.7. Եթե մրցակցային գնման մասին, գնանշումների հարցման մասին հայտարարության, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերով նախատեսված է, գնման մասնակիցը մրցակցային գնման մասին, գնանշումների հարցման մասին հայտարարության, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերով սահմանված կարգով մինչև գնումների արդյունքների ամփոփման օրվան նախորդող օրվա 15:00 իրավունք ունի նվազեցնելու հայտարարված գինը նոր առևտրային առաջարկների, գնառաջարկների ներկայացմամբ, որոնք նախապատրաստվել են մրցակցային գնման մասին, գնանշումների հարցման մասին հայտարարության, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կարգով:

5.8. Պատվիրատուն, ածուխի (վառվող շերտաքարերի) և (կամ) դրա վերամշակման

արդյունքների (այսուհետ՝ ածխային արտադրանք) գնման դեպքում կնքում է ածխային արտադրանքի մատակարարման պայմանագրեր միայն մեկ տարուց ավելի գործողության ժամկետով և անմիջականորեն ածխային արտադրանք արտադրողների հետ կամ ածխային արտադրանք արտադրողի հետ անձանց խմբի մեջ մտնող կազմակերպությունների հետ:

5.9. Կետը հանված է:

5.10. Մի քանի Պատվիրատուների կողմից միևնույն ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում կատարելիս գնման գործընթացների ծախսերի կրճատման և գնումների արդյունավետության բարձրացման նպատակով Կազմակերպիչն իրավունք ունի նրանց համար կատարել համատեղ գնում: Այդ դեպքում համատեղ գնման հաղթողի կամ հաղթողների հետ Պատվիրատուն կնքում է առանձին պայմանագրեր մրցակցային գնման մասին փաստաթղթերով, գնանշումների հարցման մասին հայտարարությամբ, ոչ մրցակցային գնման մասին փաստաթղթերով սահմանված պայմաններով:

5.11. Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնման ժամանակ, երբ հնարավոր չէ նախապես որոշել ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ծավալը, որոշակի ժամկետները, մատակարարման վայրը, սակայն կարող են որոշվել առանձին նման ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գները (գնատախտակը), ինչպես նաև գնման առավելագույն արժեքը և/կամ ծավալը, Պատվիրատուն կարող է կիրառել շրջանակային կամ գնային պայմանագիրը: Շրջանակային կամ գնային պայմանագրի պայմաններով որոշվում են գների (գնատախտակի) առանձին արժեքները և պայմանագրի առավելագույն արժեքը, պայմանագրի այլ պայմանները, իսկ անվանացուցակը, ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ժամկետները և վայրը կարող են որոշվել Պատվիրատուի հայտերով կամ այլ եղանակով, որը նախատեսված է շրջանակային կամ գնային պայմանագրով, եթե Պատվիրատուն ունի ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) կարիք:

5.12. Մինչև 200.0 հազ. ՀՀ դրամ գումարի շտապ գնում կատարելու անհրաժեշտության դեպքում գրավոր պայմանագրի կնքումը պարտադիր չէ և գործարքը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա: Նման ձևով գնումներ կատարելիս գնման մասնատումն անթույլատրելի է:

6. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6.1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումները կատարվում են սույն Կարգով նախատեսված գնման ընթացակարգերի կիրառմամբ մրցակցության հիման վրա, բացառությամբ սույն Կարգով նախատեսված դեպքերի:

6.2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում կիրառվող գնման ընթացակարգերը՝

6.2.1. Մրցակցային գնումների համար՝

6.2.1.1. Մրցույթ, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով (բաց կամ փակ, մեկ- կամ բազմափուլ, 10.3.1. կետով նախատեսված էլեկտրոնային եղանակով մրցակցային գնումների կատարման ժամանակ լրացուցիչ փուլերի ներառմամբ կամ առանց դրա):

6.2.1.2. Աճուրդ (բաց կամ փակ), այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով աճուրդը (էլեկտրոնային աճուրդը) նախաորակավորման փուլի ներառմամբ կամ առանց դրա:

6.2.1.3. Գնառաջարկների հարցումը էլեկտրոնային եղանակով (երկփուլ, որակավորման

ընտրության փուլի կատարմամբ կամ առանց դրա), գնառաջարկների փակ հարցում:

6.2.1.4. Գնանշումների հարցում էլեկտրոնային եղանակով, գնանշումների փակ հարցում:

6.2.1.5. Մրցակցային ընտրություն, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով (բաց կամ փակ, դրանում առանձին փուլերի ներառմամբ, նախնական ընտրությամբ և սկզբնական գնի բարձրացմամբ):

6.2.2. Ոչ մրցակցային գնումների համար՝

6.2.2.1. Մարքեթինգային հետազոտություններ (բաց կամ փակ, մարքեթինգային հետազոտությունների կատարման մասին տեղեկատվության տեղադրմամբ կամ առանց դրա):

6.2.2.2. Առևտրային պորտալի օգտագործմամբ գնում:

6.2.2.3. Ոչ այլընտրանքային գնում:

6.2.2.4. Գնում սակարկություններում:

6.2.2.5. Գնում միակ մատակարարից (կապալառուից, կատարողից):

6.3. Սույն Կարգով նախատեսված գնման ցանկացած եղանակներ կարող են կատարվել էլեկտրոնային եղանակով:

6.4. Գնման եղանակը և ձևը (էլեկտրոնային կամ թղթային) որոշվում են Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների տարեկան պլանի ձևավորման փուլում:

6.5. Մրցակցային գնումները և մարքեթինգային հետազոտությունների եղանակով անցկացվող ոչ մրցակցային գնումները կատարվում են՝ էլեկտրոնային եղանակով՝ Պատվիրատուի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ այդ մասին ուղղակի նշման ուժով, ինչպես նաև սույն Կարգով նախատեսված դեպքերում, այդ թվում՝ մրցակցային ընտրության և մարքեթինգային հետազոտությունների համար:

Թղթային եղանակով՝ Գազպրոմ Խմբի գնումների կենտրոնական մարմնի՝ համապատասխան որոշում կայացնելուց հետո:

6.6. Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնին իրավունք ունի կայացնելու որոշում գնման ընթացակարգի, ձևի փոփոխման մասին:

6.7. Հրատապ գնումը, որը ներառված չէ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների տարեկան պլանում, այդ թվում՝ դրա կատարման ընթացակարգը և ձևը, պետք է Պատվիրատուի կողմից համաձայնեցվի Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ:

6.8. Սույն Կարգով նախատեսված գնման ընթացակարգերի կիրառման պայմանները՝

6.8.1. Մրցույթն անց է կացվում, եթե ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնումը Պատվիրատուն պարտավոր է իրականացնել մրցույթի միջոցով՝ Պատվիրատուի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ուղղակիորեն նման նշման առկայության ուժով:

6.8.2. Աճուրդ, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, կատարվում է, եթե ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնումը Պատվիրատուն պարտավոր է իրականացնել

աճուրդի անցկացման միջոցով՝ Պատվիրատուի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ուղղակիորեն նման նշման առկայության ուժով կամ գնվող ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ներառված են «Գազպրոմ» ՀԲԸ կողմից հաստատվող Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ցանկ, որոնց գնումն իրականացվում է աճուրդի անցկացման ձևով: Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ցանկում, որոնց գնումն իրականացվում է աճուրդի անցկացման միջոցով, կարող են ներառվել ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, որոնք գնվում են մշտական հիմունքով, սերիական արտադրության ապրանքները և (կամ) տիպային աշխատանքները, ծառայությունները այն դեպքում, եթե առկա է հնարավորություն ձևակերպելու դրանց մանրամասն և ճշգրիտ նկարագրությունը և դրանց գնման կատարման ժամանակ մատակարարին, կապալառուին, կատարողին որոշելու միակ չափանիշն է հանդիսանում պայմանագրի առարկան:

6.8.3. Գնային առաջարկությունների հարցումը էլեկտրոնային եղանակով կատարվում է, եթե ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնումը Պատվիրատուն պարտավոր է կատարել էլեկտրոնային եղանակով գնային առաջարկների հարցման կատարման եղանակով՝ Պատվիրատուի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նման ուղղակի պահանջ լինելու պարագայում:

6.8.4. Գնանշումների հարցումը էլեկտրոնային եղանակով կատարվում է, եթե ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնումը Պատվիրատուն պարտավոր է կատարել էլեկտրոնային եղանակով գնանշումների հարցման կատարման եղանակով՝ Պատվիրատուի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նման ուղղակի պահանջ լինելու պարագայում:

6.8.5. Մրցակցային ընտրությունը կարող է կատարվել մրցակցային գնումների իրականացման բոլոր դեպքերում, բացառությամբ 6.8.1-6.8.4. կետերով նախատեսված դեպքերի, այդ թվում՝ եթե Պատվիրատուի համար կարևոր են բացի պայմանագրի գնից դրա կատարման այլ պայմանները և (կամ) հաղթող ճանաչվելու չափանիշ է հանդիսանում բացի գնից ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) այլ պայմանները, մասնակցի ունակությունը բավարարելու Պատվիրատուի պահանջմունքները՝ փորձի, որակավորման և այլնի հաշվառմամբ, ինչպես նաև երբ առկա են սույն Կարգով նախատեսված գնման այլ եղանակների ընտրության հիմքեր հետևյալ պայմաններից որևէ մեկի պահպանմամբ՝

6.8.5.1. Գնման սուղ ժամկետները թույլ չեն տալիս անցկացնելու մրցույթ, աճուրդ:

6.8.5.2. Գնման առարկա հանդիսացող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) բարդությունը չի թույլ տալիս իրականացնել աճուրդ, գնանշումների հարցում:

6.8.5.3. Մրցույթը, աճուրդը, գնանշումների հարցումը, գնային առաջարկների հարցումը ճանաչվել են չկայացած, երկրորդ մրցույթ, աճուրդ, գնանշումների հարցում, գնային առաջարկների ներկայացման հարցում հնարավոր չէ անցկացնել գնման հրատապության պատճառով և Պատվիրատուն չի կայացրել որոշում միակ մատակարարի (կատարողի,

կապալառուի) հետ կնքելու պայմանագիր կամ կատարելու ոչ մրցակցային գնում:

6.8.5.4. Պատվիրատուի համար բացի պայմանագրի գնից կարևոր են նաև պայմանագրի կատարման այլ պայմանները և Պատվիրատուի համար առաջնահերթ կարևոր է վստահելի մասնակցի ընտրությունը, ով կարող է իրականացնել ապրանքների մատակարարումը (ծառայությունների մատուցումը, աշխատանքների կատարումը) Պատվիրատուի նախատեսած պայմաններով, կամ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնումը հանդիսանում է պայմանագրի առարկա, որը լուծվել է Պատվիրատուի կողմից դրա կատարումից միակողմ հրաժարվելով, եթե նման կարգ նախատեսված է եղել պայմանագրով:

6.8.6. Սկզբնական գնի բարձրացմամբ նախաորակավորմամբ մրցակցային ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով 14 բաժնով նախատեսված առանձնահատկությունները:

6.8.7. Միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնման ժամանակ պայմանագիրը կնքվում է ուղղակի մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ՝ սույն Կարգով նախատեսված հիմքերով և դեպքերում:

6.8.8. Կետը հանված է:

6.8.9. Մարքեթինգային հետազոտությունները կարող են Պատվիրատուի կողմից կատարվել այն դեպքում, եթե գնման պայմանները, ելնելով դրա առանձնահատկություններից

Գնման մասին տեղեկությունները Պատվիրատուն իրավունք ունի չտեղադրելու տեղեկատվական համակարգում սույն Կարգին համաձայն,

Կատարվում է գործող օրենսդրությանը համապատասխան ապրանքային շուկաներում ազատ շրջանառության մեջ սահմանափակված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնում (զենք, պայթուցիկ նյութեր, երկակի նշանակության արտադրանք և այլն) տվյալ գործունեության թույլտվություն ունեցող սահմանափակ շրջանակի մասնակիցների միջև,

Կատարվում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում անվտանգության ապահովման նպատակով, ներառյալ՝ «Գազպրոմ» ՀԲԸ և Գազպրոմ Խմբի Ընկերությունների հատուկ կարևորության, կրիտիկական կարևոր արտադրական օբյեկտների և ենթակառուցվածքների օբյեկտների տեղեկատվական անվտանգության ապահովումը (անվտանգության համակարգեր, չսանկցիավորված միջամտությունից պաշտպանություն, հակատեռորիստական պաշտպանվածություն և այլն), որոնց մասին տեղեկատվության տեղադրումն ունի անվտանգության ապահովման մոտեցումների, դրա կրիտիկական տարրերի բացահայտման ռիսկեր, ինչպես նաև թույլ կտա նույնականացնել կատարողներին,

Կատարվում է ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնում ապրանքային շուկաներում, որտեղ ապրանքի (աշխատանքի, ծառայության) պահանջարկը գերազանցում է առաջարկը և/կամ պայմանագիրը կնքվում է վաճառողների (աշխատանքներ կատարողների, ծառայություններ մատուցողների) պայմաններով՝ նրանց կողմից սահմանված կանոններով (վաճառողի շուկա),

Կատարվում է ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնում, որոնց շրջանառությունը շուկայի մասնակիցների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից ձևավորված գործարար սովորույթների և կանոնների ուժով իրականացվում է պատվերի տեղադրման հատուկ մեխանիզմների կիրառությամբ, ներառյալ՝ մասնագիտացված տեղեկատվական համակարգերի և Ինտերնետ-հարթակների կիրառումը,

Կատարվում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում «Գազպրոմ» ՀԲԸ և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ստրատեգիական ներդրումային նպատակների համար, մրցակցային գնման կատարման մասին հրապարակային հայտարարումը Պատվիրատուի համար պարունակում է էական տնտեսական ռիսկեր, որոնք գերազանցում են լրացուցիչ մասնակիցների հրավիրման էֆեկտը,

Կատարվում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում էլեկտրոնային եղանակով, որի հնարավոր կատարողները կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող անձինք, որոնք, տեղեկատվական համակարգի գործունեության կանոնների և նորմատիվ իրավական ակտերի ուժով չեն կարող գրանցվել և ներկայացնել հայկական էլեկտրոնային հարթակներում էլեկտրոնային եղանակով մրցակցային գնումներում մասնակցության հայտեր:

6.8.10. Առևտրային պորտալի գործառնության կազմի օգտագործմամբ գնումները Պատվիրատուի կողմից կատարվում են Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից նման գնումների համար որոշված պահանջներին և պայմաններին համապատասխան, եթե՝

Գնման առարկա են հանդիսանում նյութատեխնիկական ռեսուրսները, որոնց արժեքը գերազանցում է 12.0 մլն. ՀՀ դրամը (առանց ԱԱՀ),

Կատարվում է «Գազպրոմ» ՀԲԸ և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից Պատվիրատուի հետ կնքված ճանապարհաշինարարական և հատուկ տեխնիկայի վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքների (ծառայությունների մատուցման) կատարման պայմանագրերով (այսուհետ՝ սպասարկման պայմանագրեր) ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների հրատապ գնում, երբ մրցակցային գնման և մարքեթինգային հետազոտությունների կատարումը հանգեցնում է ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) համար ծախսված ժամանակի և ծախսերի չհիմնավորված ավելացում, պայմանով, որ գնումների նման կարգը անմիջականորեն նախատեսված է սպասարկման պայմանագրով, որը հաստատված է Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից:

6.8.11. Պատվիրատուն իրավունք ունի իրականացնելու ոչ այլընտրանքային գնում, եթե 16 բաժնով նախատեսված դեպքերում համապատասխան ապրանքի (աշխատանքի, ծառայության) շուկայի առանձնահատկություններից էլնելով մրցակցությունը բացակայում է:

6.8.12. Սակարկություններով գնումը Պատվիրատուի կողմից կատարվում է, եթե նա կարիք ունի կնքելու այնպիսի ապրանքների ձեռք բերման պայմանագիր, որոնք կարող են

իրացվել միայն սակարկությունների անցկացմամբ, 16 բաժնով նախատեսված դեպքերում:

7. ՄՐԾԱԿՑԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Մրցակցային գնումների կազմակերպման և անցկացման ընդհանուր կարգը

7.1.1. Կազմակերպչի կողմից մրցակցային գնման կազմակերպման և կատարման համար հիմք է հանդիսանում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների տարեկան հաստատված պլանը:

7.1.2. Մրցակցային գնումները կատարվում են 6.2.1. կետով նախատեսված ընթացակարգերով սույն բաժնում պարունակվող՝ դրանց նախապատրաստման և իրականացման պահանջներին համապատասխան:

7.1.3. Էլեկտրոնային եղանակով մրցակցային գնումների նախապատրաստման և իրականացման կարգը որոշվում է սույն բաժնի և սույն Կարգի համապատասխան բաժիններում մրցակցային գնումների առանձին տեսակների համար նախատեսված կանոնների համաձայն՝ հաշվի առնելով 8 բաժնով սահմանված պահանջները:

7.1.4. Կետը հանված է:

7.1.5. Փակ եղանակով մրցակցային գնումների նախապատրաստման և իրականացման կարգը (փակ մրցակցային գնումներ) որոշվում է սույն բաժնի կանոններով և սույն Կարգի համապատասխան բաժիններում նշված կանոնների համաձայն, որոնք նախատեսված են առանձին տեսակի մրցակցային գնումների համար, հաշվի առնելով 9 բաժնով սահմանված պահանջները:

7.1.6. Մրցակցային գնման նախապատրաստման և իրականացման ժամանակ անց են կացվում հետևյալ գնման գործընթացները՝

7.1.6.1. Պատվիրատուի, Կազմակերպչի կողմից մրցակցային գնման կատարման համար փաստաթղթերի նախապատրաստում:

7.1.6.2. Մրցակցային գնման հայտարարում (մրցակցային գնման կատարման մասին հայտարարության տեղադրում, մրցակցային գնման մասին փաստաթղթերի տեղադրում), մրցակցային գնման մասին փաստաթղթերի տրամադրում, մրցակցային գնման մասին հայտարարության, ինչպես նաև մրցակցային գնման մասին փաստաթղթերում փոփոխությունների կատարում (անհրաժեշտության դեպքում):

7.1.6.3. Մրցակցային գնման կատարման մասին հայտարարության և (կամ) մրցակցային գնման մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանում:

7.1.6.4. Մրցակցային գնման մասնակցության հայտերի, վերջնական առաջարկությունների (եթե վերջնական առաջարկությունների ներկայացման հնարավորությունը նախատեսված է մրցակցային գնումների մասին փաստաթղթերով) ընդունում:

7.1.6.5. Մրցակցային գնման մասնակցության հայտերի բացում/էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասնակցության հայտերին հասանելիության ապահովում:

7.1.6.6. Ամփոփիչ արձանագրության կազմում և մրցակցային գնման արդյունքների ամփոփում:

7.1.7. Ամփոփիչ արձանագրության կազմման և մրցակցային գնումների արդյունքների

ամփոփման փուլում իրականացվում է նաև՝

Կազմակերպչի կողմից հայտերի, վերջնական առաջարկների վերլուծություն և հայտերի, վերջնական առաջարկների պարզաբանման պահանջի ներկայացում (անհրաժեշտության դեպքում),

Հայտերի, վերջնական առաջարկների ուսումնասիրություն (եթե վերջնական առաջարկների ներկայացումը նախատեսված է գնման պայմաններով),

Հայտերի, վերջնական առաջարկների (եթե դրանց ներկայացումը նախատեսված է գնման պայմաններով) գնահատում և համադրում, յուրաքանչյուր հայտին, յուրաքանչյուր վերջնական առաջարկին յուրաքանչյուր նախատեսված գնահատման չափանիշով նշանակության տրամադրում և այդպիսի հայտերի համեմատում,

Մրցակցային գնմանը մասնակցության հայտերին, գնման մասնակիցների վերջնական առաջարկներին հերթական համարների տրամադրում՝ ըստ դրանցում պարունակվող պայմանների շահավետության աստիճանի նվազեցման կարգի,

Մրցակցային գնման արդյունքների մասին որոշման կայացում, այդ թվում՝ մրցակցային գնումը չկայացած հայտարարելու մասին,

Մրցակցային գնման արդյունքներով մատակարարի (կապալառուի, կատարողի) որոշում, ում հետ նախատեսվում է կնքել պայմանագիր (եթե մրցակցային գնման արդյունքներով որոշված է դրա հաղթողը):

7.1.8. Եզրափակիչ արձանագրության կազմման և մրցակցային գնման արդյունքների ամփոփման փուլն ավարտվում է եզրափակիչ արձանագրության ստորագրմամբ:

7.1.9. Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից սույն Կարգի պահանջներին համապատասխան՝ կարող է սահմանվել մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովում տրամադրելու մասին պահանջ: Մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովման պահանջ սահմանված լինելու դեպքում նման պահանջը հավասարապես տարածվում է գնման բոլոր մասնակիցների վրա և նշվում է մրցակցային գնման մասին փաստաթղթերում:

7.1.10. Սույն Կարգով և մրցակցային գնման մասին փաստաթղթերով սահմանված կարգով մրցակցային գնման ցանկացած մասնակից իրավունք ունի Պատվիրատուին (Կազմակերպչին) ուղղել մրցակցային գնման մասին հայտարարության և (կամ) մրցակցային գնման մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանման հայտ:

7.1.11. 7.1.10. կետում նշված հայտը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրականացնում է մրցակցային գնման մասին փաստաթղթերի պարզաբանում և տեղադրում է այն տեղեկատվական համակարգում՝ նշելով հայտի առարկան, սակայն չնշելով գնման մասնակցին, ով ներկայացրել էր պարզաբանման հայտ: Ընդ որում, Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի չտալու պարզաբանում, եթե նշված հայտը ներկայացվել է ավելի ուշ, քան մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտին նախորդող երեք աշխատանքային օրվանից, կամ հայտը պարունակում է հարցեր՝ կապված պարտավորության ապահովման երաշխավորության փոփոխության և շտկման, մրցակցային գնման առարկայի վերաբերյալ պայմանագրի նախագծին:

7.1.12. Մրցակցային գնման մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումները չպետք է փոփոխեն գնման առարկայի և պայմանագրի նախագծի էական պայմանները:

7.1.13. Կազմակերպիչն իրավունք ունի չեղարկել մրցակցային գնումը մեկ և ավելի գնման առարկայի (լոտի) մասով, այդ թվում՝ առանձին Պատվիրատուի մասով, եթե անցկացվում է համատեղ գնում, մինչև մրցակցային գնման մասնակցության հայտերի ներկայացման համար սահմանված ժամկետի ավարտը և օրը: Մրցակցային գնման չեղյալ հայտարարման մասին որոշումը տեղադրվում է տեղեկատվական համակարգում նման որոշում ընդունելու օրը:

7.1.14. 7.1.13. կետի համաձայն մրցակցային գնման չեղարկման ժամկետի լրանալուց հետո (մրցակցային գնման մասնակցության հայտի ներկայացման ժամկետի ամսաթվի և ժամանակի վրա հասնելը) Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի չեղարկել մատակարարի (կատարողի, կապալառուի) ընտրությունը միայն օրենսդրությանը համապատասխան անհաղթահարելի ուժի ազդեցության առաջանալու դեպքում:

7.1.15. Մրցակցային գնմանը մասնակցելու իր մտադրությունը հաստատելու նպատակով գնման մասնակիցն իրավունք ունի ուղարկելու ծանուցում գնման գործընթացներում մասնակցելու իր մտադրության մասին:

7.2. Մրցակցային գնումների անցկացման մասին հայտարարություն

7.2.1. Մրցակցային գնման մասին հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

7.2.1.1. Գնման կատարման եղանակը

7.2.1.2. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը:

7.2.1.3. Պայմանագրի առարկան՝ մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության ծավալի նշմամբ, ինչպես նաև գնման առարկայի կարճ նկարագրությունը:

7.2.1.4. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման, ծառայության մատուցման վայրը:

7.2.1.5. Պայմանագրի (գնման առարկայի) նախնական (առավելագույն) գնի մասին տեղեկություններ, կամ գնի բանաձև, որը սահմանում է Պատվիրատուի կողմից պայմանագրի կատարման ընթացքում մատակարարին (կատարողին, կապալառուին) վճարման ենթակա գումարների հաշվարկման կարգը, և պայմանագրի գնի առավելագույն չափը կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի գինը և պայմանագրի առավելագույն գինը:

7.2.1.6. Մրցակցային գնման մասին փաստաթղթերի տրամադրման ժամկետը, վայրը և կարգը, Կազմակերպչի (Պատվիրատուի) կողմից այդ փաստաթղթերի տրամադրման համար գանձվող վճարի չափը և գանձման ժամկետը, եթե նման վճարում սահմանված է Կազմակերպչի (Պատվիրատուի) կողմից (թղթային եղանակով մրցակցային գնման կատարման ժամանակ):

7.2.1.7. Մրցակցային գնման (մրցակցային գնման փուլերի) հայտերի ներկայացման

կարգը, հայտերի ներկայացման ժամկետի սկիզբը և ավարտը և մրցակցային գնման (մրցակցային գնման փուլերի) արդյունքերի ամփոփման կարգը:

7.2.1.8. Ինտերնետ տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցում Էլեկտրոնային հարթակի հասցեն (էլեկտրոնային եղանակով մրցակցային գնում կատարելու դեպքում):

7.2.1.9. Մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովման պահանջը, եթե նման պահանջ նախատեսվում է մրցակցային գնման պայմաններով:

7.2.1.10. Պայմանագրի պայմանների կատարման ապահովման մասին պահանջ, եթե նման պահանջներ նախատեսված են մրցակցային գնման պայմաններով:

7.2.11. Այլ տեղեկություններ, որոնք պետք է պարունակի մրցակցային գնման մասին հայտարարությունը՝ համաձայն սույն Կարգի:

7.2.2. Մրցակցային գնման կատարման մասին հայտարարությունը կարող է պարունակել հետևյալ տեղեկությունները՝

7.2.2.1. Պատվիրատուի (Կազմակերպչի)՝ մրցակցային գնում կատարելու մասին հայտարարությունում և մրցակցային գնման մասին փաստաթղթերում մինչև մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը ցանկացած ժամանակ փոփոխություններ կատարելու իրավունքի մասին տեղեկատվությունը:

7.2.2.2. Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունի մասին տեղեկությունն՝ մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ժամկետը և համապատասխանաբար հայտերի բացման գործընթացի /հայտերին հասանելիության ապահովման ամսաթիվը և ժամկետը ցանկացած ժամանակ՝ մինչև մրցակցային գնման մասնակցության հայտերի բացման գործընթացի կատարումը/ էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասնակցության հայտերին հասանելիության ապահովումը, երկարաձգելու իրավունքը, ինչպես նաև մինչև մրցակցային գնման արդյունքների ամփոփումը փոփոխելու գնման մասնակիցների հայտերի ուսումնասիրության և արդյունքների ամփոփման ամսաթիվը:

7.2.2.3. Մրցակցային գնման մասնակիցների հայտերի ուսումնասիրության և մրցակցային գնման արդյունքների ամփոփման ամսաթիվը:

7.2.2.4. Այլ տեղեկություններ, որոնք կարող են ներառվել մրցակցային գնման մասին հայտարարությունում համաձայն սույն Կարգի:

7.3. Մրցակցային գնումների փաստաթղթեր

7.3.1. Մրցակցային գնման մասին փաստաթղթերը (բացառությամբ էլեկտրոնային եղանակով գնանշումների հարցման) պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները՝

7.3.1.1. Ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գործառույթային բնութագրերին (սպառողական հատկությունների), տեխնիկական բնութագրերին, որակին, անվտանգության պահանջներին, աշխատանքի (ծառայությունների) արդյունքներին ներկայացվող պահանջները, որոնք սահմանվել են Պատվիրատուի կողմից և նախատեսված են տեխնիկական կանոնակարգերով տեխնիկական կարգավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ստանդարտացման ազգային համակարգում մշակվող և կիրառվող փաստաթղթերով, որոնք ընդունվել են ստանդարտացման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը

համապատասխան, այլ պահանջներ՝ կապված մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի, մատուցված ծառայության համապատասխանությանը Պատվիրատուի պահանջներին:

Եթե մրցակցային գնման մասին փաստաթղթերով Պատվիրատուն չի օգտագործում տեխնիկական կարգավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ստանդարտացման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ապրանքի, աշխատանքի, ծառայության անվտանգությանը, տեխնիկական բնութագրերին, գործառույթային բնութագրերին (սպառողական կարիքներին), չափերին, փաթեթավորմանը, ապրանքի առաքմանը, աշխատանքի (ծառայության) արդյունքներին վերաբերող պահանջները, մրցակցային գնման մասին փաստաթղթերում պետք է պարունակվի այլ պահանջների օգտագործման հիմնավորումը՝ կապված մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության՝ Պատվիրատուի պահանջներին համապատասխանության հետ:

Պատվիրատուի կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանության փաստաթղթային հավաստում են հանդիսանում համապատասխանության սերտիֆիկատները և (կամ) այլ փաստաթղթերը, որոնք տրվել են գործող օրենսդրությանը համապատասխան:

7.3.1.2. Մրցակցային գնման հայտի բովանդակությանը, ձևին, ձևակերպմանը, կազմին, գործողության ժամկետին ներկայացվող պահանջները, այն նախապատրաստելու հրահանգները:

7.3.1.3. Մրցակցային գնման մասնակիցների կողմից մրցակցային գնման առարկա հանդիսացող ապրանքի նկարագրությանը, դրա գործառույթային բնութագրերին (սպառողական հատկություններին), քանակական և որակական բնութագրերին ներկայացվող պահանջները, գնման մասնակիցների կողմից գնման առարկա հանդիսացող կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նկարագրությանը վերաբերող պահանջները, դրանց որակական և քանակական բնութագրերը:

7.3.1.4. Ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման տեղը, պայմանները և ժամկետները (փուլերը):

7.3.1.5. Պայմանագրի նախնական (առավելագույն) գնի (լոտի գնի) մասին տեղեկությունները կամ գնի բանաձևը, որը նախատեսում է գումարի հաշվարկման կարգը, որը Պատվիրատուն պետք է վճարի մատակարարին (կատարողին, կապալառուին) պայմանագրի կատարման ընթացքում, և պայմանագրի գնի առավելագույն չափը կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի գինը և պայմանագրի առավելագույն գինը:

7.3.1.6. Ապրանքների, աշխատանքների, ծառայությունների համար վճարման եղանակը, ժամկետները և կարգը:

7.3.1.7. Պայմանագրի գնի (լոտի գնի) ձևավորման կարգը (փոխադրման, ապահովագրության, մաքսատուրքերի վճարման, հարկերի և այլ պարտադիր վճարների հաշվառմամբ կամ առանց դրա):

7.3.1.8. Մրցակցային գնման մասնակցության հայտի ներկայացման կարգը,

ներկայացման ժամկետի սկիզբն ու ավարտը և մրցակցային գնման (մրցակցային գնման փուլերին) մասնակցության հայտի կազմին ներկայացվող պահանջները և մրցակցային գնման (մրցակցային գնման փուլերի) արդյունքների ամփոփման կարգը:

7.3.1.9. Գնման մասնակիցներին ներկայացվող պահանջները և փաստաթղթերի ցանկը, որը գնման մասնակիցները ներկայացնում են իրենց համապատասխանությունը սահմանված պահանջներին հիմնավորելու համար:

7.3.1.10. Գնման մասնակիցներին և նրանց կողմից ներգրավվող ենթակապալառուներին, համակատարողներին, և (կամ) մրցակցային գնման առարկա հանդիսացող ապրանքը պատրաստողին ներկայացվող պահանջները և պահանջներին նրանց համապատասխանությունը հաստատող գնման մասնակիցների կողմից տրամադրվող փաստաթղթերի ցանկը, նախագծման աշխատանքների, շինարարության, մոդերնիզացման և առանձնապես վտանգավոր, տեխնիկապես բարդ օբյեկտների կապիտալ շինարարության և ատոմային էներգիայի օգտագործման հետ կապված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների մրցակցային գնման պահանջները:

7.3.1.11. Գնման մասնակիցներին մրցակցային գնման մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումներ տալու ձևը, կարգը, ժամկետի ավարտի ամսաթիվը և ժամը:

7.3.1.12. Գնման մասնակիցների առաջարկությունների քննարկման և գնման արդյունքների ամփոփման ամսաթիվը:

7.3.1.13. Պայմանագրի նախագիծը (մի քանի լոտերով մրցակցային գնման կատարման դեպքում՝ յուրաքանչյուր լոտի համար առանձին պայմանագրի նախագիծ), որը հանդիսանում է մրցակցային գնման փաստաթղթերի անբաժանելի մասը:

7.3.1.14. Մրցակցային գնման մասնակցության հայտերի գնահատման և համադրման չափանիշները:

7.3.1.15. Մրցակցային գնման մասնակցության հայտերի գնահատման և համադրման կարգը:

7.3.1.16. Կետը հանված է;

7.3.1.17. Գնման առարկան՝ նշելով մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքի ծավալը, մատուցվող ծառայության ծավալը, բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավոր չէ որոշել ապրանքի քանակը, աշխատանքի, ծառայության հստակ ծավալը:

7.3.1.18. Մրցակցային գնման մասնակցության հայտերի բացման վայրը, կարգը, ամսաթիվը և ժամը (թղթային ձևով մրցակցային գնում կատարելիս):

7.3.1.19. Հանձնաժողովի՝ մրցակցային գնմանը մասնակցության հայտը մերժելու իրավունքի մասին տեղեկություններ, եթե հայտը չի համապատասխանում մրցակցային գնման մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին, նշելով նման մերժման համար հիմք հանդիսացող թերությունների ցանկը:

7.3.1.20. Մրցակցային գնման մասնակցության հայտի վերադարձման կարգը, եթե հայտը ներկայացվել է մրցակցային գնման մասնակցության հայտերի ներկայացման համար սահմանված ժամկետի ավարտից հետո (թղթային ձևով մրցակցային գնում կատարելիս):

7.3.1.21. Մրցակցային գնման մասնակցության հայտի վերադարձման կարգը այն դեպքերում, երբ սույն Կարգով նախատեսված դեպքերում մրցակցային գնումը

հայտարարվել է չկայացած կամ մրցակցային գնման գործընթացն ավարտվել է առանց պայմանագրի կնքման (թղթային ձևով մրցակցային գնում կատարելիս):

7.3.2. Մրցակցային գնման մասին փաստաթղթերը կարող են պարունակել նաև հետևյալ տեղեկությունները (անհրաժեշտության, թույլատրելիության դեպքում՝ կախված մրցակցային գնման եղանակից)՝

7.3.2.1. Մրցակցային գնման մասնակցի իրավունքի մասին առանց Կազմակերպչի լրացուցիչ առաջարկների նվազեցնելու իր կողմից առաջադրված հայտի գինը մինչև սակարկությունների կատարման օրը:

7.3.2.2. Պայմանագրի գնի ձևավորման համար և մատակարարների (կատարողների, կապալառուների) հետ հաշվարկներում օգտագործվող արտարժույթի մասին տվյալներ:

7.3.2.3. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված և կնքված պայմանագրի վճարման ժամանակ օգտագործվող ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի պաշտոնական փոխարժեքի կիրառման կարգը:

7.3.2.4. Մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովման չափը, ձևը, գործողության ժամկետը, տրամադրման ժամկետը և կարգը, եթե Կազմակերպչի կողմից սահմանվել են նման պահանջներ:

7.3.2.5. Հանձնաժողովի՝ մի քանի հաղթող ճանաչելու իրավունքի մասին տեղեկությունները (մի քանի մատակարարներ (կապալառուներ, կատարողներ)), Պատվիրատուի՝ մրցակցային գնման մասին փաստաթղթերով նախատեսված կարգով մրցակցային գնման արդյունքներով մի քանի պայմանագրեր կնքելու իրավունքի մասին տեղեկությունները:

7.3.2.6. Ապրանքի, աշխատանքների, ծառայությունների որակի երաշխիքի տրամադրման ժամկետի և (կամ) ծավալի նկատմամբ պահանջներ, ապրանքի սպասարկման նկատմամբ պահանջներ, ապրանքի շահագործման ծախսերի նկատմամբ պահանջներ:

7.3.2.7. Պայմանագրի պայմանների կատարման ապահովման տրամադրման չափը, ձևը, գործողության ժամկետը, տրամադրման ժամկետը և կարգը, եթե Պատվիրատուն սահմանել է նման պահանջներ:

7.3.2.8. Մրցակցային գնման մասնակիցների՝ այլընտրանքային առաջարկություններ ներկայացնելու իրավունքի մասին տեղեկություններ, ինչպես նաև այլընտրանքային առաջարկությունների նախապատրաստմանը և ներկայացմանը պահանջներ (այն դեպքերում, երբ այլընտրանքային առաջարկության ներկայացման հնարավորությունը նախատեսված է սույն Կարգով):

7.3.2.9. Վերջնական առաջարկի բովանդակությանը, ձևին, ձևակերպմանը, կազմին ներկայացվող պահանջները, դրա նախապատրաստման հրահանգը (եթե մրցակցային գնման մասին փաստաթուղթը նախատեսում է վերջնական առաջարկության ներկայացում):

7.3.2.10. Մեկ և ավելի գնման առարկաների (լոտերի) մասով մրցակցային գնման չեղարկման կարգը:

7.3.2.11. Ըստ գնման առարկայի (լոտի) մատակարարի (կապալառուին, կատարողին)

ընտրությունը չեղարկելու կարգը:

7.3.2.12. Առանց գնման առարկայի վերաբերյալ (լոտի) պայմանագրի կնքման մրցակցային գնման գործընթացի ավարտ:

7.3.2.13. Գնման մասնակիցների հետ բանակցությունների վարման կարգը:

7.3.2.14. Լրացուցիչ գնային առաջարկների ներկայացման կարգը (եթե մրցակցային գնման պայմաններով նախատեսված է նման փուլ):

7.3.2.15. Այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են գնման մասնակիցներին մրցակցային սույն Կարգին համապատասխան գնման մասնակցության հայտերի նախապատրաստման համար:

7.3.3. Կետը հանված է:

7.4. Մրցակցային գնումների հայտարարություն, մրցակցային գնման մասին փաստաթղթերի տրամադրում, հրավերում փոփոխությունների ներառում, մրցակցային գնման մասին փաստաթղթերում փոփոխությունների ներառում

7.4.1. Մրցակցային գնման անցկացման մասին հայտարարությունը և մրցակցային գնման մասին փաստաթղթերը տեղադրվում են տեղեկատվական համակարգում սույն Կարգով նախատեսված ժամկետներում մրցակցային գնումների համապատասխան միջոցների համար:

7.4.2. Մրցակցային գնման անցկացման մասին հայտարարության, մրցակցային գնման փաստաթղթերի մեջ փոփոխություններ մտցնելու դեպքում, այդ գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ժամկետը պետք է երկարաձգվի այնպես, որպեսզի տեղեկատվական համակարգում նշված փոփոխությունների տեղադրման ամսաթվից մինչև այդ գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտման ամսաթիվը մնա տվյալ գնման ընթացակարգի համար սույն Կարգով սահմանված գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի առնվազն կեսը:

7.4.3. Թղթային եղանակով մրցակցային գնում անցկացնելու դեպքում, մրցակցային գնում անցկացնելու մասին տեղեկատվական համակարգում տեղադրման օրվանից Պատվիրատուն (Կազմակերպիչը) թղթային եղանակով ցանկացած շահագրգրված անձի դիմումի հիման վրա՝ համապատասխան դիմումը ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ անձին տրամադրում է մրցակցային գնման (մրցակցային գնման մասին փաստաթղթերում) անցկացման մասին հայտարարության մեջ նշված կարգով: Ընդ որում, մրցակցային գնման մասին փաստաթղթերի պատճենը տրամադրվում է տպագիր ձևով, գնման մասնակցի կողմից մրցակցային գնման մասին փաստաթղթերի պատճենի տրամադրման դիմաց վճարում կատարելուց հետո, եթե այդ վճարումը սահմանված է և դրա մասին կարգադրությունը առկա է մրցակցային գնման անցկացման մասին հայտարարության մեջ: Նշված վճարի չափը չպետք է գերազանցի մրցակցային գնման մասին փաստաթղթերի պատճենի պատրաստման ծախսերը և դրա առաքումը փոստային կապի միջոցով նշված դիմումը ներկայացրած անձին, եթե այդպիսի առաքման իրականացման հնարավորությունը նախատեսված է մրցակցային գնման մասին հայտարարությամբ: Էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասին փաստաթղթերի

տրամադրումը իրականացվում է առանց վճարի գանձման:

Մրցակցային գնման մասին փաստաթղթերի տրամադրում մինչև տեղեկատվական համակարգում մրցակցային գնման մասին հայտարարությունը չի թույլատրվում:

Տեղեկատվական համակարգում տեղադրված մրցակցային գնման մասին փաստաթղթերը պետք է համապատասխանեն սույն Կարգով սահմանված կարգով տրամադրվող փաստաթղթերին:

7.4.4. Մինչև տեղեկատվական համակարգում մրցակցային գնման մասին հայտարարության տեղադրումը մրցակցային գնմանը մասնակցության հրավերների ուղարկում և մրցակցային գնման մասին փաստաթղթերի տրամադրում չի թույլատրվում:

7.4.5. Գնման մասնակիցները պետք է ինքնուրույն հետևեն մրցակցային գնման անցկացման մասին ծանուցման և մրցակցային գնման մասին փաստաթղթերի փոփոխություններին, որոնց մասին տեղեկատվությունը տեղադրված է տեղեկատվական համակարգում: Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում ոչ ժամանակին գնման մասնակցի կողմից տեղեկատվությունը տեղեկատվական համակարգից ստանալու համար:

7.5. Մրցակցային գնումներին մասնակցության հայտերի ներկայացում

7.5.1. Մրցակցային գնմանը մասնակցության հայտերը ներկայացվում են մրցակցային գնմանը մասնակցության հայտի ձևի, բովանդակության, ձևակերպման և կազմի նկատմամբ սույն Կարգի համաձայն ըստ մրցակցային գնման մասին փաստաթղթերի մեջ նշված պահանջների: Էլեկտրոնային եղանակով գնանշումների հարցումում մասնակցության հայտի ձևը և կազմի նկատմամբ պահանջները սահմանվում են գնանշումների անցկացման մասին հայտարարության մեջ՝ սույն Կարգի համաձայն:

7.5.2. Մրցակցային գնմանը մասնակցության հայտերը ներկայացվում են մրցակցային գնման մասին փաստաթղթերի, գնանշումների հարցման անցկացման հայտարարության մեջ նշված կարգով, վայրում և մինչև ժամկետի ավարտը:

7.5.3. Մրցակցային գնման մասնակիցն իրավունք ունի գնման յուրաքանչյուր առարկայի (լոտի) նկատմամբ ներկայացնել այդ գնմանը մասնակցության միայն մեկ հայտ ցանկացած ժամանակ դրա անցկացման մասին հայտարարության տեղադրման պահից մինչև մրցակցային գնման մասին փաստաթղթերով (գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարությամբ) նախատեսված այդ գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ամսաթվի և ժամկետի ավարտը:

7.5.4. Մրցակցային գնման մասնակիցն իրավունք ունի փոփոխելու կամ ետ կանչելու իր հայտը մինչև հայտերի ներկայացման ժամկետի ավարտը: Այդ գնմանը մասնակցության հայտը հանդիսանում է փոփոխված կամ ետ կանչված, եթե փոփոխությունը իրականացվել է կամ հայտի ետ կանչման մասին ծանուցումը Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից ստացվել է մինչև այդ գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտը:

7.5.5. Մի քանի իրավաբանական անձանց և/կամ ֆիզիկական անձանց, այդ թվում նաև գնման մեկ մասնակցի կողմից (անձանց խումբ) հանդես եկող անհատ ձեռներեցի կողմից հայտի ներկայացման դեպքում, մրցակցային գնման մասին փաստաթղթերի (գնանշումների անցկացման մասին հայտարարության) մեջ նշված պահանջներին պետք է ընդհանուր

առմամբ համապատասխանի այդպիսի անձանց խումբը, այլ ոչ թե առանձին վերցված անձ:

7.5.6. Անձանց խմբի կողմից մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ներկայացումը իրականացվում է մրցակցային գնման մասին փաստաթղթերով (գնանմուշների անցկացման մասին հայտարարությամբ) սահմանված կարգով՝ ներառյալ հայտի ձևի և բովանադրության նկատմամբ պահանջները: Ընդ որում, այդպիսի հայտը պետք է ստորագրվի մեկ մասնակցի կողմից հանդես եկող անձանցից յուրաքանչյուրի կողմից կամ նրանց կողմից լիազորված անձի կողմից և պարունակի նրանց անունից հայտերի ստորագրման համար այդ անձի լիազորությունների փաստաթղթային հաստատում: Ինչպես նաև, մրցակցային գնմանը մասնակցության հայտում պետք է հիշատակվեն բոլոր անձինք, որոնք հանդես են գալիս գնման մասնակցի կողմից:

7.5.7. Անձանց խմբի կողմից մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ներկայացման դեպքում, անձանց այդ խմբում ընդգրկված յուրաքանչյուր անձի համապատասխանության մասին պահանջները Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջներին և այդ պահանջներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը սահմանվում են մրցակցային գնման մասին փաստաթղթերի (գնանմուշների հարցման անցկացման մասին հայտարարության) մեջ:

7.5.8. Հայտը պետք է պարունակի այդ անձանց անունից Պատվիրատուի հետ պայմանագիր ստորագրելու համար հայտում սահմանված անձի լիազորությունների փաստաթղթային հաստատում այն դեպքում, եթե մրցակցային գնման արդյունքներով հաղթող է որոշվել մասնակից, ում կողմից հանդես են եկել մի քանի անձինք:

7.5.9. Մրցակցային գնման մեկ մասնակցի կողմից հանդես եկող անձինք իրավունք չունեն մասնակցելու այդ նույն գնմանը ինքնուրույն կամ գնման այլ մասնակցի կողմից: Մույն պահանջի չպահպանումը հիմք է հանդիսանում հայտերի մերժման համար՝ ինչպես մրցակցային գնման բոլոր մասնակիցների, որոնց կողմից հանդես է գալիս այդ անձը, այնպես էլ այդ անձի կողմից ինքնուրույն ներկայացված հայտի:

7.5.10. Մրցակցային գնմանը մասնակցության հայտը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը՝

7.5.10.1. Հայտը ներկայացրած մրցակցային գնման մասնակցի մասին տեղեկություններ և փաստաթղթեր՝

ա) մրցակցային գնման մասնակցի անվանումը, կազմակերպաիրավական ձևի, գտնվելու վայրի մասին տեղեկություններ, փոստային հասցեն (իրավաբանական անձի համար), ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրի մասին տեղեկությունները (ֆիզիկական անձի համար), կոնտակտային հեռախոսի համարը,

բ) անձը հաստատող փաստաթղթերի պատճենները (անհատ ձեռներեց չհաղիսացող ֆիզիկական անձանց համար), իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռներեց ֆիզիկական անձի պետական գրանցման մասին փաստաթուղթը, համապատասխան պետության (օտարերկրյա անձանց համար) օրենսդրության համաձայն, տեղեկատվական համակարգում տեղադրման օրվանից ոչ շուտ քան վեց ամիս առաջ ստացված մրցակցային գնման անցկացման մասին հայտարարությունները,

գ) մրցակցային գնման մասնակցի անունից գործողությունների կատարման համար անձի

լիազորությունները հաստատող փաստաթուղթը,

դ) մրցակցային գնման մասնակցի հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար):

7.5.10.2. Գնման մասնակցի համաձայնությունը մրցակցային գնման մասին փաստաթղթերի (գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարության) մեջ առկա մրցակցային գնման անցկացման պայմանների և պայմանագրի պայմանների հետ:

7.5.10.3. Պարտադիր պահանջներին և որակավորման պահանջներին գնման մասնակցի համապատասխանության մասին տեղեկությունը, ինչպես նաև այդ համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը:

7.5.10.4. Միասնական որակավորման պահանջներին (եթե դրանք սահմանված են մրցակցային գնման մասին թղթաբանության մեջ) գնման մասնակցի համապատասխանության մասին տեղեկությունը և այդ համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը:

7.5.10.5. Մրցույթի, աճուրդի մասնակցի վերջնական առաջարկի կամ ապրանքի, աշխատանքների, ծառայությունների որակի ֆունկցիոնալ բնութագրերի (սպառողական հատկությունների) մասին առաջարկների հարցման և պայմանագրի այլ պայմանների մասին տեղեկություն (եթե վերջնական առաջարկների ներկայացումը համապատասխանում է մրցակցային գնման պայմաններին և նախատեսված է մրցակցային գնման մասին փաստաթղթերին):

7.5.10.6. Գնման առարկայի նկատմամբ մասնակցի առաջարկը մրցակցային գնման մասին փաստաթղթերի (գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարության) մեջ սահմանված պահանջներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի կցմամբ, ներառյալ սահմանված դեպքերում պայմանագրի գնի հաշվարկը և հիմնավորումը, ինչպես նաև ապրանքների գնման դեպքում՝ ապրանքի միավորի առաջարկվող գինը, ապրանքի ծագման և արտադրողի երկրի մասին տեղեկությունը:

Սույն Կարգի համաձայն Պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին ապրանքների, աշխատանքների, ծառայությունների համապատասխանության փաստաթղթային հաստատումն են հաղիսանում համապատասխանության սերտիֆիկատները և (կամ) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը չհակասող այլ փաստաթղթերը:

7.5.10.7. Մրցակցային գնմանը մասնակցության հայտի ապահովման բանկային երաշխիքը, այն դեպքում, եթե մրցակցային գնման մասին փաստաթղթերի (գնանմուշների ասանցկացման մասին հայտարարության) մեջ առկա է բանկային երաշխիքի ձևով այդ հայտի ապահովման պահանջի նշում:

7.5.10.8. Այլ փաստաթղթեր, որոնց ներկայացման պահանջները նշված են մրցակցային գնման մասին փաստաթղթերի (գնանմուշների հարցման անցկացման մասին հայտարարության) մեջ:

7.5.11. Հայտը կարող է պարունակել ապրանքի պլաններ, ուրվագիծ, նկար, գծանկար, լուսանկար, այլ պատկեր, ապրանքի, որի գնումը իրականացվում է, աշխատանքի արդյունքի (անհրաժեշտության դեպքում մրցակցային գնման մասին փաստաթղթերի

պայմանների համաձայն) օրինակ (նմուշ):

7.5.12. Մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ընդունումը ավարտվում է մրցակցային գնման անցկացման մասին հայտարարությամբ սահմանված հայտերի ներկայացման ժամկետի ավարտմամբ:

7.5.13. Հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո ստացված մրցակցային գնմանը մասնակցության հայտը չի ուսումնասիրվում և վերադարձվում է Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից գնման մասնակցի հարցումով՝ մրցակցային գնման (գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարության) մասին թփաստաթղթերով նախատեսված կարգով:

7.5.14. Կազմակերպիչը (Էլեկտրոնային հարթակի օպերատորը) տրամադրում է գնման մասնակցին նրա նույնականացման համարը և հայտնում է դրա մասին գնման մասնակցին հայտերի բացումից/հայտերին հասանելիության բացումից հետո:

7.5.15. Գնման մասնակիցների կողմից այլընտրանքային առաջարկների ներկայացում թույլատրվում է մրցակցային գնման մասին փաստաթղթերի մեջ այդ հնարավորության նշման պայմանով: Մրցակցային գնման մասին փաստաթղթերի մեջ այդպիսի պայմանի բացակայության դեպքում՝ այլընտրանքային առաջարկների ներկայացում չի թույլատրվում:

7.5.16. Այլընտրանքային առաջարկները ընդունվում են միայն հիմնական առաջարկի առկայության դեպքում: Գնման մեկ մասնակցի կողմից ներկայացվող այլընտրանքային առաջարկների քանակը սահմանվում է մրցակցային գնման մասին փաստաթղթերի մեջ:

7.5.17. Այլընտրանքային առաջարկները կարող են ներկայցվել միայն մրցակցային գնման մասին փաստաթղթերի մեջ նշված հիմնական առաջարկի պայմանների նկատմամբ:

7.5.18. Գնման մասնակիցների կողմից մրցակցային գնման մասին փաստաթղթերի (պայմանագրի առանձին պայմանների) անբաժանելի մասը հանդիսացող պայմանագրի նախագծի փոփոխման առաջարկների ներկայացում չի թույլատրվում:

7.6. Էլեկտրոնային մասնակցության հայտերին հասանելիության ապահովում:

Մրցակցային գնումների մասնակցության հայտերի բացումը

7.6.1. Էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման կատարման ժամանակ Էլեկտրոնային հարթակի օպերատորն իրականացնում է գնման մասնակիցների հայտերին հասանելիության բացում Պատվիրատուի, Կազմակերպչի, Հանձնաժողովի համար 8 բաժնի պահանջներին համապատասխան:

7.6.2. Մրցակցային գնմանը մասնակցության թղթային հայտերը Կազմակերպչի կողմից բացվում են մրցակցային գնման մասին փաստաթղթերում նշված օրը, ժամին և վայրում, Կազմակերպչի կողմից կազմվում է բացման ակտ, որի մեջ ներառվում են՝ 7.5.14. կետի համաձայն գնման յուրաքանչյուր մասնակցին շնորհված անհատականացնող համարը, ում մրցակցային գնմանը մասնակցության հայտը բացվում է,

Մրցակցային գնմանը մասնակցության հայտում նշված պայմանագրի (մրցակցային գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գնի առաջարկությունը, այլ տեղեկություններ, որոնք Կազմակերպիչն անհրաժեշտ է համարում

ներառելու ակտում:

7.6.3. Եթե բացահայտվում է, որ մրցակցային գնման մասնակիցը ներկայացրել է մրցակցային գնմանը մասնակցության երկու և ավելի հայտեր, պայմանով, որ ավելի վաղ ներկայացված մրցակցային գնման մասնակցության հայտը ետ չի կանչվել, նման մասնակցի ներկայացրած հայտերը չեն քննարկվում:

7.7. Հայտերի, վերջնական առաջարկությունների վերլուծություն

7.7.1. Կազմակերպիչը իրականացնում է մրցակցային գնման մասնակցության հայտի գնահատում մրցակցային գնման մասին փաստաթղթերի (գնանշումների հարցման հայտարարման մասին հայտարարության) ձևական պահանջներին համապատասխանության, այդ թվում՝

Մրցակցային գնմանը մասնակցության հայտի առարկայի համապատասխանությունը գնման մասին փաստաթղթերում (գնանշումների հարցման հայտարարության) նշված գնման առարկային, այդ թվում՝ քանակական ցուցանիշներով (մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալը),

Մրցակցային գնման մասին փաստաթղթերում (գնանշումների հարցման հայտարարությունում) սահմանված փաստաթղթերի առկայությունը և պատշաճ ձևակերպումը,

Մրցակցային գնման մասին փաստաթղթերում (գնանշումների հարցման հայտարարությունում) առկա պայմանագրի նախագծի պայմաններին մրցակցային գնման մասնակցի համաձայնությունը,

Եթե մրցակցային գնման մասին փաստաթղթերում (գնանշումների հարցման հայտարարությունում) նշված է պահանջ, ապա մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովման առկայությունը,

Պատվիրատուի (Կազմակերպիչի) կողմից սահմանված մրցակցային գնման (պայմանագրի) նախնական (առավելագույն) գնի նկատմամբ մրցակցային գնման մասնակցության հայտում նշված պայմանագրի գնային առաջարկի (մրցակցային գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) չգերազանցումը:

7.7.2. Կամզակերպիչը ստուգում է մրցակցային գնման մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը, Այդ թվում՝ կորպորատիվ անվտանգության ծառայության ներգրավմամբ իրականացնում է մասնակցի իրավունակության, վճարունակության և գործարար համբավի գնահատում:

7.7.3. Կազմակերպիչն իրավունք ունի մրցակցային գնման մասնակիցներից պահանջել տրամադրելու նրանց կողմից մրցակցային գնմանը մասնակցության հայտի դրույթների պարզաբանում:

7.7.4. Գնման մասնակցի գրավոր համաձայնությամբ Կազմակերպիչն իրավունք ունի գնման մասնակցի հայտում ուղղելու ակնհայտ թվաբանական և ուղղագրական սխալները:

7.7.5. Թվերով և բառերով նշված գումարների միջև տարբերության առկայության դեպքում նախապատվությունը տրվում է բառերով արտահայտված գումարին:

7.7.6. Անհատական գնանշման և ընդհանուր գումարի միջև տարբերության դեպքում, եթե գումարը ստացվել է անհատական գնանշումը դրա քանակի վրա բազմապատկելով, առավելությունը տրվում է անհատական գնանշմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կազմակերպչի կարծիքով, սկնհայտորեն տեղի է ունեցել կոպիտ սխալանհատական գնանշման մեջ տասնորդական կոտորակի նշանի տրոհման ժամանակ: Այդ դեպքերում առավելությունը տրվում է ընդհանուր գումարին, իսկ անհատական գնանշումը պետք է ուղղվի:

7.7.7. Կազմակերպիչն իրավունք ունի ուշադրություն չդարձնել մանր անճշտություններին, անհամապատասխանություններին և թերություններին, որոնք էական ազդեցություն չեն ունենում մրցակցային գնման մասնակցի առաջարկած պայմանների վրա և պայմանագրով պարտավորությունների կատարման հետ կապված մրցակցային գնման մասնակցի հնարավորությունների վրա:

7.7.8. Հայտերի գնահատման և մրցակցային գնման մասնակիցների մասին տեղեկությունների ստուգման արդյունքներով Կազմակերպիչը Հանձնաժողովին է ներկայացնում որոշումների կայացման համար տեղեկատվություն, այդ թվում՝ մրցակցային գնմանը մասնակցության հայտի մերժման առաջարկություն այն հիմքերով, որոնք նախատեսված են մրցակցային գնման մասին փաստաթղթերով (գնանշումների հարցման մասին հայտարարությունում), ինչպես նաև այն դեպքում, եթե մասնակցի կողմից առաջարկված պայմանագրի (մրցակցային գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գինը գերազանցում է մրցակցային գնում կատարելու մասին հայտարարությունում կամ մրցակցային գնման մասին հայտարարությունում նշված մրցակցային գնման (պայմանագրի) առարկայի նախնական (առավելագույն) գինը, ինչպես նաև սույն Կարգով նախատեսված հայտերի մերժման այլ հիմքերով:

7.8. Գնման մասնակիցների հայտերի ուսումնասիրություն

7.8.1. Հայտի գնահատման և գնման մասնակցի մասին տեղեկատվության ստուգման արդյունքում, որոնք իրականացնում է Կազմակերպիչը, Հանձնաժողովն իրավունք ունի մերժել մրցակցային գնման մասնակցության հայտը հետևյալ դեպքերում՝

7.8.1.1. Հայտի առարկայի անհամապատասխանությունը գնման առարկային, որը նշված է մրցակցային գնման մասին փաստաթղթերում, այդ թվում՝ ըստ քանակական ցուցանիշների (մատակարարվող ապրանքի քանակի, կատարվող աշխատանքների ծավալի, մատուցվող ծառայությունների ծավալի) անհամապատասխանությունը:

7.8.1.2. Մրցակցային գնման մասին փաստաթղթերում սահմանված (գնանշման մասին հարցման հայտարարությունում նշված) փաստաթղթերի բացակայությունը կամ նման փաստաթղթերում ոչ հավաստի տվյալների առկայությունը մրցակցային գնման մասնակցի կամ գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին:

7.8.1.3. Մրցակցային գնումում մասնակցության հայտի ապահովման բացակայությունը, եթե մրցակցային գնման մասին փաստաթղթերում (գնանշման հարցման մասին

հայտարարությունում) առկա է նման պահանջ:

7.8.1.4. Գնման մասնակցի անհամաձայնությունը մրցակցային գնման մասին փաստաթղթերում (գնանշման մասին հարցման հայտարարությունում) նշված պայմանագրի նախագծի պայմաններին:

7.8.1.5. Պայմանագրի գնի (լոտի գնի) (մրցակցային գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) մասին առաջարկությունը գերազանցում է պայմանագրի (լոտի) սահմանված նախնական (առավելագույն) գինը:

7.8.1.6. Գնման մասնակցի կողմից Կազմակերպչի գրավոր հարցումով իր կողմից ներկայացված մրցակցային գնմանը մասնակցության հայտի դրույթների գրավոր պարզաբանումների չներկայացումը Կազմակերպչին, այդ թվում նաև ակնհայտ թվաբանական սխալների, գումարների, արտահայտված բառերի և թվերի միջև անհամապատասխանությունների, մեկանգամյա դրույթաչափը քանակի վրա բազմապատկելու արդյունքում ստացված մեկանգամյա դրույթաչափի և ընդհանուր գումարի միջև անհամապատասխանությունների ուղղման հետ անհամաձայնությունը:

7.8.1.7 Ոչ բարեխիղճ մատակարարների ռեեստրներում գնման մասնակցի մասին տեղեկությունների առկայություն, եթե մրցակցային գնման մասին փաստաթղթերի (գնանմուշների հարցման անցկացման մասին հայտարարության) մեջ սույն Կարգի համաձայն ոչ բարեխիղճ մատակարարների համապատասխան ռեեստրը նշելով սահմանվել է այդպիսի պահանջ:

7.8.1.8 Գնման մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ հավաստի տեղեկատվության բացահայտման դեպքում, գնման մասնակցի, ինչպես նաև նրա կողմից պայմանագրի կատարման համար ներգրավվող համակատարողների (ենթակապալառուների)՝ մրցակցային գնման մասին փաստաթղթերով (գնանշման հարցման կատարման մասին հայտարարությունով) սահմանված գնման մասնակիցներին, համակատարողներին (ենթակապալառուներին) ներկայացված պահանջներին անհամապատասխանությունը, մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության անհամապատասխանությունը մրցակցային գնման մասին փաստաթղթերով (գնանշման հարցման կատարման մասին հայտարարությունով) սահմանված գնման առարկա հանդիսացող ապրանքներին, աշխատանքին, ծառայություններին:

7.8.1.9 Մրցակցային գնման մասին փաստաթղթերում (գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարության մեջ) կարող են սահմանվել սույն Կարգին չհակասող գնման մասնակիցների հայտերի մերժման լրացուցիչ հիմքեր:

7.8.2 Այն դեպքում, եթե մրցակցային գնմանը մասնակցության որևէ հայտ չի ներկայացվել կամ մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ուսումնասիրման և մրցակցային գնման մասնակիցների մասին տեղեկատվության ստուգման արդյունքներով Հանձնաժողովի կողմից մերժվել են մրցակցային գնմանը մասնակցության բոլոր հայտերը, Հանձնաժողովը ընդունում է այդ մրցակցային գնումը չկայացած ճանաչելու մասին որոշում: Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից կրկնակի մրցակցային գնման անցկացումից հրաժարվելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի 17.1.8 կետի համաձայն

պայմանագիր կնքելու միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ:

7.8.3 Այն դեպքում, եթե մրցակցային գնման մասին փաստաթղթերով նախատեսված է երկու և ավելի լոտեր, մրցակցային գնումը ճանաչվում է չկայացած միայն այն լոտի նկատմամբ, որով ընդունվել է մրցակցային գնման բոլոր հայտերի մերժման մասին որոշում:

7.8.4 Մրցակցային գնման հաղթող որոշելու նպատակով անցկացվում է մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ուսումնասիրում, գնահատում և համադրություն: Այն դեպքում, եթե ընդունվել է մրցակցային գնմանը մասնակցության հայտերի մերժման մասին որոշում, գնահատվում և համադրվում են միայն մրցակցային գնմանը մասնակցության հայտերը, որոնք չեին մերժվել:

7.8.5 Կազմակերպիչը (գնումների նախապատրաստման և անցկացման Դեպարտամենտ, Ստորաբաժանում) իրավունք ունի մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ուսումնասիրմանը, գնահատմանը և համադրմանը ներգրավել մասնագետների՝ Կազմակերպչի («Գազպրոմ» ՀԲԸ, «Գազպրոմ» ՓԲԸ), Պատվիրատուի, գնման առարկայով հատուկ գիտելիքներին տիրապետող կողմնակի անձանց պրոֆիլային, կառուցվածքային ստորաբաժանումներին:

7.8.6 Կազմակերպիչը մրցակցային գնման փաստաթղթերով (գնանմուշների հարցման անցկացման մասին հայտարարությամբ) սահմանված կարգով և ձևով տեղեկացնում է մասնակցին, ում հետ պլանավորվում է կնքել պայմանագիր Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման համաձայն մրցակցային գնման արդյունքներով հաղթողի որոշման մասին:

7.8.7 Այն դեպքում, եթե մրցակցային գնմանը մասնակցության արդյունքների գնահատման համադրման արդյունքներով մի քանի հայտերին տրված է միավորների հավասար քանակ, ապա նվազագույն հերթական համարը տրվում է (վերջնական առաջարկին) ավելի շուտ ներկայացված մրցակցային գնմանը մասնակցության հայտին:

7.8.8 Հայտերի ուսումնասիրման դեպքում հաշվի չեն առնվում մրցակցային գնման մասին փաստաթղթերի անբաժանելի մասը հանդիսացող պայմանագրի նախագծի փոփոխման, ինչպես նաև պայմանագրի գնի (մրցակցային գնումների մասնակցի գնային առաջարկի) ձևակերպման կարգի նկատմամբ մրցակցային գնման մասին փաստաթղթերով (պայմանագրի առանձին պայմաններով) նախատեսված պահանջների մասին մրցակցային գնման մասնակիցների առաջարկները:

7.9. Մրցակցային գնումների ընթացքում կազմվող արձանագրություններ: Ամփոփիչ արձանագրություն

7.9.1. Մրցակցային գնման (մրցակցային գնման փուլի արդյունքներով) ընթացքում կազմված արձանագրությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

7.9.1.1. Արձանագրության ստորագրման ամսաթիվը:

7.9.1.2. Մրցակցային գնման (մրցակցային գնման փուլի) մասնակցության ներկայացված հայտերի քանակը, ինչպես նաև յուրաքանչյուր նման հայտի գրանցման ամսաթիվը և ժամանակը:

7.9.1.3. Մրցակցային գնման մասնակցության հայտերի ուսումնասիրության

արդյունքները (այն դեպքում, եթե մրցակցային գնման փուլի համար նախատեսված է նման հայտերի ուսումնասիրության և մերժման հնարավորություն) այդ թվում նշելով՝

մերժված մասնակցության հայտերի քանակը,

մրցակցային գնմանը մասնակցության յուրաքանչյուր հայտի մերժման հիմքը՝ նշելով մրցակցային գնման մասին փաստաթղթերի դրույթները, գնանշման հարցման մասին հայտարարության դրույթները, որոնց չի համապատասխանել նման հայտը;

7.9.1.4. Մրցակցային գնման մասնակցության հայտերի ուսումնասիրության արդյունքները՝ նման հայտերը մրցակցային գնումների մասին փաստաթղթերին (գնանշումների հարցման կատարման մասին հայտարարությանը) համապատասխանության մասին Հանձնաժողովի եզրափակիչ որոշման նշմամբ, ինչպես նաև նման հայտերին հայտերի գնահատման համար նախատեսված յուրաքանչյուր չափանիշի համաձայն նշանակության տրամադրման մասին ներին (եթե մրցակցային գնման փուլով նախատեսված է նման հայտերի գնահատում):

7.9.1.5. Մրցակցային գնումը չկայացած ճանաչելու պատճառները, եթե այն այդպիսին է ճանաչվել:

7.9.1.6. 7.5.14 կետին համաձայն գնման յուրաքանչյուր մասնակցին շնորհված անհատականացնող համարը:

7.9.1.7. Այլ տեղեկատվություն, եթե մրցակցային գնման իրականացման ընթացքում դրանց նշումը արձանագրության մեջ նախատեսված է սույն Կարգով:

7.9.2.2. Ամփոփիչ արձանագրությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

7.9.2.1. Արձանագրության ստորագրման ամսաթիվը

7.9.2.2. Մրցակցային գնմանը ներկայացված մասնակցության հայտերի քանակը, ինչպես նաև այդ հայտերի գրանցման ամսաթիվը և ժամանակը:

7.9.2.3. 7.5.14 կետին համաձայն մասնակցին, ում հետ նախատեսվում է կնքել պայմանագիր, անհատականացնող համարը:

7.9.2.4. Գնման մասնակիցների հայտերի հերթական համարները, գնման մասնակիցների վերջնական առաջարկությունները՝ դրանցում պարունակվող պայմանագրի կատարման պայմանների շահավետության աստիճանի նվազեցման կարգով, ներառյալ գնման մասնակիցների գնային առաջարկությունների և (կամ) լրացուցիչ գնային առաջարկությունների մասին տեղեկատվությունը:

7.9.2.5. Մրցակցային գնման մասնակցության հայտերի, վերջնական առաջարկությունների (եթե գնման մասին փաստաթղթերով, գնման մասին հայտարարությունով գնման վերջին փուլում նախատեսված է նման հայտերի, վերջնական առաջարկությունների ուսումնասիրության և մերժման հնարավորություն) ուսումնասիրության արդյունքները, այդ թվում նշելով՝

մերժված մրցակցային գնման մասնակցության հայտերի, վերջնական առաջարկությունների քանակը

մրցակցային գնմանը մասնակցության յուրաքանչյուր հայտի մերժման հիմքը՝ նշելով մրցակցային գնման մասին փաստաթղթերի դրույթները, գնանշման հարցման մասին

հայտարարության դրույթները, որոնց չի համապատասխանել նման հայտը, վերջնական առաջարկը:

7.9.2.6. Մրցակցային գնման մասնակցության հայտերի, վերջնական առաջարկությունների ուսումնասիրության արդյունքները (եթե մրցակցային գնման մասին փաստաթղթերով մրցակցային գնման վերջին փուլում նախատեսված է հայտերի, վերջնական առաջարկությունների գնահատում)՝ նշելով Հնանձնաժողովի որոշումը, որով յուրաքանչյուր հայտին, յուրաքանչյուր վերջնական առաջարկությանը շնորհվում է նշնակություն նման հայտերի գնահատման նախատեսված չափանիշներից յուրաքանչյուրով (եթե մրցակցային գնման փուլով նախատեսված է նման հայտերի գնահատում):

7.9.2.7. Մրցակցային գնումը չկայացած ճանաչելու պատճառները, եթե այն այդպիսին է ճանաչվել:

7.9.2.8. Մրցակցային գնման արդյունքներով Հանձնաժողովի որոշման կայացման ամսաթիվը:

7.9.2.9. 7.5.14 կետին համաձայն գնման յուրաքանչյուր մասնակցին շնորհված անհատականացնող համարը (առանց նշելու նման մասնակիցների անվանումը և գտնվելու վայրը (իրավաբանական անձանց համար), ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը (ֆիզիկական անձանց համար):

7.9.2.10. Այլ տեղեկություններ, եթե արձանագրությունում դրանց նշման անհրաժեշտությունը սահմանված է սույն Կարգով:

7.9.3. Մրցակցային գնման ընթացքում կազմվող արձանագրությունը և ամփոփիչ արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, Հանձնաժողովի քարտուղարի և հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

7.9.4. Պատվիրատուն (Կազմակերպիչը) ապահովում է մրցակցային գնման ընթացքում կազմված արձանագրությունների և ամփոփիչ արձանագրությունների տեղադրումը («Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի կնքման վերաբերյալ որոշման հայտարարություն) տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան դրանց ստորագրումից հետո երեք օր անց:

7.9.5. Մրցակցային գնման ընթացքում կազմվող արձանագրությունները, ինչպես նաև մրցակցային գնման ամփոփիչ արձանագրությունները, մրցակցային գնմանը մասնակցության հայտերը, մրցակցային գնման մասին փաստաթղթերը, գնանշման հարցման հայտարարությունը, մրցակցային գնման փաստաթղթերում կատարվող փոփոխությունները, մրցակցային գնման մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումները Պատվիրատուն պահում է երեք տարի:

7.10. Մրցակցային գնումների մասնակցության հայտի ապահովում

7.10.1. Պատվիրատուն չի սահմանում մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովման պահանջ, եթե պայմանագրի նախնական (առավելագույն) գինը չի գերազանցում 12.0 մլն. դրամը (առանց ԱԱՀ): Եթե պայմանագրի նախնական (առավելագույն) գինը գերազանցում է 12.0 մլն. դրամը (առանց ԱԱՀ), Պատվիրատուն

իրավունք ունի մրցակցային գնման մասին փաստաթղթերում սահմանել մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովման պահանջ ոչ ավել, քան պայմանագրի նախնական (առավելագույն) գնի հինգ տոկոսի չափով:

7.10.2. Մրցակցային գնման մասին հայտարարությունում, մրցակցային գնման մասին փաստաթղթերում պետք է նշվեն նման ապահովման չափը և ապահովմանը ներկայացվող այլ պահանջները, այդ թվում՝ բանկային երաշխիքի պայմանները (եթե մրցակցային գնմանը մասնակցության հայտի ապահովման նման եղանակ նախատեսված մրցակցային գնման մասին փաստաթղթերով սույն Կարգի համաձայն): Մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովումը կարող է մասնակցի կողմից տրամադրվել դրամական միջոցների մուտքագրման, բանկային երաշխիքի տրամադրման կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ ձևով, բացառությամբ 8.14 կետի համաձայն գնման կատարումը: Պատվիրատուի կողմից գնման հայտարարության, մրցակցային գնման մասին փաստաթղթերով նախատեսված ապահովման եղանակներից մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովման միջոցն ընտրում է գնման մասնակիցը:

7.10.3. Մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովման վերադարձը գնման մասնակցին չի իրականացվում հետևյալ դեպքերում՝

7.10.3.1. Գնման մասնակցի խուսափելը կամ հրաժարվելը պայմանագրի կնքումից:

7.10.3.2. Պատվիրատուին պայմանագրի կատարման ապահովման չտրամադրումը կամ սույն Կարգով և մրցակցային գնման մասին փաստաթղթերով նախատեսված պայմանների խախտմամբ տրամադրումը (եթե մրցակցային գնման մասին հայտարարությունում, մրցակցային գնման մասին փաստաթղթերում սահմանված է նախքան պայմանագրի կնքումը դրա կատարման ապահովում տրամադրելու պահանջը և ապահովման տրամադրման ժամկետները):

7.10.4. Որպես մրցակցային գնման մասնակցության հայտի ապահովում մուտքագրված դրամական միջոցները վերադարձվում են գնման մասնակցի հաշվեհամարին մրցակցային գնման կատարման դեպքում ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման կատարման դեպքում դադարում է էլեկտրոնային հարթակում դրամական միջոցների արգելափակումը էլեկտրոնային հարթակի կանոնակարգով նախատեսված կարգով ոչ աշխատանքային օրվա ընթացքում հետևյալ հանգամանքներից որևէ մեկի վրա հասնելու պահից՝

7.10.4.1. Ամփոփիչ արձանագրության ստորագրումը: Ընդ որում, վերադարձը կամ արգելափակման վերացումը կատարվում է գնման բոլոր մասնակիցների դրամական միջոցների նկատմամբ, բացառությամբ հաղթողի, ում այդ դրամական միջոցները վերադարձվում են կամ այդ միջոցների արգելափակումը վերացվում է պայմանագրի կնքման դեպքում:

7.10.4.2. Մրցակցային գնման չեղարկումը:

7.10.4.3. Գնման մասնակցի հայտի մերժումը:

7.10.4.4. Նախքան հայտերի ներկայացման ժամկետի ավարտը մասնակցի կողմից հայտի հետ կանչումը:

7.10.4.5. Հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո մրցակցային գնման մասնակցության հայտ ստանալը:

7.10.4.6. Մրցակցային գնման գործընթացի ավարտը առանց պայմանագրի կնքման:

7.11. Մրցակցային գնման արդյունքներով պայմանագրի կնքում և կատարում

7.11.1. Մրցակցային գնման արդյունքներով պայմանագիրը (գրավոր) կնքվում է ամփոփիչ արձանագրությունում որոշված մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ (այսուհետ նաև՝ հաղթող) մրցակցային գնման մասին փաստաթղթերով նշված պայմաններով, պայմանագրի գնով/ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) միավորի գներով, որոնք նշված են ամփոփիչ արձանագրությունում և հաղթողի վերջնական գնառաջարկում, որը ներկայացվել է մրցակցային գնման մասնակցության հայտի կազմում: Մրցակցային գնման արդյունքներով որոշված հաղթողը մրցակցային գնման մասին փաստաթղթերով սահմանված ժամկետում և/կամ մրցակցային ընտրության արդյունքների մասի ծանուցման մեջ նշված ժամկետի ընթացքում պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել մրցակցային գնման մասին փաստաթղթերում նշված պայմաններով պայմանագրի՝ իր կողմից ստորագրված տեքստը:

Մրցակցային գնման արդյունքներով պայմանագիրը կնքվում է ոչ շուտ, քան մրցակցային գնման արդյունքներով կազմված ամփոփիչ արձանագրությունը տեղեկատվական համակարգում տեղադրելուց հետո (պայմանագրի կնքման վերաբերյալ որոշման հայտարարությունից) տաս և ոչ ուշ, քան քսան օրվա ընթացքում, աիկ այլ ընթացակարգերի դեպքում՝ ոչ շուտ, քան հինգ օրվա ընթացքում (անգործության ժամկետ), և ոչ ուշ, քան ամփոփիչ արձանագրությունը տեղեկատվական համակարգում տեղադրելուց («Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի կնքման վերաբերյալ որոշման հայտարարություն) հետո քսան օրվա ընթացքում:

Անգործության ժամկետ չի կարառվում, եթե հայտ է ներկայացվել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

7.11.2. Եթե մրցակցային գնման մասին փաստաթղթերում սահմանվել է պայմանագրի կատարման ապահովման պահանջ, մրցակցային գնման մասնակիցը, ում հետ կնքվում է պայմանագիրը, պայմանագրով սահմանված ժամկետում պետք է Պատվիրատուին տրամադրի պայմանագրի կատարման ապահովում: Պայմանագրի կատարման ապահովումը տրամադրվում է մրցակցային գնման մասին փաստաթղթերով նախատեսված չափով և ձևով:

7.11.3. Մրցակցային գնման արդյունքներով Պատվիրատուն իրավունք ունի պայմանագիր կնքելու այդպիսի գնման մի քանի մասնակիցների հետ:

7.11.4. Մրցակցային գնման մի քանի մասնակիցների հետ պայմանագրերը կնքվում են սույն Կարգի և մրցակցային գնման մասին փաստաթղթերի պայմաններին համաձայն՝ հաշվի առնելով հետևյալը՝

Մրցակցային գնման մասին փաստաթղթերում նշվում է գնման մասնակիցների (հաղթողների) քանակը, ում հետ նախատեսվում է կնքել պայմանագրեր և/կամ,

Մրցակցային գնման մասին փաստաթղթերում նշվում է մրցակցային գնման առարկայի

ծավալի բաշխումը գույքային և/կամ դրամակար արտահատությամբ գնման մասնակիցների (հաղթողների) միջև:

Մրցակցային գնման մասին փաստաթղթերով կարող են սահմանվել գնման մի քանի մասնակիցների (հաղթողների) հետ պայմանագրերի կնքման այլ առանձնահատկություններ:

7.11.5. Եթե հաղթող է ճանաչվել մրցակցային գնման մասնակիցը, ում կողմում հանդես են գալիս մի քանի իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, Պատվիրատուն մեկ պայմանագիր է կնքում բոլոր իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հետ, որոնք հանդես են գալիս գնման նման մասնակցի կողմում, ընդ որում, անմիջականորեն պայմանագրի կնքումը կարող է կատարվել մեկ անձի կողմից, ով ունի համապատասխան լիազորություններ:

7.11.6. Եթե մրցակցային գնման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը սահմանված ժամկետում Պատվիրատուին չի տրամադրել իր կողմից ստորագրված պայմանագրի տեքստը 7.11.1 կետին համաձայն, կամ պայմանագրի կատարման ապահովումը, եթե նման պահանջ սահմանված է եղել մրցակցային գնման մասին փաստաթղթերով, համարվում է, որ նա խուսափել է պայմանագիրը կնքելուց:

7.11.7. Մրցակցային գնումների արդյունքում կնքված պայմանագրի գինը/ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անհատական գնանշումները պետք է ձևավորվեն մրցակցակցային գնումների մասին փաստաթղթերի պահանջներին համապատասխան և չեն կարող գերազանցել պայմանագրի գնի (լոտի գինը) նախնական (առավելագույն) արժեքը / Գազակերպչի (Պատվիրատու) կողմից մրցակցային գնման մասին փաստաթղթերում սահմանված ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անհատական գնանշումները, ինչպես նաև պայմանագրի հժգինը/ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) միավորի արժեքը, որոնք նշված են ամփոփիչ արձանագրությունում և հաղթողի վերջին գնային առաջարկության մեջ, որը նա ներկայացրել է մրցակցային գնման մասնակցության իր հայտի կազմում, և կարող են նվազեցվել կողմերի համաձայնությամբ:

7.11.8. Պայմանագրի կատարումն իրականացվում է դրա պայմաններին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

8. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԳՆՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Էլեկտրոնային եղանակով մրցակցային գնումը անցկացվում է 7-րդ բաժնում սահմանված մրցակցային գնման նախապատրաստման և իրականացման կարգին համաձայն և սույն բաժնով և Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային հարթակում:

8.2. Էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման կատարման դեպքում մասնակիցների կողմից նման մրցակցային կատարման մասին հայտարարության դրույթների պարզաբանումների տրման և (կամ) մրցակցային գնման մասին

փաստաթղթերի պարզաբանման հարցման ներկայացումը, նման պարզաբանումները տեղեկատվական համակարգում տեղադրումը, մրցակցային գնման մասնակիցների կողմից էլեկտրոնային եղանակով մրցակցային գնմանը մասնակցության էլեկտրոնային հայտերի, վերջնական առաջարկների ներկայացումը, Հանձնաժողովին նշված հայտերին հասանելիության տրամադրումը, էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասնակիցների գնային առաջարկների, լրացուցիչ գնային առաջարկների համադրումը, գնման կատարման ընթացքում կազմվող արձանագրությունների նախագծերի կազմումը ապահովվում են էլեկտրոնային հարթակի օպերատորի կողմից էլեկտրոնային հարթակում:

8.3. էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասնակցին նման գնմանը մասնակցելու համար անհրաժեշտ է էլեկտրոնային հարթակի օպերատորի կողմից սահմանված կարգով ստանալ հավատարմագրում էլեկտրոնային հարթակի վրա:

8.4. էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասնակցի, Պատվիրատուի, Կազմակերպչի և էլեկտրոնային հարթակի օպերատորի միջև էլեկտրոնային հարթակում հավատարմագրման ստացման հետ կապված տեղեկատվության, էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման կատարման մասին տեղեկատվության փոխանակումն իրականացվում է էլեկտրոնային հարթակում՝ ուժեղացված որակավորված էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով:

8.5. էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման անցկացման հայտարարությունում և էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման փաստաթղթերում, բացի 7-րդ բաժնում նշված տեղեկությունների պետք է լինեն Պատվիրատուին (Կազմակերպչին) էլեկտրոնային եղանակով մրցակցային գնմանը մասնակցության հայտերի բովանդակության, վերջնական առաջարկների հասանելիության բացման ժամկետների, եզրափակիչ արձանագրության ձևավորման փուլի բացման մասին տեղեկություններ:

8.6. Կազմակերպչին, Հանձնաժողովին գնման մասնակիցների հայտերին, վերջնական առաջարկներին հասանելիության բացումը ապահովվում է էլեկտրոնային հարթակի օպերատորի կողմից միաժամանակ Պատվիրատուին նման հայտերի, նման վերջնական առաջարկների նկատմամբ հասանելիություն տրամադրելով (բացելով): էլեկտրոնային հարթակի օպերատորը ապահովում է Պատվիրատուին, Կազմակերպչին, Հանձնաժողովին էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասնակիցների գնային առաջարկների, լրացուցիչ գնային առաջարկների (եթե լրացուցիչ գնային առաջարկների ներկայացումը նախատեսված է էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման անցկացման հայտարարությունում և էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման փաստաթղթերով) նկատմամբ հասանելիություն՝ եզրափակիչ արձանագրության ձևավորման փուլի բացման պահից:

8.7. էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման արդյունքների ամփոփման ամսաթիվն ավելի ուշ ժամկետի տեղափոխման դեպքում նման գնման մասնակիցներին ուղղված էլեկտրոնային հարթակի ինքնաշխատ ծանուցման մեջ պետք է առկա լինի գնի նվազեցմամբ (բացառությամբ աճուրդները) նոր գնային առաջարկի ներկայացման հնարավորության մասին նշում:

8.8. Եզրափակիչ արձանագրության կազմման փուլում Հանձնաժողովը ուսումնասիրում

է հայտերը, իրականացնում է հայտերի գնահատում և համադրում, ինչպես նաև ընդունում է որոշում, այդ թվում նաև էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման արդյունքների և հաղթող ճանաչելու մասին:

8.9. Գնային առաջարկների համադրումն իրականացվում է էլեկտրոնային հարթակի ծրագրային և ապարատային միջոցներ օգտագործելով՝ եզրափակիչ արձանագրությունը կազմելիս: Գնային առաջարկների համադրման արդյունքները Պատվիրատուն (Կազմակերպիչը) հայտնում է Հանձնաժողովին եզրափակիչ արձանագրության կազմման փուլում:

8.10. Այն դեպքում, երբ էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման հայտարարությունով և էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասին փաստաթղթերով նախատեսված է նոր գնային առաջարկների, լրացուցիչ գնային առաջարկների տրամադրում, դրանց համադրումն իրականացվում է եզրափակիչ արձանագրության կազմման ժամանակ: Ընդ որում, լրացուցիչ գնային առաջարկների համադրումն իրականացվում է էլեկտրոնային հարթակի ծրագրային և ապարատային միջոցների օգտագործմամբ: Նման գնային առաջարկների համադրման արդյունքները Պատվիրատուն (Կազմակերպիչը) հայտնում է Հանձնաժողովին եզրափակիչ արձանագրության կազմման փուլում:

8.11. Այն դեպքում, եթե էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասին փաստաթղթերով նախատեսված է, որ նման գնման մասնակիցն իրավունք ունի նվազեցնել իր կողմից հայտարարված գինը՝ տալով նոր գնային առաջարկ, և գնման մեկ կամ մի քանի մասնակիցներ օգտագործել են նման իրավունքը, գնային առաջարկների համադրումը՝ հաշվի առնելով նոր տրված գնային առաջարկները, համադրումն իրականացվում է էլեկտրոնային հարթակի ծրագրային և ապարատային միջոցների օգտագործմամբ՝ եզրափակիչ արձանագրության կազմման ժամանակ: Նման գնային առաջարկների համադրման արդյունքները Կազմակերպիչը հայտնում է Հանձնաժողովին եզրափակիչ արձանագրության կազմման ժամանակ:

8.12. Եզրափակիչ արձանագրության կազմումն իրականացվում է Պատվիրատուի (Կազմակերպիչի) կողմից՝ օգտագործելով էլեկտրոնային հարթակի ծրագրային և ապարատային միջոցները:

8.13. Էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման մասնակիցը, ով նման գնմանը մասնակցության հայտ է ներկայացրել, իրավունք ունի ետ կանչել տվյալ հայտը կամ փոփոխություններ մտցնել դրանում, նման գնմանը մասնակցելու հայտեր ներկայացնելու ժամկետի ավարտման ամսաթվից ոչ ուշ՝ այդ մասին ծանուցում ուղարկելով էլեկտրոնային հարթակի օպերատորին:

8.14. Կետը հանված է:

9. ՓԱԿ ՄՐՑԱԿԳՅԱԿԻՆ ԳՆՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Փակ մրցակցային գնում, փակ աճուրդ, գնանշումների փակ հարցում, առաջարկների փակ հարցում կամ փակ եղանակով իրականացվող այլ մրցակցային գնումը անցկացվում է այն դեպքում, եթե նման գնման մասին տեղեկությունները հանդիսանում են

պետական գաղտնիք:

9.2. Փակ մրցակցային գնումը անցկացվում է 7-րդ բաժնով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն բաժնով նախատեսված առանձնահատկությունները:

9.3. Փակ մրցակցային գնման մասին տեղեկությունը ենթակա չէ տեղադրման տեղեկատվական համակարգում: Ընդ որում, մրցակցային գնման հայտարարությունները, մրցակցային գնման մասին փաստաթղթերը տեղեկատվական համակարգում տեղադրման համար սահմանված ժամկետներում պատվիրատուն ուղարկում է փակ մրցակցային գնմանը մասնակցության հրավերներ՝ կցելով մրցակցային գնման մասին փաստաթղթերը ոչ պակաս, քան երկու անձանց, որոնք կարող են իրականացնել փակ մրցակցային գնման առարկա հանդիսացող ապրանքների մատակարարում, աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում: Փակ մրցակցային գնման մասին այլ տեղեկություն և փակ մրցակցային գնման անցկացման ընթացքում կազմվող փաստաթղթերը սույն Կարգով սահմանված կարգով ուղարկվում են փակ մրցակցային գնման մասնակիցներին: Փակ մրցակցային գնման մասնակիցը փակ ծրարով ներկայացնում է մրցակցային գնմանը մասնակցության հայտ մինչև ծրարի բացումը դրա բովանդակությունը տեսնել թույլ չտվող փակ ծրարով:

9.4. Էլեկտրոնային եղանակով փակ մրցակցային գնումը անցկացվում է 7-րդ և 8-րդ բաժիններով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն բաժնով նախատեսված առանձնահատկությունները:

9.5. Էլեկտրոնային եղանակով փակ մրցակցային գնման անցկացման դեպքում մրցակցային գնման անցկացման, մրցակցային գնման մասին ծանուցումները տեղեկատվական համակարգում տեղադրելու համար սահմանված ժամկետներում պատվիրատուն ուղարկում է փակ մրցակցային գնմանը մասնակցության հրավերներ՝ կցելով մրցակցային գնման մասին փաստաթղթերը, ոչ պակաս քան երկու անձանց, ովքեր կարող են իրականացնել փակ մրցակցային գնման առարկա հանդիսացող ապրանքների մատակարարում, աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում՝ նշելով էլեկտրոնային հարթակի հասցեն, օգտագործելով ծրագրային և ապարատային միջոցներ, որոնցով անցկացվելու է գնումը: Անձանց ցուցակը, ում ուղարկվում է փակ մրցակցային գնման մասնակցելու հրավեր, ձևավորվում է Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից:

9.6. Փակ մրցակցային գնումը կարող է անցկացվել սույն Կարգով նախատեսված միջոցներով՝ համապատասխան միջոցի համար նախատեսված փուլերով, գնումների ընփացակարգերով:

10. ՄՐՑՈՒՅԹ

10.1. Բաց մրցույթի անցկացման կարգը

10.1.1. Բաց մրցույթի անցկացման ընհանուր կարգը սահմանվում է 7-րդ բաժնի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման համար 8-րդ բաժնով նախատեսված առանձնահատկություններով:

10.1.2. Պատվիրատուն (Կազմակերպիչը) տեղեկատվական համակարգում տեղադրում

է մրցույթի անցկացման մասին հայտարարություն և մրցութային փաստաթղթերը մրցույթին մասնակցելու հայտերի տրման ժամկետի ավարտի ամսաթվից ոչ շուտ քան տասնհինգ օր առաջ:

10.1.3. Մրցույթի անցկացման մասին հայտարարությունը ձևակերպվում է 7.2. կետի պահանջների համաձայն, մրցութային փաստաթղթերը՝ 7.3 կետի համաձայն:

10.1.4. Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից կարող է տեղադրվել մրցույթին մասնակցության հայտի ապահովման պահանջ, որի տրամադրման չափը, ձևը և կարգը նշվում են մրցութային փաստաթղթերի մեջ:

10.1.5. Պատվիրատուն (Կազմակերպիչը) տեղեկատվական համակարգում բաց մրցույթի մասին հայտարարությունը տեղադրելուց հետո իրավունք ունի բաց մրցույթին մասնակցության հարվերները ուղարկել մրցույթի հնարավոր մասնակիցներին:

10.1.6. Մրցույթի մասնակիցը մրցույթին մասնակցության հայտ է ներկայացնում մրցութային փաստաթղթերում նշված մրցույթին մասնակցության հայտի բովանդակությանը, ձևակերպմանը և կազմին համաձայն:

10.1.7. Պատվիրատուն, Կազմակերպիչը սեփական նախաձեռնությամբ կամ անցկացման մասին հայտարարության և/կամ մրցութային փաստաթղթերի մեջ փոփոխություն մտցնելու մասին որոշում ընդունել: Մրցույթի առարկայի փոփոխություն չի թույլատրվում:

10.1.8. Մրցույթի անցկացման չեղարկման մասին որոշում ընդունելու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում, Կազմակերպչի կողմից (այն դեպքում, եթե ծրարի վրա նշված չեն գնման մասնակցի փոստային հասցեն (իրավաբանական անձի համար) կամ բնակության վայրի մասին տեղեկությունները (ֆիզիկական անձի համար)) բացվում են մրցույթին մասնակցության հայտերի ծրարները:

10.2. Մրցույթը չկայացած հայտարարելը

10.2.1. Հանձնաժողովի կողմից մրցույթը հայտարարվում է չկայացած 7.8.2. կետով նախատեսված դեպքերում:

10.2.2. Հանձնաժողովը հայտարարում է մրցույթը չկայացած, եթե մրցույթին մասնակցել է միայն մեկ մասնակից (ներկայացվել է մրցույթին մասնակցության միայն մեկ հայտ կամ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրման արդյունքներով չի մերժվել մրցույթին մասնակցության միայն մեկ հայտ): Այս դեպքում, Կազմակերպիչը իրավունք ունի հայտարարել գնման նոր ընթացակարգ կամ խորհուրդ տալ Պատվիրատուին մրցույթի միակ մասնակցի հետ կնքել պայմանագիր 17.1.7. կետի համաձայն:

10.3 Առանձին փուլերի ներառմամբ էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման առանձնահատկությունները

10.3.1. Առանձին փուլերի ներառմամբ էլեկտրոնային եղանակով մարցույթը (այսուհետ նաև 10.3 կետի նպատակների համար՝ Փուլային մրցույթ) կարող է ներառել հետևյալ փուլերը (բոլորը միաժամանակ կամ մեկը կամ ստորև թվարկված փուլերից մի քանիսը):

10.3.1.1. Մինչև էլեկտրոնային եղանակով մրցույթին մասնակցելու հայտերի

ներկայացման ժամկետի ավարտը Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից գնման մասնակիցների հետ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գործառնության ընթացքների (սպառողական հատկությունների) և պայմանագրի կատարման այլ պայմանների քննարկման անցկացում՝ էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման մասին ծանուցման, մրցույթի մասին փաստաթղթերի, պայմանագրի նախագծի մեջ գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների պահանջվող ընթացքների (սպառողական հատկությունների) ճշգրտման նպատակով:

10.3.1.2. Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի և էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների հայտերում առկա պայմանագրի կատարման այլ պայմանների գործառնության ընթացքների (սպառողական հատկությունների) դրույթների քննարկում՝ էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման մասին ծանուցման, մրցույթի մասին թղթաբանության, գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների պահանջվող ընթացքների (սպառողական հատկությունների) պայմանագրի նախագծի մեջ ճշգրտման նպատակով:

10.3.1.3. Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի և պայմանագրի կատարման այլ պայմանների գործառնության ընթացքների (սպառողական հատկությունների) մասին վերջնական առաջարկներ պարունակող նման մրցույթին մասնակցության էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրում և գնահատում:

10.3.1.4. Էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների որակավորման ընթացակարգի անցկացում:

10.3.1.5. Էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների պայմանագրի գնի, ապրանքների շահագործման և վերանորոգման ծախսերի նվազեցման, աշխատանքների լրացուցիչ գնային առաջարկների համադրում, աշխատանքների, ծառայությունների արդյունքների օգտագործում:

10.3.2. Փուլային մրցույթի անցկացման հայտարարության մեջ պետք է սահմանված լինեն նման մրցույթի յուրաքանչյուր փուլի անցկացման ժամկետները:

10.3.3. Փուլային մրցույթի յուրաքանչյուր փուլի արդյունքներով կազմվում է առանձին արձանագրություն: Վերջին փուլի ավարտին, որի արդյունքներով սահմանվում է հաղթողը, կազմվում է եզրափակիչ արձանագրություն:

10.3.4. 10.3.1.1 և 10.3.1.2 կետերով նախատեսված փուլերն անցկացվում են հաշվի առնելով հետևյալը՝

10.3.4.1. Եթե էլեկտրոնային եղանակով մրցույթն իր մեջ ներառում է 10.3.1.1 և 10.3.1.2 կետերով նախատեսված փուլեր, տվյալ փուլերի արդյունքներով կազմված արձանագրություններում Պատվիրատուն (Կազմակերպիչը) նշում է այդ թվում նաև գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի և պայմանագրի կատարման այլ պայմանների գործառնության ընթացքների (սպառողական հատկությունների) ճշգրտման անհրաժեշտության կամ նման ճշգրտման անհրաժեշտության բացակայության մասին իր կողմից ընդունված որոշման մասին տեղեկություն:

10.3.4.2. Մրցութային փաստաթղթերի մեջ պետք է նախատեսվեն Պատվիրատուին

պահանջվող գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի և պայմանագրի կատարման այլ պայմանների գործառնությանին բնութագրերը (սպառողական հատկությունները), որոնց ճշգրտումը հնարավոր է սույն բաժնի կողմից նախատեսված կարգով համապատասխան փուլերի անցկացման արդյունքներով:

10.3.4.3. Էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների հետ իրենց հայտերում առկա ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի և պայմանագրի կատարման այլ պայմանների գործառնությանին բնութագրերի (սպառողական հատկություններին) քննարկումը, 10.3.1.2 կետով նախատեսված փուլում իրականացվում է էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների հետ՝ էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման հայտարարության և մրցույթի մասին փաստաթղթերի մեջ նշված համապատասխան պահանջներով:

10.3.1.2 կետով նախատեսված փուլի անցկացման դեպքում՝ էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման հայտարարության և մրցույթի մասին փաստաթղթերի մեջ նշված պահանջներին համապատասխանող էլեկտրոնային եղանակով մասնակիցների ցանկը ձևավորվում է Կազմակերպչի կողմից Պատվիրատուի պահանջներին գնման մասնակիցների համապատասխանության մասին իրենց հայտերում առկա տեղեկությունների համաձայն:

Առաջարկների քննարկմանը սահմանված պահանջներին համապատասխանող, էլեկտրոնային եղանակով մրցույթի բոլոր մասնակիցների մասնակցության հավասար հասանելիության ապահովման և Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից «Առևտրային գաղտնիքի մասին» դրույթի պահպանման նպատակով, Պատվիրատուն (Կազմակերպիչը) ուղարկում է էլեկտրոնային հարթակի օպերատորին՝

քննարկմանը թույլատրված էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների ցանկը;

քննարկմանը թույլատրված էլեկտրոնային եղանակով մասնակիցների համար նման քննարկմանը մասնակցելու հրավեր;

առևտրային գաղտնիքի պահպանման մասին համաձայնագրի նախագիծ, որը պետք է ստորագրեն քննարկմանը թույլատրված մասնակիցները:

10.3.4.4. 10.3.1.1 կամ 10.3.1.2 կետերով նախատեսված փուլերի անցկացման արդյունքներով Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի և պայմանագրի կատարման այլ պայմանների գործառնությանին բնութագրերի (սպառողական հատկություններին) ճշգրտման անհրաժեշտության մասին որոշման ընդունման դեպքում՝

Պատվիրատուն (Կազմակերպիչը) սահմանում է էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների վերջնական առաջարկների ներկայացման ժամկետը և էլեկտրոնային եղանակով մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված ժամկետներում տեղադրում է տեղեկատվական համակարգում մրցույթի անցկացման մասին ճշգրտված հայտարարություն և մրցույթի մասին ճշգրտված փաստաթղթեր, դրանցում նշելով վերջնական առաջարկների ներկայացման ժամկետի ավարտման ամսաթիվը և ժամը:

Հանձնաժողովն առաջարկում է էլեկտրոնային եղանակով մրցույթի բոլոր մասնակիցներին ներկայացնել վերջնական առաջարկները՝ հաշվի առնելով գնվող

ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի և պայմանագրի կատարման այլ պայմանների գործառնությանը (սպառողական հատկությունները);

Էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով մրցույթի յուրաքանչյուր առարկայի (լոտ) նկատմամբ մեկ վերջնական առաջարկ՝ ցանկացած ժամանակ Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման և մրցույթի մասին փաստաթղթերի մասին ճշգրտված հայտարարության տեղեկատվական համակարգում տեղադրման պահից մինչև մրցույթի մասին նման հայտարարությունով և փաստաթղթերով նախատեսված վերջնական առաջարկների ներկայացման վերջնական ժամկետի ամսաթիվը և ժամը:

Միաժամանակ, վերջնական առաջարկի ներկայացմամբ Կազմակերպիչը կարող է առաջարկել էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցներին ներկայացնել նոր գնային առաջարկներ: Նշված առաջարկը ներառվում է էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման ճշգրտված հայտարարության և էլեկտրոնային եղանակով մրցույթի մասին փաստաթղթերի մեջ:

10.3.4.5. Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման հայտարարության և մրցույթի մասին փաստաթղթերի մեջ ճշգրտում չմտցնելու մասին որոշում կայացնելու դեպքում, այդ որոշման մասին տեղեկությունը նշվում է էլեկտրոնային եղանակով մրցույթի փուլերի տվյալներով կազմվող արձանագրության մեջ: Ընդ որում, էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցները չեն ներկայացնում վերջնական առաջարկներ:

10.3.4.6. Տեղեկատվական համակարգում 10.3.1.1 և 10.3.1.2 կետերով նախատեսված էլեկտրոնային եղանակով մրցույթի փուլի արդյունքներով կազմվող արձանագրության տեղադրումից հետո, էլեկտրոնային եղանակով մրցույթի ցանկացած մասնակից իրավունք ունի հրաժարվել էլեկտրոնային եղանակով մրցույթում հետագա մասնակցությունից: Նման հրաժարումը արտահայտվում է էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակցի կողմից վերջնական առաջարկ չներկայացնելով:

10.3.5. Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից մրցույթի մասնակիցների կողմից նման մրցույթին մասնակցության ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի և պայմանագրի կատարման այլ պայմանների գործառնությանը (սպառողական հատկությունները) պարունակող հայտերի ուսումնասիրման և գնահատման փուլի անցկացման պահանջներ:

10.3.5.1. Հայտերի վերլուծությունների և մրցույթի մասնակիցների մասին տեղեկատվության ստուգման արդյունքներով, Կազմակերպիչը Հանձնաժողովին է ներկայացնում որոշում ընդունելու համար տեղեկատվություն, այդ թվում նաև մրցույթում մասնակցության հայտի մերժման վերաբերյալ առաջարկներ, սույն Կարգի, այդ թվում նաև 10.3.6 կետում նշված այլ հիմքերի համաձայն մրցույթի մասին փաստաթղթերի մեջ սահմանված պահանջներին մրցույթի մասնակցի անհամապատասխանության դեպքում:

10.3.6. Հայտերի վերլուծության և Կազմակերպչի կողմից անցկացված մրցույթի մասնակիցների վերաբերյալ տեղեկատվության ստուգման արդյունքներով, Հանձնաժողովը իրավունք ունի մերժելու մրցույթում մասնակցության հայտը, հետևյալ դեպքերում՝

10.3.6.1. Մրցույթին մասնակցության հայտի առարկայի անհամապատասխանությունը մրցույթի փաստաթղթերի մեջ նշված գնման առարկային, այդ թվում նաև քանակական ցուցանիշներով (մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքների ծավալի, մատուցվող ծառայությունների քանակի անհամապատասխանություն):

10.3.6.2. Մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված փաստաթղթերի բացակայության կամ նման փաստաթղթերում մրցույթի մասնակցի կամ գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին ոչ հավաստի տեղեկությունների առկայության դեպքում:

10.3.6.3. Մրցույթում մասնակցության հայտի ապահովման բացակայության դեպքում, եթե մրցույթի մասին փաստաթղթերի մեջ սահմանված է տվյալ պահանջը:

10.3.6.4. Մրցույթի մասին փաստաթղթերի մեջ առկա պայմանագրի նախագծի պայմանների հետ մրցույթի մասնակցի անհամաձայնության դեպքում:

10.3.6.5. Պայմանագրի (լոտի) սահմանված սկզբնական (առավելագույն) գինը գերազանցող պայմանագրի գնի (լոտի գնի) (գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) առաջարկի առկայության դեպքում:

10.3.6.6. Պատվիրատուին (Կազմակերպչին) մրցույթի մասնակցի կողմից Պատվիրատուի (Կազմակերպչի) գրավոր հարցումով մրցույթում մասնակցության նրա կողմից ներկայացված հայտի դրույթների գրավոր պարզաբանումների չներկայացման, այդ թվում նաև ակնհայտ թվաբանական սխալների ուղղման, բառերով և թվերով արտահայտված գումարների անհամապատասխանությունների, միասնական դրույքաչափը քանակին բազմապատկելու արդյունքում ստացված միասնական դրույքաչափի և ընդհանուր գումարի միջև անհամապատասխանությունների հետ անհամաձայնության դեպքում:

10.3.6.7. Անբարեխիղճ մատակարարների ռեեստրներում մրցույթի մասնակցի մասին տեղեկությունների առկայությունը, եթե մրցույթի մասին փաստաթղթերի մեջ սույն Կարգի համաձայն սահմանված է եղել նման պահանջ՝ նշելով անբարեխիղճ մատակարարների համապատասխան ռեեստրը:

10.3.6.8. Մրցույթի մասնակցի կողմից ներկայացված մրցույթում մասնակցության հայտում ոչ հավաստի տեղեկությունների հայտնաբերման, մրցույթի մասնակցի, ինչպես նաև պայմանագրի կատարման համար նրա կողմից ներգրավվող մրցույթի մասնակիցների, համակատարողների (ենթակապալառուների) նկատմամբ մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված պահանջների անհամապատասխանության, մրցույթի առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների նկատմամբ մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների անհամապատասխանության դեպքում:

10.3.7. Մրցույթի մասին փաստաթղթերով կարող են սահմանված լինել սույն Կարգին չհակասող մասնակիցների հայտերի մերժման լրացուցիչ հիմքեր:

10.3.8. Որակավորման ընթացակարգի փուլի անցկացման նկատմամբ պահանջները՝

10.3.8.1. Մրցույթի բոլոր մասնակիցներին ներկայացվում են մրցույթի մասին

փաստաթղթերով սահմանված որակավորման միասնական պահանջներ:

10.3.8.2. Մրցույթում մասնակցության հայտերի երկրորդ մասերը պետք է պարունակեն մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված, էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցների համապատասխանությունն որակավորման միասնական պահանջներին հաստատող մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված տեղեկություն և փաստաթղթեր:

10.3.8.3. Մրցույթի մասնակիցների հայտերը, որոնք չեն համապատասխանում որակավորման միասնական պահանջներին, մերժվում են Հանձնաժողովի կողմից 10.3.1.4. կետով նախատեսված փուլի արդյունքների անփոփոխ էնթաշրջանում:

10.3.9. Լրացուցիչ գնային առաջարկների գնահատման փուլի անցկացման նկատմամբ պահանջներ`

10.3.9.1. Էլեկտրոնային եղանակով մրցույթի մասնակիցներն իրավունք ունեն ներկայացնել լրացուցիչ գնային առաջարկներ` ի փոփոխումն իրենց կողմից ներկայացված գնային առաջարկների:

10.3.9.2. Լրացուցիչ գնային առաջարկների ներկայացումը կատարվում է էլեկտրոնային հարթակի վրա էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման հայտարարության և մրցույթի մասին փաստաթղթերի մեջ նշված օրը:

10.3.9.3. Մրցույթի մասնակիցները պետք է տեղեկացվեն էլեկտրոնային հարթակի օպերատորի կողմից մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված ժամկետներում և կարգով նման մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված բոլոր գնային առաջարկներից նվազագույն գնային առաջարկի մասին:

10.3.9.4. Մրցույթի մասնակիցները ներկայացնում են մեկ լրացուցիչ գնային առաջարկ, որը պետք է ավելի ցածր լինի նրանց կողմից նախկինում էլեկտրոնային եղանակով մրցույթում մասնակցության հայտի հետ միաժամանակ կամ վերջնական առաջարկի հետ միաժամանակ ներկայացված գնային առաջարկից (այն դեպքում, եթե նոր գնային առաջարկի ներկայացման հնարավորությունը վերջնական գնային առաջարկի հետ միաժամանակ սահմանված է էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման մասին ճշտված հայտարարությունով և մրցույթի մասին թղթաբանությամբ):

10.3.9.5. Եթե մրցույթի մասնակիցը չի փոխում իր գնային առաջարկը, նա իրավունք ունի չներկայացնելու լրացուցիչ գնային առաջարկ: Ընդ որում, իր կողմից նախկինում ներկայացված գնային առաջարկն ուսումնասիրվում է եզրափակիչ արձանագրություն կազմելիս:

10.4. Կետը հանված է:

10.5. Կետը հանված է:

10.6. Մրցույթի արդյունքներով պայմանագրի կնքումը և կատարումը

10.6.1. Մրցույթի արդյունքներով պայմանագիրը կնքվում է մրցույթի հաղթողի հետ, իսկ մրցույթի հաղթողի հրաժարման դեպքում կամ, եթե հաղթողը խուսափել է պայմանագրի կնքելուց կամ չի ներկայացրել պայմանագրի կատարման ապահովում, եթե մրցութային փաստաթղթերի մեջ սահմանված է եղել նման պահանջ, Պատվիրատուն իրավունք ունի

կնքելու պայմանագիր մրցույթի այլ մասնակցի հետ, որի հայտը պարունակում է մրցույթի այլ մասնակիցների նկատմամբ պայմանագրի կատարման ավելի լավ պայմաններ:

11. ԱՃՈՒՐԴ

11.1. Ընդհանուր դրույթներ

11.1.1. Բաց աճուրդի նախապատրաստման և անցկացման ընդհանուր կարգը սահմանվում է 7-րդ բաժնի համաձայն, էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման դեպքում, էլեկտրոնային եղանակով մրցույթի անցկացման համար 8-րդ բաժնով սահմանված առանձնահատկություններով:

11.1.2. Աճուրդների անցկացման միջոցով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնման դեպքում կարող են առանձնացվել լոտեր, որոնց նկատմամբ աճուրդի անցկացման մասին ծանուցման և աճուրդի մասին փաստաթղթերի մեջ առանձին նշվում են առարկան, նախնական (առավելագույն) գինը, ժամկետները և ապրանքների առաքման, աշխատանքների իրականացման կամ ծառայությունների մատուցման այլ պայմաններ: Որպես կանոն, յուրաքանչյուր լոտով կնքվում է առանձին պայմանագիր: Այն դեպքում, եթե մի քանի լոտով հաղթող է ճանաչվել աճուրդի նույն մասնակիցը, նման մասնակցի հետ կարող է կնքվել մեկ պայմանագիր մի քանի լոտով:

11.1.3. Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից կարող է սահմանվել աճուրդին մասնակցության հայտի ապահովման պահանջ, որի ներկայացման չափը, ձևը և կարգը նշվում են աճուրդի մասին թղթաբանության մեջ:

11.1.4. Բաց աճուրդ անցկացնելու մասին հայտարարությունը տեղադրվում է Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղեկատվական համակարգում՝ աճուրդին մասնակցության հայտերի ներկայացման ամսաթվի ավարտից առնվազն տասնհինգ օր առաջ:

11.1.5. Աճուրդային թղթաբանության մեջ, բացի 7.3 կետում նշված տեղեկություններից ներառվում է աճուրդային քայլի մասին տեղեկություն:

11.1.6. Պատվիրատուն (Կազմակերպիչը) տեղեկատվական համակարգում բաց աճուրդի անցկացման մասին ծանուցում տեղադրելուց հետո իրավունք ունի աճուրդի հավանական մասնակիցներին ուղարկել բաց աճուրդում մասնակցության հրավերներ:

11.1.7. Պատվիրատուն (Կազմակերպիչը) ապահովում է տեղեկատվական համակարգում աճուրդի մասին փաստաթղթերի տեղադրումն աճուրդի անցկացման մասին ծանուցման տեղադրման հետ միաժամանակ: Տեղեկատվական համակարգում աճուրդի մասին փաստաթղթերը պետք է հասանելի լինի ծանոթանալու համար առանց վճարի գանձման:

11.1.8. Աճուրդի մասին փաստաթղթերի մեջ առկա տեղեկությունները պետք է համապատասխանեն աճուրդի անցկացման հայտարարության մեջ նշված տեղեկություններին:

11.1.9. Աճուրդում մասնակցության համար գնման մասնակիցը ներկայացնում է աճուրդում մասնակցության հայտ 7.5 կետի համաձայն մրցույթի մասին փաստաթղթերի մեջ նշված ժամկետում և ըստ մրցույթում մասնակցության հայտի բովանդակության,

ձևակերպման և կազմի նկատմամբ պահանջների:

11.1.10. Աճուրդում մասնակցության հայտերի ընդունումը դադարում է անմիջապես մինչև աճուրդում մասնակցության հայտերի ուսումնասիրման մեկնարկը՝ աճուրդի անցկացման մասին հայտարարության մեջ նշված օրը և ժամին կամ հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման մասին հայտարարության մեջ նշված օրը և ժամին, եթե Կազմակերպչի կողմից նման ժամկետը երկարաձգվել է:

11.1.11. Աճուրդի մասին հայտարարության կամ հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման մասին հայտարարության մեջ սահմանված ժամկետում ստացված աճուրդին մասնակցելու յուրաքանչյուր հայտ, եթե նման ժամկետ երկարաձգվել է, գրանցվում է Կազմակերպչի կողմից:

11.2. Աճուրդում մասնակցության պայմանները

Աճուրդում մասնակցության հայտերի ուսումնասիրման արդյունքներով գնման մասնակիցը Հանձնաժողովի կողմից չի թույլատրվում մասնակցելու աճուրդին՝

11.2.1. Աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված փաստաթղթերի չտրամադրման, կամ տվյալ փաստաթղթերում գնման մասնակցի կամ գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների մասին ոչ հավաստի տեղեկությունների առկայության դեպքում:

11.2.2. Գնման մասնակցի անհամապատասխանությունը 1.5.1 կետով սահմանված պահանջներին, ինչպես նաև 1.5. կետի համաձայն աճուրդի մասին փաստաթղթերում նշված այլ պահանջներին:

11.2.3. Աճուրդում մասնակցության հայտի ապահովում չներկայացնելու կամ աճուրդի մասին փաստաթղթերի պահանջներին դրա անհամապատասխանության դեպքում, եթե նման հայտերի ապահովման պահանջը նշված է աճուրդի մասին փաստաթղթերի մեջ:

11.2.4. Աճուրդում մասնակցության հայտի անհամապատասխանությունն աճուրդի մասին փաստաթղթերի պահանջներին:

11.2.5. Աճուրդի մասին փաստաթղթերի մեջ կարող են սահմանված լինել սույն Կարգին չհակասող այլ հիմքեր, որոնց ի հայտ գալու դեպքում մասնակիցը չի թույլատրվում աճուրդում մասնակցության:

11.3. Աճուրդում մասնակցության հայտերի ուսումնասիրության կարգը

11.3.1. Կազմակերպիչը ապահովում է աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին աճուրդում մասնակցության հայտերի համապատասխանության և աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված աճուրդի մասնակիցների նկատմամբ սահմանված պահանջներին գնման մասնակիցների համապատասխանության ուսումնասիրումը: Կազմակերպիչն իրավունք ունի հայտերի ուսումնասիրման համար ներգրավել Պատվիրատուին, մասնագետներին:

11.3.2. Մեկ գնման մասնակցի կողմից նույն աճուրդի (լոտի) համար աճուրդում մասնակցության երկու և ավելի հայտ ներկայացնելու փաստի հաստատման դեպքում՝ պայմանով, որ նախկինում ներկայացված հայտերը այդ մասնակցի կողմից ետ չեն կանչվել,

նման գնման մասնակցի տվյալ աճուրդի (լոտի) համար ներկայացված աճուրդում մասնակցության բոլոր հայտերը չեն ուսումնասիրվում և ետ են վերադարձվում նման մասնակցին:

11.3.3. Աճուրդում մասնակցության հայտերի ուսումնասիրման արդյունքների հիման վրա Հանձնաժողովն ընդունում է որոշում գնման մասնակցին աճուրդում մասնակցության թույլտվության և աճուրդում մասնակցության հայտ ներկայացրած գնման մասնակցին աճուրդի մասնակից ճանաչելու կամ նման գնման մասնակցին աճուրդում մասնակցության թույլտվության մերժման մասին՝ աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված կարգով և հիմքերով, որը մուտքագրվում է աճուրդում մասնակցության հայտերի ուսումնասիրման արձանագրության մեջ: Աճուրդում մասնակցության հայտերի ուսումնասիրման արձանագրության մեջ նշվում են 7.9.1 կետով նախատեսված տեղեկություններ, 7.5.14 (առանց անվանումը նշելու (իրավաբանական անձի համար), ազգանուն, անուն, հայրանուն (ֆիզիկական անձի համար), մասնակցի գտնվելու վայրի հասցեները) կետի համաձայն հանձնված աճուրդի մասնակիցների նույնականացման համարներ: Աճուրդում մասնակցության հայտերի ուսումնասիրման արձանագրությունը տեղադրվում է տեղեկատվական համակարգում՝ դրա ստորագրման օրվանից ոչ ուշ քան երեք օր հետո:

11.3.4. Այն դեպքում, եթե աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված է երկու և ավելի լոտեր, աճուրդը չեղյալ է հայտարարվում միայն այն լոտերով, որոնցով տեղի են ունեցել 11.5 կետում նշված պատճառները:

11.4. Աճուրդի անցկացման կարգը

11.4.1. Աճուրդում կարող են մասնակցել միայն 11.2 կետի համաձայն աճուրդին թույլատրված գնման մասնակիցները: Կազմակերպիչը պարտավոր է աճուրդի մասնակիցներին ապահովել հնարավորություն աճուրդում մասնակցել անմիջականորեն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով:

11.4.2. Աճուրդը անցկացվում է Կազմակերպչի կողմից Հանձնաժողովի անդամների, աճուրդի մասնակիցների կամ իրենց ներկայացուցիչների ներկայությամբ:

11.4.3. Աճուրդի անցկացման համար Հանձնաժողովի անդամների թվից ընտրվում է աճուրդավար ձայների մեծամասնությամբ Հանձնաժողովի անդամների բաց քվեարկության ճանապարհով:

11.4.4. Աճուրդը անցկացվում է բաց աճուրդ անցկացնելու մասին հայտարարության մեջ նշված պայմանագրի գնի (լոտի գնի) նախնական (առավելագույն) գնի նվազեցման ճանապարհով, «աճուրդային քայլի» չափով:

11.4.5. Աճուրդը անցկացվում է հետևյալ կարգով՝

11.4.5.1. Կազմակերպիչն անմիջապես մինչև աճուրդի անցկացման սկիզբը գրանցում է աճուրդին ներկայացած աճուրդի մասնակիցներին կամ իրենց ներկայացուցիչներին:

11.4.5.2. Մի քանի լոտերով աճուրդի անցկացման դեպքում, Կազմակերպիչը յուրաքանչյուր լոտի սկզբից առաջ գրանցում է նման լոտի համար հայտ ներկայացրած և աճուրդին ներկայացած աճուրդի մասնակիցներին կամ իրենց ներկայացուցիչներին:

11.4.5.3. Գրանցման ժամանակ աճուրդի մասնակիցներին կամ իրենց

ներկայացուցիչներին տրվում են համարակալված քարտեր (այսուհետ՝ քարտեր):

11.4.5.4. Աճուրդը սկսում է աճուրդավարի կողմից հայտարարելով՝

աճուրդի (լոտի) անցկացման սկիզբը,

լոտի համարը (մի քանի լոտերով աճուրդի անցկացման դեպքում),

պայմանագրի առարկան,

պայմանագրի (լոտի) նախնական (առավելագույն) գինը,

«աճուրդային քայլը»,

աճուրդին չներկայացած մասնակիցների անունները:

11.4.5.5. Աճուրդավարը առաջարկում է աճուրդի մասնակիցներին ներկայացնել պայմանագրի գնի իրենց առաջարկները:

11.4.5.6. Աճուրդավարի կողմից պայմանագրի (լոտի գինը) նախնական (առավելագույն) գինը և «աճուրդային քայլի» համաձայն նվազեցված պայմանագրի գինը հայտարարելուց հետո, աճուրդի մասնակիցը բարձրացնում է քարտը այն դեպքում, եթե նա համաձայն է կնքել պայմանագիր հայտարարված գնով:

11.4.5.7. Աճուրդավարը հայտարարում է աճուրդի մասնակցի քարտի համարը, ով առաջինն է բարձրացրել քարտը աճուրդավարի կողմից պայմանագրի (լոտի գինը) նախնական (առավելագույն) գինը և աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված կարգով «աճուրդային քայլի» համաձայն նվազեցված պայմանագրի գինը, ինչպես նաև աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված կարգով «աճուրդային քայլի» համաձայն նվազեցված պայմանագրի նոր գինը և «աճուրդային քայլը», որի համաձայն նվազեցվում է գինը, հայտարարելուց հետո:

11.4.5.8. Աճուրդը համարվում է եզրափակված, եթե աճուրդավարի կողմից պայմանագրի գնի եռակի հայտարարելուց հետո, աճուրդի որևէ մասնակից չի բարձրացրել քարտը:

11.4.5.9. Տվյալ դեպքում աճուրդավարը հայտարարում է աճուրդի (լոտի) անցկացման եզրափակման մասին, պայմանագրի գնի վերջին և նախավերջին առաջարկը, քարտի համարը և աճուրդի հաղթողի և պայմանագրի գնի վերաբերյալ նախավերջին առաջարկը ներկայացրած աճուրդի մասնակցի անունը:

11.4.6. Բաց աճուրդի անցկացման ժամանակ, Կազմակերպիչը պարտադիր կարգով իրականացնում է աճուրդի վիդեո և աուդիո ձայնագրում և վարում է եզրափակիչ արձանագրություն, որում պետք է առկա լինեն 7.9.2 կետով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև հետևյալ տեղեկությունները՝

աճուրդի անցկացման վայրի, ամսաթվի և ժամի մասին,

աճուրդի մասնակիցների մասին՝ նշելով նույնականացման համարը և առանց

անվանումը և գտնվելու վայրը (իրավաբանական անձի համար), ազգանունը, անունը,

հայրանունը, բնակության վայրը (ֆիզիկական անձի համար) նշելու,

պայմանագրի (լոտի գնի) նախնական (առավելագույն) գնի մասին,

պայմանագրի գնի վերջին և նախավերջին առաջարկների մասին,

պայմանագրի գնի վերաբերյալ առաջարկ ներկայացրած նախավերջին մասնակցի մասին՝

7.5.14 (առանց անվանումը և գտնվելու վայրը (իրավաբանական անձի համար), ազգանունը,

անունը, հայրանունը, բնակության վայրը (ֆիզիկական անձի համար) նշելու) կետի համաձայն տրված մասնակցի նույնականացման համարը:

11.5. Աճուրդը չկայացած հայտարարելը

11.5.1. Աճուրդը Հանձնաժողովի կողմից հայտարարվում է չկայացած 7.8.2 կետով սահմանված հիմքերով:

11.5.2. Այն դեպքում, եթե աճուրդում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտին ներկայացվել է աճուրդին մասնակցելու ընդհամենը մեկ հայտ և աճուրդը հայտարարվել է չկայացած, ընդ որում ուսումնասիրման արդյունքներով նշված հայտը և այն ներկայացրած մասնակիցը համապատասխանում են աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված բոլոր պահանջներին և պայմաններին, Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի հայտարարել նոր գնում կամ կնքել պայմանագիր աճուրդի միակ մասնակցի հետ՝ համաձայն 17.1.7 կետի:

11.5.3. Այն դեպքում, եթե աճուրդում մասնակցել է աճուրդի մեկ մասնակից կամ աճուրդի անցկացման ժամանակ ներկա չի գտնվել ոչ մի աճուրդի մասնակից կամ այն դեպքում եթե պայմանագրի ավելի ցածր գին քան պայմանագրի (լոտի գինը) նախնական (առավելագույն) գինը նախատեսող պայմանագրի գնի առաջարկների բացակայության հետ կապված, «աճուրդային քայլը» նվազեցված է մինչև նվազագույն չափը և պայմանագրի գնի (լոտի գինը) նախնական (առավելագույն) գնի առաջարկի եռակի հայտարարելուց հետո չի ներկայացվել պայմանագրի գնի ոչ մի առաջարկ, որը կնախատեսեր պայմանագրի ավելի ցածր գին, աճուրդը հայտարարվում է չկայացած:

11.6. Որակավորման ընթացակարգի կիրառմամբ աճուրդի անցկացում

11.6.1. Աճուրդի բոլոր մասնակիցներին ներկայացվում են մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված միասնական որակավորման պահանջներ:

11.6.2. Աճուրդին մասնակցելու հայտերը պետք է պարունակեն մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված միասնական որակավորման պահանջներին էլեկտրոնային եղանակով աճուրդի մասնակիցների համապատասխանությունը հաստատող մրցույթի մասին փաստաթղթերով նախատեսված տեղեկություն և փաստաթղթեր:

11.6.3. Աճուրդի մասնակիցները հայտերը, որոնք չեն համապատասխանում միասնական որակավորման պահանջներին, մերժվում են Հանձնաժողովի կողմից:

11.6.4. Որակավորման ընթացակարգը չանցած գնման մասնակիցները հանվում են գնման մասնակիցների ցանկից, նրանց հայտերը չեն գնահատվում և չեն համեմատվում:

11.6.5. Այն դեպքում, եթե որակավորման ընթացակարգի արդյունքներով գնման մասնակիցների քանակը, որոնք համապատասխանում են մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին կազմել է երկուսից պակաս, էլեկտրոնային եղանակով աճուրդը հայտարարվում է չկայացած:

11.6.6. Եթե որակավորման ընթացակարգի արդյունքներով էլեկտրոնային եղանակով աճուրդը հայտարարվել է չկայացած, կազմավորվում է եզրափակիչ արձանագրություն, որում ներառվում են 7.9.2. կետով նախատեսված տեղեկությունները: Հակառակ դեպքում, որակավորման ընտրության արդյունքներով արձանագրություն չի կազմվում:

11.7. Կետը հանված է:

11.8. Աճուրդի արդյունքներով պայմանագրի կնքումը և կատարումը

11.8.1. Պայմանագիրը կնքվում է աճուրդի մասին հայտարարության և աճուրդի մասին փաստաթղթերի մեջ նշված պայմաններով, աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնով կամ աճուրդի մասնակցի հետ, որը ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը, պայմանագիր կնքելու դեպքում՝ նման մասնակցի կողմից ներկայացված գնով:

11.8.2. Այն դեպքում, եթե աճուրդի հաղթողը կամ աճուրդի մասնակիցը, որը ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը աճուրդի մասին փաստաթղթերով նախատեսված ժամկետում չի ներկայացրել Պատվիրատուին ստորագրված պայմանագիր, աճուրդի հաղթողը կամ աճուրդի մասնակիցը, որը ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը ճանաչվում է պայմանագիր կնքելուց խուսափած:

11.8.3. Աճուրդի հաղթողը կամ աճուրդի մասնակիցը, որը ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը համարվում է պայմանագիր կնքելուց խուսափող նաև այն դեպքում, եթե աճուրդի անցկացման ժամանակ պայմանագրի գինը նվազեցվել է գրոյի և աճուրդը անցկացվում էր պայմանագիրը կնքելու համար և աճուրդի հաղթողը կամ նշված մասնակիցը սահմանված ժամկետում չի վճարել պայմանագիր կնքելու իրավունքի գինը:

11.8.4. Այն դեպքում, եթե աճուրդի հաղթողը ճանաչվել է պայմանագիր կնքելուց խուսափող, Պատվիրատուն իրավունք ունի կնքել պայմանագիր աճուրդի մասնակցի հետ, որը ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը:

11.8.5. Աճուրդում մասնակցության հայտերի ապահովումը չի վերադարձվում աճուրդի մասնակցին, ում հետ կնքվում է պայմանագիրը, պայմանագիր կնքելուց խուսափելու դեպքում, այդ թվում նաև պայմանագրի կատարման ապահովում չներկայացնելու դեպքում, եթե սահմանված է եղել պայմանագրի կատարման ապահովման պահանջ:

11.8.6. Աճուրդի հաղթողը կամ աճուրդի մասնակիցը, որը ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը, իրավունք չունի հրաժարվել պայմանագիր կնքելուց: Աճուրդում մասնակցության հայտի ապահովումը վերադարձվում է գնման այդ մասնակցին պայմանագիրը ստորագրելուց և պայմանագրի կատարման ապահովումը տրամադրելուց հետո, եթե Պատվիրատուի կողմից սահմանված է եղել նման ապահովման պահանջ:

11.8.7. Աճուրդի հաղթողի կամ աճուրդի մասնակցի կողմից, ով ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը (եթե պայմանագիրը աճուրդի մասին փաստաթղթերի համաձայն պետք է կնքվի իր հետ) Պատվիրատուին ստորագրված պայմանագիր աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում, գնման նման մասնակիցը համարվում է պայմանագիրը կնքելուց խուսափող, ընդ որում աճուրդին մասնակցելու հայտի ապահովումը չի վերադարձվում:

11.8.8. Աճուրդի մասնակցի կողմից, ով ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը, պայմանագրի կնքումից խուսափելու դեպքում, Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի ընդունելու աճուրդը չկայացած հայտարարելու մասին որոշում:

12. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

12.1. Ընդհանուր դրույթներ

12.1.1. Առաջարկների հարցման անցկացման կարգը սահմանվում է համաձայն 8-րդ բաժնով սահմանված առանձնահատկություններով 7-րդ բաժնի, էլեկտրոնային եղանակով առաջարկների հարցման անցկացման համար:

12.1.2. Առաջարկների հարցումը կարող է լինել բաց կամ փակ:

12.1.3. Առաջարկների բաց հարցում անցկացնելու մասին տեղեկությունը հայտնվում է անորոշ շրջանակի անձանց՝ տեղեկատվական համակարգում առաջարկների հարցման անցկացման մասին հայտարարությունը տեղադրելու միջոցով:

12.1.4. Կազմակերպչի կողմից կարող է սահմանվել առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի ապահովման պահանջ, որի ներկայացման չափը, ձևը և կարգը նշվում են առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ:

12.1.5. Առաջարկների հարցման անցկացման մասին հայտարարությունը և առաջարկների հարցման մասին փաստաթղթերը տեղադրվում է Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղեկատվական համակարգում նման առաջարկների հարցման անցկացման ամսաթվից առնվազն յոթ աշխատանքային օր առաջ:

12.1.6. Պատվիրատուն, Կազմակերպիչը տեղեկատվական համակարգում առաջարկների անցկացման հարցման մասին ծանուցման տեղադրումից հետո իրավունք ունեն առաջարկների հարցման հավանական մասնակիցներին ուղարկել առաջարկների հարցմանը մասնակցելու հրավեր:

12.1.7. Առաջարկների հարցման անցկացման ամսաթիվ է համարվում առաջարկների հարցումում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտման օրը:

12.1.8. Գնման մասնակիցը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով առաջարկների հարցումում մասնակցության հայտ 7.5 կետի պահանջների համաձայն առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ նշված առաջարկների հարցումում մասնակցության հայտի բովանդակության, ձևակերպման և կազմի նկատմամբ պահանջների:

12.1.9. Պատվիրատուն, Կազմակերպիչը իր սեփական նախաձեռնությամբ կամ գնման մասնակցի հարցման համաձայն իրավունք ունեն ընդունելու առաջարկների հարցման անցկացման մասին հայտարարության և/կամ առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ փոփոխություններ մտցնելու մասին որոշում: Առաջարկների հարցման առարկային փոփոխությունը չի թույլատրվում:

12.1.10. Առաջարկների հարցումը չկայացած հայտարարելու դեպքում Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի իրականացնել առաջարկների կրկնակի հարցում կամ Պատվիրատուն իրավունք ունի կնքել պայմանագիր միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ 17.1.8 կետի համաձայն:

12.1.11. Այն դեպքում, եթե առաջարկների հարցումում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետը լրանալուց հետո ներկայացվել է առաջարկների հարցումում մասնակցության միայն մեկ հայտ, իրականացվում է առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված կարգով դրա վերլուծություն, ուսումնասիրում և

գնահատում:

12.1.12. Այն դեպքում, եթե առաջարկների հարցման մասին փաստաթղթերով նախատեսված է երկու և ավելի լուտեր, առաջարկների հարցումը չկայացած է հայտարարվում մայն այն լուտի նկատմամբ, որով ընդունվել է որոշում այդ լուտի նկատմամբ առաջարկների հարցումում մասնակցության բոլոր հայտերը մերժելու մասին:

12.1.13. Այն դեպքում, եթե առաջարկների հարցումում մասնակցության հայտերի վերլուծության և ուսումնասիրության արդյունքներով առաջարկների հարցումում մասնակցության միայն մեկ հայտ չի մերժվել, ապա առաջարկությունների հարցումում մասնակցության նման հայտը գնահատվում է առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված կարգով:

12.2. Առաջարկների հարցումը չկայացած ճանաչելը

12.2.1. Առաջարկների հարցումը ճանաչվում է չկայացած 7.8.2. կետով սահմանված հիմքերով:

12.2.2. Առաջարկների հարցումում մասնակցության մեկ հայտ ներկայացնելու դեպքում կամ եթե միայն մեկ հայտ չի մերժվել, առաջարկների հարցման իրականացման Հանձնաժողովն իրավունք ունի առաջարկների հարցումը չկայացած ճանաչել:

12.3. Առաջարկների հարցման արդյունքների ամփոփում

12.3.1. Առաջարկների հարցումում մասնակցության հայտերի ուսումնասիրության, գնահատման և համադրության արդյունքների հիման վրա, Հանձնաժողովի կողմից կարող են ընդունվել հետևյալ որոշումները՝ առաջարկների հարցումում մասնակցության լավագույն հայտի սահմանման մասին; բոլոր հայտերը մերժելու, առաջարկների հարցումը չկայացած ճանաչելու մասին; առաջարկների հարցումում մասնակցության հայտերի լրացուցիչ գնահատում անցկացնելու մասին:

12.3.2. Հանձնաժողովի կողմից որոշումը ձևակերպվում է եզրափակիչ արձանագրությամբ, որի մեջ ներառվում են 7.9.2. կենտով նախատեսված տեղեկությունները:

12.3.3. Առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուն տեղեկացնում է հաղթողին առաջարկների արդյունքների մասին:

12.4. Որակավորման ընթացակարգի կիրառմամբ առաջարկների հարցման անցկացման կարգը

Առաջարկների հարցումը կարող է իր մեջ ներառել էլեկտրոնային եղանակով առաջարկների հարցման մասնակիցների որակավորման ընթացակարգի կիրառմամբ ընտրության անցկացում: Ընդ որում պետք է պահպանվեն հետևյալ կանոնները՝

12.4.1. Էլեկտրոնային եղանակով առաջարկների հարցման անցկացման մասին ծանուցման մեջ պետք է սահմանված լինեն նման փուլի անցկացման ժամկետները:

12.4.2. Էլեկտրոնային եղանակով առաջարկների հարցման բոլոր մասնակիցներին ներկայացվում են մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված միասնական որակավորման պահանջներ:

12.4.3. Առաջարկների հարցումում մասնակցության հայտերը պետք է ներառեն մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված տեղեկություն և փաստաթղթեր և էլեկտրոնային եղանակով առաջարկների հարցման մասնակիցների համապատասխանությունը մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված միասնական որակավորման պահանջներին:

12.4.4. Մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված միասնական որակավորման պահանջներին չհամապատասխանող էլեկտրոնային եղանակով առաջարկների հարցման մասնակիցների հայտերը մերժվում են:

12.5. Բաց երկու փուլից բաղկացած առաջարկների հարցման անցկացման առանձնահատկությունները

12.5.1. Առաջարկների երկու փուլից բաղկացած հարցման անցկացման դեպքում կիրառվում են առաջարկների հարցման համար 12.1-12.3 կետերով սահմանված նորմերը և կանոնները՝ հաշվի առնելով սույն բաժնի պահանջները:

12.5.2. Երկու փուլից բաղկացած առաջարկների հարցման անցկացման մասին հայտարարության և առաջարկների հարցման մասին փաստաթղթերի տեղադրումն իրականացվում է 12.1 կետով սահմանված կարգով և ժամկետներում:

12.5.3. Երկու փուլից բաղկացած առաջարկների հարցման անցկացման դեպքում, առաջին փուլում գնման մասնակիցները պարտավոր են ներկայացնել առանց պայմանագրի գնի առաջարկը նշելու գնման օբյեկտի նկատմամբ առաջարկներ պարունակող նախնական հայտեր: Առաջարկների հարցման մասին փաստաթղթերը կարող են նախատեսել երկու փուլից բաղկացած առաջարկների մասնակիցների պարտավորությունը ներկայացնելու նախնական հայտերի բովանդակության մեջ առաջարկություններ գնումների առարկայի տեխնիկական, որակական կամ այլ բնութագրերի, մատակարարման պայմանների, ինչպես նաև երկու փուլից բաղկացած առաջարկների մասնագետների մասնագիտական և տեխնիկական որակավորման մասին:

12.5.4. Առաջին փուլում Պատվիրատուն իրավունք ունի նախնական հայտեր ներկայացրած մասնակիցների հետ անցկացնելու գնման առարկային նկատմամբ մասնակիցների նախնական հայտերում առկա ցանկացած առաջարկությունների քննարկումներ:

12.5.5. Առաջին փուլի արդյունքներով Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի ճշտել գնման պայմանները և առաջարկների մասին փաստաթղթերի մեջ մտցնել փոփոխություններ, այդ թվում նաև՝

ճշտել առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ ի սկզբանե նշվածներից ցանկացած պահանջ անվտանգության, որակի, տեխնիկական բնութագրերի, (սպառողական հատկությունների) ապրանքների գործառույթային բնութագրերի, աշխատանքների, ծառայությունների, ապրանքի չափի, փաթեթավորման, բեռնման նկատմամբ; աշխատանքի (ծառայության) արդյունքների, մատակարարվող ապրանքի համապատասխանության սահմանման հետ կապված Պատվիրատուի կարիքների այլ պահանջների, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նկատմամբ, ինչպես նաև լրացնել գնման առարկայի բնութագրերի և առաջարկների հարցման մասնակիցների

կողմից դրա նկարագրության նկատմամբ ցանկացած նոր պահանջով;

Ճշտելու առաջարկների հարցումում մասնակցության հայտերի գնահատման չափանիշների առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ նախնական նշվածներից ցանկացածը և լրացնել սույն Կարգի պահանջները բավարարելով ցանկացած նոր չափանիշով:

12.5.6. 12.5.5. կետի համաձայն կատարված ցանկացած բացառության, փոփոխության կամ լրացման մասին հայտնվում է առաջարկների հարցման մասնակիցներին առաջարկների հարցումում մասնակցության վերջնական հայտերը ներկայացնելու հրավերներում: Ընդ որում, նման փոփոխությունները արտացոլվում են տեղեկատվական համակարգում տեղադրված առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ նշված հրավերների ուղարկման օրը:

12.5.7. Առաջարկների հարցման երկրորդ փուլում, Պատվիրատուն (Կազմակերպիչը) առաջարկում է առաջարկների երկու փուլից բաղկացած առաջին փուլում նախնական հայտեր ներկայացրած հարցման բոլոր մասնակիցներին ներկայացնել առաջարկների հարցումում մասնակցության վերջնական հայտեր՝ նշելով առաջարկների երկու փուլից բաղկացած հարցման մասնակցի կողմից առաջարկվող պայմանագրի գինը, հաշվի առնելով առաջին փուլից հետո վերանայված գնման պայմանները:

12.5.8. Առաջարկների հարցումում մասնակցության վերջնական հայտ ներկայացնել չցանկացող առաջարկների երկու փուլից բաղկացած հարցման մասնակիցն իրավունք ունի հրաժարվելու առաջարկների երկու փուլից բաղկացած հարցումում մասնակցությունից, տվյալ դեպքում, եթե առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ սահմանված է հայտերի ապահովման մասին պահանջ, առաջարկների երկու փուլից բաղկացած հարցման մասնակցին վերադարձվում է առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված կարգով հայտի ապահովումը:

12.5.9. Առաջարկների հարցումում մասնակցության վերջնական հայտերն ուսումնասիրվում և գնահատվում են 7.8 կետի դրույթների համաձայն:

12.6. Կետը հանված է:

13. ԳՆԱՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

13.1. Ընդհանուր դրույթներ

13.1.1. Գնանշումների հարցումը կարող է լինել էլեկտրոնային եղանակով կամ փակ:

13.1.2. Էլեկտրոնային եղանակով գնանշումների հարցման անցկացման կարգը սահմանվում է 7 բաժնի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով առաջարկների հարցման անցկացման համար 8-րդ բաժնով սահմանված առանձնահատկություններով:

13.1.3. Գնանշումների հարցման անցկացման միջոցով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնման դեպքում կարող են առանձնացվեն լոտեր, որոնց նկատմամբ գնանշումների հարցման անցկացման մասին ծանուցման մեջ առանձին նշվում են առարկան, նախնական (առավելագույն) գինը, ժամկետները և ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման այլ

պայմանները: Որպես կանոն, յուրաքանչյուր լոտով կնքվում է առանձին պայմանագիր: Այն դեպքում, եթե մի քանի լոտերով հաղթող է ճանանչվում գնանշումների հարցման նույն մասնակիցը, այդ մասնակցի հետ կարող է կնքվել մի քանի լոտերի մեկ պայմանագիր:

13.1.4. Չի թույլատրվում գնման մասնակիցներից վճարի գնաձում գնանշումների հարցումում մասնակցելու համար:

13.1.5. Կազմակերպչի կողմից կարող է սահմանվել գնանշումների հարցումում մասնակցության հայտի ապահովման պահանջ, որի ներկայացման չափը, ձևը և կարգը սահմանվում է գնանշումների հարցման մասին ծանուցման մեջ:

13.1.6. Գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարությունը տեղադրվում է Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղեկատվական համակարգում՝ գնանշումների հարցումում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտման օրվանից ոչ ուշ քան հինգ աշխատանքային օր առաջ:

13.1.7. Պատվիրատուն, Կազմակերպիչը գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարության տեղեկատվական համակարգում տեղադրելուց հետո իրավունք ունի ուղարկելու գնանշումների բաց հարցման հավանական մասնակիցներին գնանշումների հարցումում մասնակցության հրավերը:

13.1.8. Գնանշումների հարցումում մասնակցության հրավերի ուղարկումը մինչև գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարության մեջ տեղադրումը չի թույլատրվում:

13.1.9. Գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարությունն իր մեջ ներառում է 7.2.1, 7.3.1.2-7.3.1.10, 7.3.1.12-7.3.1.17 կետերում նշված տեղեկությունները, ինչպես նաև հետևյալ տեղեկությունները՝

13.1.9.1. Ապրանքի, աշխատանքի, ծառայությունների նկատմամբ անվտանգության, որակի, տեխնիկական բնութագրերի, գործառույթային բնութագրերի (սպառողական հատկությունների) նկատմամբ, ապրանքի չափի, փաթեթավորման, բեռնման նկատմամբ, աշխատանքի արդյունքների նկատմամբ պահանջներ, տեխնիկական կարգավորման մասին ՀՀ օրենսդրության համաձայն Պատվիրատուի կողմից սահմանված և նախատեսված տեխնիկական կանոնակարգերով, ստանդարտացման մասին ՀՀ օրենսդրության համաձայն ընդունված, ստանդարտացման ազգային համակարգում մշակվող և օգտագործվող փաստաթղթերով այլ պահանջներ՝ կապված Պատվիրատուի պահանջումներին մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության համապատասխանության սահմանման հետ:

13.1.9.2. Մրցույթի մասնակիցներին գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարության դրույթների պարզաբանման տրամադրման ժամկետի ձևերը, կարգը, ամսաթվերը և ավարտման ժամանակը:

13.1.10. Գնանշումների հարցման անցկացման հայտարարությունը կարող է ներառել 7.2.2. և 7.3.2. կետերում նշված տեղեկությունները:

13.1.11. Գնանշումների հարցումում մասնակցության հայտը պետք է համապատասխանի սույն Կարգի համաձայն գնանշումների հարցման անցկացման մասին ծանուցման մեջ նշված գնանշումների հարցումում մասնակցության հայտի

բովանադակության, ձևակերպման և կազմի պահանջներին:

13.1.12. Եթե գնանշումների հարցման անցկացման դեպքում մրցույթի մասնակցի միայն մեկ հայտ չի մերժվել, ապա այդ հայտը գնահատվում և համադրվում է գնանշումների հարցման անցկացման մասին հայտարարությունով սահմանված կարգով:

13.1.13. Գնային նվազագույն առաջարկը պարունակող էլեկտրոնային եղանակով գնանշումների հարցումում մասնակցության հայտին տրվում է առաջին համարը:

13.1.14. Հանձնաժողովն իրավունք ունի ճանաչելու գնանշումների հարցումը, եթե գնանշումների հարցումում մասնակցել է միայն մեկ մասնակից (ներկայացվել է գնանշումների հարցումում մասնակցության միայն մեկ հայտ կամ ուսումնասիրման արդյունքներով Հանձնաժողովի կողմից չի մերժվել գնանշումների հարցմանը մասնակցության միայն մեկ հայտ):

13.2. Կետը հանված է:

13.3. Գնանշումների հարցման արդյունքներով պայմանագրի կնքումը և կատարումը

13.3.1. Պայմանագիրը կնքվում է գնանշումների հարցման անցկացման մասին ծանուցման մեջ նշված պայմաններով, գնանշումների հարցման հաղթողի կողմից առաջարկված գնով, կամ գնանշումների հարցման մասնակցի հետ, որը ներկայացրել է պայմանագրի գնի նախավերջին առաջարկը, պայմանագրի կնքման դեպքում՝ այդ մասնակցի կողմից առաջարկված գնով:

13.3.2. Այն դեպքում, եթե գնանշումների հարցման հաղթողը կամ գնանշումների հարցման մասնակիցը, որի հայտին տրվել է երկրորդ համարը, գնանշումների հարցման մասին հայտարարությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել Պատվիրատուին ստորագրված պայմանագիր, գնանշումների հարցման հաղթողը կամ գնանշումների հարցման մասնակիցը, որի հայտին տրվել է երկրորդ համարը, ճանաչվում է խուսափած պայմանագիրը ստորագրելուց խուսափող:

13.3.3. Այն դեպքում, եթե գնանշումների հարցման հաղթողը ճանաչվել է պայմանագիրը ստորագրելուց խուսափող, Պատվիրատուն իրավունք ունի կնքելու պայմանագիր գնանշումների հարցման մասնակցի հետ, որի հայտին տրվել է երկրորդ համարը:

13.3.4. Գնանշումների հարցումում մասնակցության հայտերի ապահովումը չի վերադարձվում գնանշումների հարցման մասնակցին, որի հետ կնքվում է պայմանագիրը, պայմանագիրը կնքելուց խուսափելու դեպքում, այդ թվում նաև պայմանագրի ապահովում չներկայացնելու դեպքում, եթե սահմանված է եղել պայմանագրի կատարման ապահովման պահանջ:

13.3.5. Գնանշումների հարցման մասնակցի կողմից, որի հայտին տվել է երկրորդ համարը, պայմանագիրը կնքելուց խուսափելու դեպքում, Պատվիրատուն, կազմակերպիչը իրավունք ունեն ընդունելու գնանշումների հարցումը չկայացած ճանաչելու մասին որոշում:

14 ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

14.1. Ընդհանուր դրույթներ

14.1.1. Մրցակցային ընտրությունն անցկացվում է 7-րդ բաժնով, ինչպես նաև 8-րդ

բաժնով սահմանված կանոններով, եթե մրցակցային ընտրությունն անցկացվում է էլեկտրոնային եղանակով՝ հաշվի առնելով սույն բաժնով սահմանված առանձնահատկությունները:

14.1.2. Մրցակցային ընտրությունն անցկացվում է էլեկտրոնային եղանակով, եթե թղթային ձևը սահմանված չէ Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի որոշմամբ:

14.1.3. Մրցակցային ընտրությունը կարող է անցկացվել մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի համաձայն՝ 10.3.1.1, 10.3.1.2, 12.5, 14.11 կետերով նախատեսված մի քանի փուլով:

14.1.4. Չի թուլատրվում գնման մասնակիցներից վճարի գանձում մրցակցային ընտրությանը մասնակցելու համար՝ բացառությամբ մրցակցային ընտրության մասին տպագիր (թղթային ձևով մրցակցային ընտրություն անցկացնելու դեպքում) պատճեն ներկայացնելու համար վճարից:

14.2. Բաց մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարություն

14.2.1. Բաց մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարության մեջ նշվում են 7.2. կետի համաձայն տեղեկություններ, ինչպես նաև հետևյալ տեղեկությունները՝

14.2.2. Կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային հեռախոսի համարը:

14.2.3. Առանց պայմանագիր կնքելու մրցակցային ընտրության ընթացակարգը ավարտելու կամ մրցակցային ընտրությունը չեղյալ հայտարարելու Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունքի մասին տեղեկություններ:

14.2.4. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465 հոդվածների և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1043-1047 հոդվածների համաձայն այն ցուցումը, որով մրցակցային ընտրությունը չի հանդիսանում սակարկություն (մրցույթ, աճուրդ, առաջարկների հարցում, գնանշումների հարցում) կամ հանրային մրցույթ և Կազմակերպչի և Պատվիրատուի վրա չի դնում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածներով սահմանված պարտականություններ:

14.3. Մրցակցային ընտրության մասին փաստաթղթեր

14.3.1. Մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի մեջ նշվում են 7.3. կետի համաձայն տեղեկություններ, ինչպես նաև նշվում են հետևյալ տեղեկությունները՝

14.3.1.1. մատակարարվող ապրանքի տեխնիկական և որակական բնութագրեր, շահագործման, էկոլոգիական բնութագրեր, բնութագրեր, պլաններ, գծանկարներ, էսքիզներ, լուսանկարներ աշխատանքի արդյունքներ, փորձարկումներ, պահանջներ, այդ թվում՝ փորձարկումների անցկացման, փորձարկման մեթոդների, փաթեթավորման նկատմամբ, այն նույնակացման հնարավորություն տվող պատկերը (անհրաժեշտության դեպքում):

14.3.1.2. Ապրանքի, աշխատանքների, ծառայությունների և (կամ) դրանց որակի երաշխիքների տրամադրման ծավալի նկատմամբ, ապրանքի երաշխիքային սպասարկման

նկատմամբ, ապրանքի շահագործման ծախսերի նկատմամբ, ապրանքի մոնտաժի և ճշգրտման իրականացման պարտավորության նկատմամբ, ապրանքի օգտագործում և սպասարկում իրականացնող անձանց կրթման նկատմամբ պահանջները սահմանվում են պատվիրատուի կողմից (անհրաժեշտության դեպքում):

14.3.1.3. Առանց պայմանագիր կնքելու մրցակցային ընտրությունը չեղարկելու կամ մրցակցային ընտրության ընթացակարգը ավարտելու Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունքի մասին տեղեկություններ:

14.3.1.4. Մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով նախատեսված դեպքերում մրցակցային ընտրության արդյունքները չեղարկելու Հանձնաժողովի իրավունքի մասին տեղեկություններ:

14.3.1.5. Մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով սահմանված կարգով և պայմաններով մրցակցային ընտրության արդյունքների ամփոփման արդյունքում մի քանի հաղթող ընտրելու Հանձնաժողովի իրավունքի մասին տեղեկություններ:

14.3.1.6. Հայտի բովանդակության մեջ գնի նվազեցման մասին առաջարկի այլընտրանքային առաջարկներ ներկայացնելու մրցակցային ընտրության մասնակցի իրավունքի մասին տեղեկություններ (եթե նախատեսված են մրցակցային ընտրության պայմաններով):

14.3.1.7. Մրցակցային ընտրությանը մասնակցելու հայտերի նախապատրաստման համար գնման մասնակիցներին անհրաժեշտ այլ տեղեկություններ:

14.3.2. Հայտերի գնահատման և համադրման չափանիշների բովանդակության մեջ Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի նշել ինչպես գնային, այդ թվում նաև այնպիսի ենթաչափանիշներ ինչպիսիք են գինը, ծախսերը՝ կապված պայմանագրի կատարման հետ, ապրանքերի շահագործման և վերանորոգման ծախսերը, աշխատանքների արդյունքների օգտագործում և այլն, այնպես էլ գնային չափանիշները, այդ թվում նաև գնման առարկային որակական, գործառության, էկոլոգիական և այլ բնութագրերը, գնման մասնակիցների որակավորումը, սեփականության իրավունքով կամ այլ իրավական հիմքով սարքավորումների և այլ նյութական ռեսուրսների, իրենց մոտ ֆինանսական ռեսուրսների առկայությունը, գնման առարկայի և որակավորման որոշ մակարդակի մասնագետների և այլ աշխատակիցների գործարար համբավի հետ կապված աշխատանքի փորձը սահմանող ենթաչափանիշներ և Պատվիրատուի պահանջներին գնման մասնակցի համապատասխանությունը սահմանող այլ ենթաչափանիշներ:

Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանելու սույն կետով չնախատեսված մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի մեջ նախատեսված Պատվիրատուին պահանջներին մրցակցային ընտրության մասնակցի համապատասխանության աստիճանի սահմանման նպատակներով հայտերի գնահատման, վերջնական առաջարկների, դրանց մեծության նշանակության այլ չափանիշներ (ենթաչափանիշներ):

14.4. Մրցակցային ընտրության հայտարարություն, մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի տրամադրում

14.4.1. Բաց մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարությունը տեղադրվում է Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղեկատվական համակարգում մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտից ոչ ուշ քան 5 աշխատանքային օր առաջ:

14.4.2. Պատվիրատուն (Կազմակերպիչը) մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարության տեղադրումից հետո կարող է ուղարկել մրցակցային ընտրության հավանական մասնակիցներին մրցակցային ընտրությունում մասնակցության հրավեր:

14.4.3. Պատվիրատուն (Կազմակերպիչը) ապահովում է մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի տեղադրումը տեղեկատվական համակարգում մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարության տեղադրման հետ միաժամանակ:

14.4.4. Մինչև մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտը Պատվիրատուն (Կազմակերպիչը) կարող է մտցնել փոփոխություններ մրցակցային ընտրության մասին հայտարարության և/կամ փաստաթղթերի մեջ: Մինչև բաց մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի բացման/ դրանց հասանելիության բացման գործընթացի անցկացման սկիզբը, Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի երկարաձգել մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետը և համապատասխանաբար, տեղափոխել հայտերի բացման/հայտերի հասանելիության բացման գործընթացի անցկացման ամսաթիվը և ժամը: Մինչև գնման արդյունքների անցկացումը Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի փոխելու Գնման մասնակիցների առաջարկների ուսումնասիրման և մրցակցային ընտրության արդյունքների անցկացման ամսաթիվը:

14.5. Մրցակցային ընտրության գործընթացի եզրափակում

14.5.1. Մրցակցային ընտրության գործընթացի եզրափակումը հնարավոր է մրցակցային ընտրությունը չեղյալ հայտարարելու դեպքում 7.1. կետի համաձայն մատակարարի (կապալառուի, կատարողի) սահմանումը չեղյալ հայտարարելու դեպքում, ինչպես նաև 14.5.3. ենթակետով նախատեսված լինելու դեպքերում:

14.5.2. Մրցակցային ընտրությունը չեղյալ հայտարարելու մասին որոշումը տեղադրվում է տեղեկատվական համակարգում այդ որոշման ընդունման օրը:

14.5.3. Ելնելով դրամական միջոցների արդյունավետ ծախսման սկզբունքից Պատվիրատուն (Կազմակերպիչը) կարող է ավարտել մրցակցային ընտրության գործընթացն ամբողջությամբ կամ առանձին լոտերի առումով՝ առանց պայմանագիր կնքելու հետևյալ դեպքերում՝

14.5.3.1. Պայմանագիրը կնքելուն խոչընդոտող հանգամանքների առաջացման (հայտնաբերման) դեպքում, այդ թվում նաև ֆինանսավորման փոփոխության (բացակայության), տեխնիկական որոշումների փոփոխման (փոփոխման անհրաժեշտության) դեպքում, որոնցից ելնելով պլանավորվում էր գնամ իրականացումը, սույն Կարգի համաձայն Պատվիրատուի գնման պլանում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության հայտնաբերման դեպքում:

14.5.3.2. Պատվիրատուի կամքից անկախ հանգամանքներով պայմանագիր կնքելու

հնարավորության բացակայության պատճառով, այդ թվում նաև ՀՀ օրենսդրության, օտար երկրի օրենսդրության փոփոխման, պետական իշխանության մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշման ընդունման, ապրանքները, աշխատանքները, ծառայությունները կարգավորող գների (սակագների) փոփոխման դեպքում:

14.5.3.3. Պատվիրատուի կառավարման մարմինների կողմից պայմանագիր կնքելու հավանության բացակայության հետ կապված, այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է պայմանագիր կնքելու համար համաձայն ՀՀ օրենսդրության, կամ պայմանագիր կնքելուն խոչընդոտող հակամենաշնորհային մարմնի կամ դատարանի որոշման ընդունմամբ:

14.5.3.4. Հանգամանքների, որոնցով առաջնորդվել է Պատվիրատուն մրցակցային ընտրություն հայտարարելիս, էական փոփոխման, այդ թվում նաև ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գների փոփոխմանը հանգեցրած շուկայական կոնյուկտուրայի էական փոփոխման հետ կապված:

14.5.3.5. Հաղթող ճանաչված մրցակցային ընտրության մասնակցի կողմից մասնակցի, ինչպես նաև մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի պահանջներին իր կողմից առաջարկվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համապատասխանության մասին ոչ հավաստի տեղեկությունների ներկայացման փաստի հաստատման դեպքում:

14.5.4. 14.5.1 և 14.5.3. կետերով նախատեսված դեպքերում, Պատվիրատուն, Կազմակերպիչը չի հատուցում գնման մասնակցին իր կողմից մրցակցային ընտրությանը մասնակցելու հետ կապված կրած ծախսերը:

14.5.5. Մրցակցային ընտրության չեղյալ հայտարարելու մասին որոշումը տեղադրելուց կամ առանց պայմանագիր կնքելու մրցակցային ընտրության գործընթացը ավարտելու մասին որոշումն ընդունելուց հետո, Կազմակերպիչը գնման մասնակցի գրավոր հարցումով վերադարձնում է իր կողմից ներկայացված մրցակցային ընտրությունում մասնակցության հայտը, եթե այդ հայտը ներկայացվել է թղթային ձևով, ինչպես նաև վերադարձնում է մրցակցային ընտրությունում մասնակցության հայտի ապահովումն այն դեպքում, եթե այն ներկայացվել է մասնակցի կողմից մրցակցային ընտրության մասին թղթաբանությամբ նախատեսված կարգով:

14.6. Մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացում

14.6.1. Մրցակցային ընտրությունում մասնակցության համար գնման մասնակիցը մրցակցային ընտրության մասին թղթաբանության պահանջների համաձայն ներկայացնում է մրցակցային ընտրությունում մասնակցության հայտ:

14.6.2. Մասնակիցը կարող է փոխել, լրացնել կամ ետ կանչել մրցակցային ընտրությունում մասնակցության իր հայտը այն ներկայացնելուց հետո պայմանով, որ Կազմակերպիչը կստանա հայտի փոփոխման, լրացման կամ ետ կանչելու մասին գրավոր ծանուցում մինչև մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի մեջ սահմանված մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտը:

14.6.3. Հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո ստացված մրցակցային ընտրությունում մասնակցության հայտը Կազմակերպիչի կողմից չի ուսումնասիրվում և

վերադարձվում է գնման մասնակցի հարցմամբ՝ մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով սահմանված կարգով:

14.6.4. Այն դեպքում, եթե դա նախատեսված է մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով, մրցակցային ընտրության մասնակիցը՝ մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով սահմանված կարգով մինչև գնման արդյունքների ամփոփման օրվան նախորդող օրվա ժամը 15:00 իրավունք ունի նվազեցնել իր կողմից հայտարարված գինը՝ ներկայացնելով մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի պահանջների համաձայն ձևակերպված նոր գնային առաջարկ:

14.6.5. Կազմակերպիչը տալիս է գնման մասնակցին նրա նույնականացման համարը և հայտնում է դրա մասին գնման մասնակցին՝ հայտերը բացելուց/հայտերի հասանելիության բացումից հետո:

14.7. Մրցակցային ընտրության մասնակցության բաց հասանելիություն/մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի բացում

14.7.1. Էլեկտրոնային հարթակի օպերատորը բացում է էլեկտրոնային եղանակով մրցակցային ընտրության մասնակցության հասանելիությունը Պատվիրատուին, ինչպես նաև Կազմակերպչի մրցակցային ընտրության մասին հայտարարության մեջ նշված օրը, ժամին:

14.7.2. Այն դեպքում, եթե մրցակցային ընտրությունն անցկացվում է թղթային ձևով՝ մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերը բացվում են Կազմակերպչի կողմից մրցակցային ընտրության մասին թղթաբանության մեջ նշված օրը, ժամին և վայրում;

մրցակցային ընտրությունում մասնակցության հայտ ներկայացրած գնման մասնակիցները կամ իրենց ներկայացուցիչները իրավունք ունեն ներկա գտնվելու մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի բացման ժամանակ;

Կազմակերպչի կողմից կազմվում և ստորագրվում է մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի բացման ակտը՝ իր մեջ ներառելով մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով նախատեսված տեղեկությունները;

բացման ժամանակ ներկա գտնվող մասնակիցների համար Կազմակերպիչը հայտարարում է բացման ակտում նշված տեղեկությունները:

14.7.3. Գնման մեկ մասնակցի կողմից մրցակցային ընտրությունում մասնակցության երկու և ավելի հայտերի սահմանման դեպքում՝ պայմանով, որ մրցակցային ընտրությունում մասնակցության նախկինում ներկայացված հայտերը այդ մասնակցի կողմից ետ են կանչվել, տվյալ մրցակցային ընտրության նկատմամբ ներկայացված մրցակցային ընտրությունում մասնակցության գնման այդ մասնակցի բոլոր հայտերը չեն ընդունվում ուսումնասիրման:

14.7.4. Մրցակցային ընտրությունը կարող է ճանաչվել չկայացած 7-րդ բաժնում մրցույթի համար նախատեսված ընդհանուր հիմքերով, ինչպես նաև 14.7, 14.8. կետերում մրցակցային ընտրության համար նախատեսված հիմքերով:

Մրցակցային ընտրությունը չկայացած ճանաչելու դեպքում, Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի անցկացնելու կրկնակի մրցակցային ընտրություն, այլ

ձևով գնում կամ Պատվիրատուն իրավունք ունի կնքել պայմանագիր միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ՝ համաձայն 17.1.8 կետի:

14.7.5. Այն դեպքում, եթե մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտին ներկայացվել է միայն մեկ հայտ, ապա մրցակցային ընտրությունում մասնակցության այդ հայտը բացվում է (բացվում է դրա հասանելիությունը), կատարվում է դրա քննություն, քննում, գնահատում և համադրում՝ մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով սահմանված կարգով:

14.7.6. Այն դեպքում, եթե մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտին ներկայացվել է միայն մեկ հայտ, չի մերժվել միայն մեկ հայտ, ապա Հանձնաժողովն իրավունք ունի մրցակցային ընտրությունը չկայացած ճանաչելու:

14.8. Եզրափակիչ արձանագրության կազմում և արդյունքների ամփոփում

14.8.1. Եզրափակիչ արձանագրության ձևավորման փուլում, Կազմակերպիչը անցկացնում է մրցակցային ընտրությունում մասնակցության քննություն և մրցակցային ընտրության մասնակցի մասին տեղեկության ստուգում՝ 7.7 կետում նախատեսված պայմանների համապատասխան:

14.8.2. Կազմակերպչի կողմից անցկացված հայտերի քննության և մրցակցային ընտրության մասնակիցների մասին տեղեկության ստուգման արդյունքներով, Հանձնաժողովը հայտերի ուսումնասիրման ընթացքում իրավունք ունի մերժելու մրցակցային ընտրությունում մասնակցության հայտը՝ 7.8.1 կետում նշված դեպքերում:

Մրցակցային ընտրության մասին թղթաբանության մեջ կարող են սահմանված լինել մրցակցային ընտրության մասնակիցների հայտերի մերժման սույն Կարգին չհակասող լրացուցիչ հիմքեր:

14.8.3. Այն դեպքում, եթե մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ուսումնասիրման արդյունքների և մրցակցային ընտրության մասնակիցների մասին տեղեկության ստուգման դեպքում, Հանձնաժողովի կողմից մերժվել են մրցակցային ընտրությունում մասնակցության բոլոր հայտերը, Հանձնաժողովը որոշում է ընդունում այդ մրցակցային ընտրությունը չկայացած ճանաչելու մասին:

14.8.4. Այն դեպքում, եթե մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով նախատեսված են երկու և ավելի լոտեր, մրցակցային ընտրությունը ճանաչվում է չկայացած միայն մեկ լոտի նկատմամբ, որով որոշում է ընդունվել մրցակցային ընտրությունում մասնակցության բոլոր հայտերը մերժելու մասին:

14.8.5. Այն դեպքում, եթե մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ուսումնասիրման քննության արդյունքներով մրցակցային ընտրությունում մասնակցության միայն մեկ հայտ չի մերժվել, մրցակցային ընտրությունում մասնակցության այդ հայտը գնահատվում է մրցակցային ընտրությունում մասնակցության մասին փաստաթղթերով սահմանված կարգով, եթե Հանձնաժողովի կողմից չի ընդունվել որոշում այդ մրցակցային ընտրությունը չկայացած ճանաչելու մասին:

14.8.6. Այն դեպքում, եթե ներկայացվել է մրցակցային ընտրությունում մասնակցության

միայն մեկ հայտ, Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու մրցակցային ընտրությունը չկայացած ճանաչելու մասին որոշում:

14.8.7. Այլընտրանքային առաջարկները (եթե դրանց ներկայացումը նախատեսված է մրցույթի մասին թղթաբանությամբ) ուսումնասիրվում են գնման մասնակիցների կողմից ներկայացված գնման մասնակցության հայտերի բովանդակության մեջ գնման առարկայի և/կամ պայմանագրի պայմանների նկատմամբ հիմնական առաջարկների հետ հավասար:

14.8.8. Որակավորման անհրաժեշտ մակարդակին տիրապետող և լավագույնը ճանաչված հայտը ներկայացրած մրցույթի մասին փաստաթղթերի պահանջներին առավելագույնս ամբողջությամբ համապատասխանող մասնակից ընտրելու նպատակով, Կազմակերպիչը ձևավորում է հայտերի գնահատման և համադրության առաջարկ:

14.8.9. Այն դեպքում, եթե ընդունվել է որոշում մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի մերժման մասին, գնահատվում են միայն մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերը, որոնք չեն մերժվել:

14.8.10. Կազմակերպիչը իրավունք ունի մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ուսումնասիրմանը, գնահատմանը և համադրմանը ներգրավել մասնագետներ՝ Կազմակերպչի, Պատվիրատուի, գնման առարկայի հատուկ գիտելիքներին տիրապետող կողմնակի անձանց մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումներ:

14.9. Մրցակցային ընտրության արդյունքներով որոշման կայացում

14.9.1. Մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ուսումնասիրման, գնահատման և համադրության արդյունքների, այդ թվում նաև գնային առաջարկների հիման վրա, Հանձնաժողովի կողմից կարող են ընդունվել հետևյալ որոշումները՝

մրցակցային ընտրության արդյունքների և հաղթողին (մատակարարին (կապալառուին, կատարողին), հաղթողներին (մի քանի մատակարարների (կապալառուների, կատարողների) որոշելու մասին;

մրցակցային ընտրությունը չկայացած ճանաչելու մասին;

Կազմակերպչին (Պատվիրատուին) սույն Կարգով նախատեսված հիմքերի առկայության դեպքում առանց պայմանագիր կնքելու մրցակցային ընտրության գործընթացն ավարտելու խորհուրդի մասին:

14.9.2. Եզրափակիչ արձանագրության ձևավորման գործընթացն էլեկտրոնային եղանակով մրցակցային ընտրության անցկացման դեպքում իրականացվում է հաշվի առնվելով 8-րդ բաժնով սահմանված առանձնահատկությունները:

14.9.3. Մրցակցային ընտրության արդյունքներով հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է եզրափակիչ արձանագրությամբ, որում պետք է լինեն 7.9.2. կետով նախատեսված տեղեկություններ:

14.9.4. Կազմակերպիչը տեղեկացնում է հաղթողին (հաղթողներին) մրցակցային ընտրության արդյունքների մասին՝ մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով սահմանված կարգով:

14.9.5. Մրցակցային ընտրության ընթացքում կազմվող արձանագրությունները Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղադրվում են տեղեկատվական

համակարգում՝ այդ արձանագրությունները ստորագրելու օրվանից ոչ ուշ քան երեք օր հետո:

14.9.6. Հանձնաժողովն իրավունք ունի չեղյալ հայտարարելու մրցակցային ընտրության արդյունքները, մրցույթի մասին թղթաբանությամբ սահմանված հաստատող փաստաթղթերի բացակայության, կամ այդ փաստաթղթերում մրցույթի մասնակցի կամ գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին անհուսալի տեղեկությունների առկայության դեպքում, ինչպես նաև սույն Կարգով նախատեսված այլ դեպքերում:

14.10. Մրցակցային ընտրության անցկացման ընթացքում նախնական ընտրության անցկացման կարգը

14.10.1. Կազմակերպիչը մրցակցային ընտրության անցկացման ժամանակ իրավունք ունի անցկացնելու գնման մասնակիցների նախնական ընտրություն՝ Պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին դրանց համապատասխանությունը բացահայտելու նպատակով:

14.10.2. Մրցակցային ընտրություն անցկացնելու դեպքում՝ նախնական ընտրությունով կիրառվում են սույն Դրույթով մրցակցային ընտրության համար սահմանված նորմերը և կանոնները:

14.10.3. Նախնական ընտրությունը անցած գնման մասնակիցները հրավիրվում են հետագա մասնակցության գնմանը:

14.10.4. Պատվիրատուն (Կազմակերպիչը) տեղադրում է տեղեկատվական համակարգում մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարություն, մրցակցային ընտրության մասին թղթաբանություն, նախնական մրցակցային ընտրության մասին փաստաթղթեր:

14.10.5. Նախնական ընտրությամբ մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարությունը տեղադրվում է տեղեկատվական համակարգում՝ նախնական ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման օրվա ավարտից ոչ ուշ քան հինգ օր առաջ և մրցակցային ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման օրվա ավարտից ոչ ուշ քան տաս օր առաջ և պետք է ներառի հետևյալ տեղեկությունը՝

14.10.5.1. 7.2. կետի համաձայն տեղեկություններ:

14.10.5.2. Նախնական մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի ներկայացման ժամկետը, վայրը և կարգը, տեղեկատվական համակարգի կայքը, որտեղ տեղադրված է նախնական ընտրության մասին փաստաթղթերը, նախնական ընտրության մասին փաստաթղթերը տպագիր պատճենի ներկայացման դիմաց գանձվող վճարի կատարման կարգը և ժամկետները, եթե նման վճար սահմանված է, բացառությամբ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով նախնական ընտրության մասին փաստաթղթերի ներկայացման դեպքերի:

14.10.5.3. Նախնական ընտրությունում մասնակցության հայտերի ներկայացման կարգը, վայրը և ժամկետը, նախնական ընտրությունում մասնակցության հայտերի և դրա արդյունքների ամփոփման վայրը և ուսումնասիրման ժամկետը:

14.10.6. Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից նախնական ընտրության մասին փաստաթղթերը տեղադրվում են տեղեկատվական համակարգում նախնական ընտրությամբ մրցակցային ընտրության մասին հայտարարության հետ միաժամանակ և պետք է պարունակի հետևյալ տեղեկությունը՝

14.10.6.1. 1.5. կետի համաձայն սահմանված մրցակցային ընտրության հավանական մասնակիցների նկատմամբ պահանջները:

14.10.6.2. Փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է տրամադրվեն մրցակցային ընտրության հավանական մասնակիցներին՝ ի ապացույց իրենց համապատասխանությանը սահմանված պահանջներին:

14.10.6.3. Նախնական ընտրությունում մասնակցության հայտի բովանդակության, ձևի և կազմի, դրա նախապատրաստման հրահանգի նկատմամբ պահանջներ:

14.10.6.4. Գնման մասնակիցների նախնական ընտրության մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումներ ներկայացնելու ձևերը, կարգը, ժամկետի սկիզբը և ավարտը:

14.10.7. Նախնական ընտրությամբ մրցակցային ընտրության անցկացման դեպքում մրցակցային ընտրության փաստաթղթերը տեղադրվում են տեղեկատվական համակարգում՝ նախնական ընտրությամբ մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարության և նախնական ընտրության փաստաթղթերի հետ միաժամանակ, և պետք է պարունակի 7.3. կետում շարադրված տեղեկությունը:

14.10.8. Նախնական ընտրության մասին փաստաթղթերում սահմանված ժամկետներում Կազմակերպիչն անցկացնում է դրանում նախատեսված գործընթացը գնման մասնակիցներին բացահայտելու համար, որոնք համապատասխանում են մրցակցային ընտրության հավանական մասնակիցների նկատմամբ դրված նախնական ընտրության մասին փաստաթղթերի մեջ սահմանված պահանջներին:

14.10.9. Կազմակերպիչը ուղարկում է նախնական ընտրությունն անցած մասնակիցներին մրցակցային ընտրությունում մասնակցության հրավեր:

14.10.10. Այն դեպքում, եթե նախնական ընտրության արդյունքներով գնման մասնակիցների քանակը, որոնք համապատասխանում են նախնական ընտրության մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին կազմել է երկուսից պակաս, Կազմակերպիչը/Հանձնաժողովն իրավունք ունի ճանաչել մրցակցային ընտրությունը չկայացած:

14.11. Նախնական գնի բարձրացմամբ մրցակցային ընտրության անցկացման առանձնահատկությունները

14.11.1. Մրցակցային ընտրությունը կարող է անցկացվել պայմանագրի նախնական գնի (լոտի գնի) բարձրացմամբ:

14.11.2. Նախնական գնի բարձրացմամբ մրցակցային ընտրությունն անցկացվում է էլեկտրոնային եղանակով:

14.11.3. Նախնական գնի բարձրացմամբ մրցակցային ընտրության անցկացման նպատակների համար մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարության մեջ նշվում են Կազմակերպչի կողմից սահմանված նախնական գինը, նախնական գնի

բարձրացման քայլը, ինչպես նաև նախնական գնի բարձրացման գործընթացի անցկացման ամսաթիվը և ժամը, գնման մասնակիցների գրանցման ժամանակահատվածը նախնական գնի բարձրացման գործընթացին մասնակցելու համար, մասնակիցների կողմից էլեկտրոնային հարթակում օպերատորի կողմից հայտարարվող պայմանագրի գնի մասին պայմանի ընդունման սպասման ժամանակահատվածը:

14.11.4. Կազմակերպիչը սահմանում է նախնական գինը գնման առարկայի (լոտի) նախնական (առավելագույն) գնի 20%-ից ոչ ավել գին:

14.11.5. Մասնակցելու նախնական գնի բարձրացման գործընթացում թույլատրվում են Պատվիրատուի պահանջներին համապատասխանող և գնման մասին փաստաթղթերի պահանջներին համապատասխանող և Հանձնաժողովի կողմից նախնական գնի բարձրացման գործընթացում մասնակցության թույլատրված հայտեր ներկայացրած մասնակիցները:

14.11.6. Նախնական գնի բարձրացման գործընթացում մասնակցության թույլտվության պայմանները սահմանվում են մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի մեջ:

14.11.7. Մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի մեջ սահմանված ժամկետներում Կազմակերպիչը կազմակերպում է դրանում նախատեսված Հանձնաժողովի կողմից գնման մասնակիցներին նախնական գնի բարձրացման գործընթացում մասնակցության թույլտվության գործընթացի ուսումնասիրման անցկացումը և թույլտրված գնման մասնակիցներին նախնական գնի բարձրացման գործընթացում մասնակցության հրավերի ուղարկումը:

14.11.8. Նախնական գնի բարձրացման գործընթացում գնման մասնակիցներին մասնակցության թույլտվության մասին Հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ:

14.11.9. Նախնական գնի բարձրացման գործընթացն անցկացվում է մրցույթի մասին փաստաթղթերի մեջ սահմանված կարգով հետևյալ հերթականությամբ`

14.11.9.1. Նախնական գնի բարձրացմամբ մրցակցային ընտրությունում մասնակցության թույլատրված գնման մասնակիցները գրանցվում են նախնական գնի բարձրացման գործընթացում մասնակցության համար` ծանուցում ուղարկելու միջոցով անմիջապես նախքան այն սկսելը:

14.11.9.2. Նախնական գնի բարձրացմամբ մրցակցային ընտրության անցկացման մասին հայտարարության մեջ նշված ժամին, էլեկտրոնային հարթակի օպերատորը հայտարարում է նախնական գնին հավասար պայմանագրի գինը (լոտի գինը):

14.11.9.3. Եթե մասնակիցների կողմից նախնական գնի բարձրացման գործընթացի ընդունման ժամանակահատվածի ավարտին նախնական գնի չափով պայմանագրի գնի մասին պայմաններն այդ մասնակիցներից ոչ մեկի կողմից չեն ընդունվել, էլեկտրոնային հարթակի օպերատորը հայտարարում է նախնական գնի բարձրացման մեկ քայլով ավելացած պայմանագրի գնի (լոտի գնի) մասին նոր պայման:

14.11.9.4. Էլեկտրոնային հարթակի օպերատորը հայտարարում է պայմանագրի գնի մասին պայման` ավելացնելով այն նախնական գնի բարձրացման մեկ քայլով, մինչև մրցույթի մասնակցի կողմից այդ պայմանի ընդունումը կամ գնման առարկայի (լոտի)

նախնական (առավելագույն) գնի պայմանագրի գնի մասին պայմանի բարձրացումը:

14.11.10. Նախնական գնի բարձրացման գործընթացն ավարտվում է էլեկտրոնային հարթակի օպերատորի կողմից հայտարարված հերթական պայմանագրի գնի (լոտի գնի) մասին պայմանի ընդունումից հետո կամ, եթե էլեկտրոնային հարթակի օպերատորի կողմից հաշվի առնելով նախնական գնի բարձրացման քայլը պայմանագրի գնի մասին պայմանի հերթական հայտարարման արդյունքում պայմանագրի գինը կգերազանցի գնման առարկային (լոտի) նախնական (առավելագույն) գինը:

14.11.11. Նախնական գնի բարձրացմամբ մրցակցային ընտրության արդյունքներով, մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից պայմանագրի գնի (լոտի գնի) մասին Օպերատորի կողմից էլեկտրոնային հարթակում հայտարարված պայմանն առաջինը ընդունած գնման մասնակիցը սահմանվում է գնման մասնակիցը:

14.11.12. Էլեկտրոնային հարթակի Օպերատորի կողմից նախնական գնի բարձրացման քայլը հաշվի առնելով պայմանագրի գնի մասին հայտարարվող պայմանները չեն կարող գերազանցել գնման առարկայի (լոտի) նախնական (առավելագույն) գինը:

14.11.13. Եթե էլեկտրոնային հարթակի օպերատորի կողմից նախնական գնի բարձրացման գործընթացի անցկացման ընթացքում հայտարարված գնման առարկայի (լոտի) նախնական (առավելագույն) գինը չգերազանցող պայմանագրի գնի մասին պայմանները չեն ընդունվել ոչ մի մասնակցի կողմից, նախնական գնի բարձրացմամբ մրցակցային ընտրությունը ճանաչվում է չկայացած:

14.12. Մրցակցային ընտրության արդյունքներով պայմանագրի կնքումը և կատարումը

14.12.1. Մրցակցային ընտրության արդյունքներով պայմանագրի կնքումը իրականացվում է 7.11 կետով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով 14.12 կետով սահմանված առանձնահատկությունները:

14.12.2. Այն դեպքում, եթե մրցակցային ընտրության արդյունքներով որոշված մատակարարը (կապալառուն, կատարողը) խուսափել է պայմանագիր կնքելուց, կամ չի տրամադրել պայմանագրի կատարման ապահովում, եթե մրցակցային ընտրության մասին փաստաթղթերի մեջ սահմանված է եղել նման պահանջ, Պատվիրատուն անհապաղ տեղեկացնում է Կազմակերպչին նման փաստերի մասին: Կազմակերպիչը պետք է պահանջի գնման այդ մասնակցի կողմից տրամադրված մրցակցային ընտրությունում մասնակցության հայտի ապահովումը, եթե մրցակցային ընտրության մասին փաստաթղթերով նախատեսված է եղել նման ապահովում: Հանձնաժողովն իրավունք ունի վերանայել մրցակցային ընտրության արդյունքները և ընտրել այլ մատակարար (կապալառու, կատարող), կամ Կազմակերպիչը հայտարարում է նոր գնում:

14.12.3. Եթե սույն Կարգի համաձայն մրցակցային ընտրության արդյունքներով մրցույթի մասին փաստաթղթերով սահմանված կարգով և ժամկետներում պայմանագիր չի կնքվել, Հանձնաժողովն իրավունք ունի չեղյալ հայտարարելու մրցակցային ընտրության մասին որոշումը:

14.12.4. Այն դեպքում, եթե մի քանի լոտով մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից որոշվել է գնման մեկ մասնակից, այդ մասնակցի հետ յուրաքանչյուր լոտով պետք է

կնքվի առանձին պայմանագիր:

15. ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15.1. Մարքեթինգային հետազոտությունների անցկացման ընդհանուր կարգը

15.1.1. Կազմակերպչի կողմից մարքեթինգային հետազոտությունների անցկացման հիմք է հանդիսանում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գնումների հաստատված տարեկան պլանը:

15.1.2. Մարքեթինգային հետազոտությունները անցկացվում են 15.1.5 կետով նախատեսված ընթացակարգերի հերթականության օգտագործմամբ:

15.1.2.1. Էլեկտրոնային եղանակով հարթակում էլեկտրոնային մարքեթինգային հետազոտությունների մասին տեղեկատվության տեղադրման միջոցով:

15.1.2.2. Թղթային եղանակով հավանական մատակարարներին (կապալառուներին, կատարողներին) ուղարկելու ապրանքների մատակարարում (կատարելու աշխատանքներ, մատուցել ծառայություններ) իրականացնելու հնարավորության մասին հարցումներ (թղթային եղանակով հարցումներ):

15.1.2.3. Էլեկտրոնային եղանակով մասնագիտացված տեղեկատվական համակարգերում կամ Ինտերնետ-հարթակներում պատվերը տեղադրելու և համապատասխան առաջարկներ (պատվեր) ստանալու միջոցով:

15.1.3. Մարքեթինգային հետազոտությունները հայտարարվում են ոչ ուշ քան մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտից 5 աշխատանքային օր առաջ:

Մարքեթինգային հետազոտությունների անցկացման մասին տեղեկությունը տեղադրվում է տեղեկատվական համակարգում, բացառությամբ դեպքերի, երբ սույն Կարգի համաձայն գնման մասին տեղեկությունն ենթակա չէ տեղադրման տեղեկատվական համակարգում, կամ երբ Պատվիրատուն իրավունք ունի չտեղադրելու տեղեկությունը տեղեկատվական համակարգում:

Սույն Կարգով նախատեսված դեպքերում տեղեկատվական համակարգում առանց մարքեթինգային հետազոտությունների և (կամ) մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության մասին տեղեկության տեղադրման մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում նման տեղեկությունը տեղադրվում է՝

Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային հարթակում՝ էլեկտրոնային հարթակում մարքեթինգային հետազոտությունների մասին տեղեկատվության տեղադրման միջոցով մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում;

Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից սահմանված մասնագիտացված տեղեկատվական համակարգերում կամ

Ինտերնետ-հարթակում՝ պատվերը մասնագիտացված տեղեկատվական համակարգերում կամ Ինտերնետ-հարթակում տեղադրման միջոցով մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում;

Պատվիրատուի (Կազմակերպչի) կայքում, եթե դա նախատեսված է գնման

պայմաններով և ուղարկվում է հավանական մատակարարներին (կապալառուներին, կատարողներին) (հավանական մասնակիցներին)՝ թղթային եղանակով մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում:

15.1.4. 15.1.2.3 կետում նշված մարքեթինգային հետազոտություններն անցկացվում են մասնագիտացված տեղեկատվական համակարգերի կամ Ինտերնետ-հարթակների կանոնակարգերով նախատեսված առանձնահատկություններով, այդ թվում նաև 15.4 (անհրաժեշտության դեպքում) կետով նախատեսված առանձին տեղեկությունները դրանում ներառելով պատվերի կազմումը հնարավոր համարող, առանց էլեկտրոնային եղանակի մարքեթինգային հետազոտության մասին թղթաբանության հավելվածի:

15.1.5. Մարքեթինգային հետազոտություններն անցկացվում են հետևյալ հերթականությամբ՝

Պատվիրատուի կողմից մարքեթինգային հետազոտությունների պայմանների, պահանջների սահմանում;

Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից մարքեթինգային հետազոտություններ անցկացնելու համար փաստաթղթերի պատրաստում;

Մարքեթինգային հետազոտությունների հայտարարում (մարքեթինգային հետազոտությունների մասին տեղեկատվության տեղադրում);

Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ընդունում, Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի բացում (հայտերի հասանելիության բացում);

Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ուսումնասիրում և գնահատում;

Մարքեթինգային հետազոտությունների մասին որոշման ընդունում;

Մարքեթինգային հետազոտությունների արդյունքների մասին տեղեկատվության հրապարակում (անհրաժեշտության դեպքում սույն Դրույթի համաձայն); Մարքեթինգային հետազոտությունների արդյունքների մասին որոշման մեջ նշված մասնակցի հետ պայմանագրի կնքում:

15.1.6. Չի թույլատրվում գնման մասնակիցներից մարքեթինգային հետազոտություններում մասնակցության դիմաց վճարի գանձում, բացառությամբ մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության տպագիր պատճենի տրամադրման դիմաց վճարի (միայն այն դեպքում, եթե մարքեթինգային հետազոտություններն անցկացվում են թղթային եղանակով):

15.1.7. Հարցման և թղթային եղանակով հարցման մեջ ներառվում են 15.4 կետով նախատեսված տեղեկությունները:

15.1.8. Թղթային եղանակով մարքեթինգային հետազոտություններում մասնակցության համար հավանական մատակարարների (կապալառուների, կատարողների) ցուցակը սահմանվում է Գազպրոմ Խմբի գնումների կառավարման

Կենտրոնական մարմնի կողմից՝ գնումների Նախաձեռնողի առաջարկով: Կազմակերպչին հասցեագրված գնման այլ հավանական մասնակիցների հավանական գրավոր դիմումների առկայության դեպքում, Կազմակերպիչն իրավունք ունի նրանց լրացուցիչ ներառել

հավանական մատակարարների (կապալառուների, կատարողների) ցուցակում իրենց թղթային եղանակով անհրաժեշտ հարցումն ուղարկելու համար:

15.2. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների իրականացման առանձնահատկությունները

15.2.1. Եթե սույն Դրույթի համաձայն մարքեթինգային հետազոտությունների պայմաններով նախատեսված է տեղեկատվական համակարգում մարքեթինգային հետազոտությունների մասին տեղեկատվության տեղադրում, մարքեթինգային հետազոտությունների մասին տեղեկատվությունը և մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերը պետք է տեղադրվեն Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային հարթակում կամ մասնագիտացված տեղեկատվական համակարգում կամ Ինտերնետ-հարթակում Պատվիրատուի կողմից այդ գնման մասին տեղեկատվական համակարգում տեղեկատվության տեղադրման օրվանից ոչ ուշ քան մեկ աշխատանքային օր՝ Ինտերնետ ցանցի տեղեկատվական համակարգում պարտադիր նշելով հասցեի հղումը:

15.2.2. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտություններում մասնակցելու համար, մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի համաձայն գնման մասնակցին անհրաժեշտ է գրանցվելու (հավատարմագրվելու) դրանում նշված էլեկտրոնային հարթակում համաձայն դրանում գործող կանոնների և կանոնակարգերի կամ մասնագիտացված տեղեկատվական համակարգում կամ Ինտերնետ-հարթակում համաձայն դրանցում գործող կանոնների և կանոնակարգերի:

15.2.3. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների իրականացման գարծնթացում ներկայացվող էլեկտրոնային փաստաթղթերը (այդ թվում նաև փաստաթղթերի սկան-պատճենների օրիգինալների կամ նոտարական կարգով վավերացված պատճենները) պետք է ստորագրվեն գնման մասնակցի (գնման մասնակցի անունից գործելու իրավունք ունեցող անձի) որոկավորված էլեկտրոնային ստորագրությամբ կամ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող անձի (գնման մասնակցի անունից գործելու իրավունք ունեցող անձի), գնման մասնակցի հասարակ կամ չորակավորված էլեկտրոնային ստորագրությամբ, եթե դա նախատեսված է մարքեթինգային հետազոտությունների անցկացման պայմաններով համաձայն էլեկտրոնային հարթակի (մասնագիտացված տեղեկատվական համակարգի կամ Ինտերնետ-հարթակի) կանոնակարգի:

15.2.4. Որակավորված էլեկտրոնային ստորագրությունները, որակավորված էլեկտրոնային ստորագրությունների միջոցները և որակավորված սերտիֆիկատները պետք է տրվեն հավատարմագրային հաստատող կենտրոնների կողմից: Չորոկավորված էլեկտրոնային ստորագրությունների օգտագործման պայմանները սահմանվում են Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից:

15.2.5. Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից սահմանված էլեկտրոնային հարթակում (մասնագիտացված տեղեկատվական համակարգում կամ Ինտերնետ-հարթակում) էլեկտրոնային եղանակով մարքեթինգային

հետազոտությունների անցկացման դեպքում, թույլատրվում են սույն բաժնով նախատեսված, էլեկտրոնային հարթակի (մասնագիտացված տեղեկատվական համակարգի կամ Ինտերնետ-հարթակի) տեխնիկական առանձնահատկություններով պայմանավորված մարքեթինգային հետազոտությունների գործընթացի կազմի և անցկացման կարգից առանձին շեղումներ, ընդ որում պետք է ապահովված լինի ՀՀ օրենսդրության նորմերի պահպանումը: Էլեկտրոնային հարթակի (մասնագիտացված էլեկտրոնային համակարգում կամ Ինտերնետ-հարթակում) օպերատորի կողմից էլեկտրոնային փաստաթղթերի ձևով գնման մասնակցին, Պատվիրատուին, Կազմակերպչին ուղարկվող կամ էլեկտրոնային հարթակի օպերատորի կողմից (մասնագիտացված էլեկտրոնային համակարգի կամ Ինտերնետ-հարթակի) այդ հարթակում (մասնագիտացված էլեկտրոնային համակարգում կամ Ինտերնետ-հարթակում) տեղադրվող փաստաթղթերը և տեղեկությունները պետք է ստորագրվեն էլեկտրոնային հարթակի (մասնագիտացված էլեկտրոնային համակարգի կամ Ինտերնետ-հարթակի) օպերատորի անունից գործելու իրավունք ունեցող անձի որակավորված էլեկտրոնային ստորագրությամբ կամ վավերացվեն էլեկտրոնային հարթակի օպերատորի (մասնագիտացված էլեկտրոնային համակարգի կամ Ինտերնետ-հարթակի) կողմից ծրագրային և տեխնիկական միջոցների օգնությամբ:

15.2.6. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին հայտարարությունների, էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի, էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների պարզաբանումների մեջ մտցնվող փոփոխությունները տեղադրվում են էլեկտրոնային հարթակում (մասնագիտացված տեղեկատվական համակարգում կամ Ինտերնետ-հարթակում) նշված փոփոխությունները մտցնելու, նշված պարզաբանումները ներկայացնելու մասին որոշում ընդունելու օրվանից ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում:

15.3. Տեղեկատվություն մարքեթինգային հետազոտությունների մասին

Պատվիրատուն (Կազմակերպիչը) տեղադրում է տեղեկատվական համակարգում մարքեթինգային հետազոտությունների մասին տեղեկատվությունը հայտարարման ձևով, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Կարգի համաձայն գնման մասին տեղեկատվությունն ենթակա չէ տեղադրման տեղեկատվական համակարգում կամ երբ Պատվիրատուն իրավունք ունի չտեղադրելու այդ տեղեկատվությունը տեղեկատվական համակարգում:

15.3.1. Մարքեթինգային հետազոտությունների մասին հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

15.3.1.1. Գնման եղանակը:

15.3.1.2. Պատվիրատուի, Կազմակերպչի անվանումը, գնտվելու վայրը, փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային հեռախոսի համարը:

15.3.1.3. Գնման (լոտի) առարկան:

15.3.1.4. Պայմանագրի նախնական (առավելագույն) գնի (լոտի գնի) մասին տեղեկությունները, այդ թվում նաև դրա սահմանման կարգը (անհրաժեշտության դեպքում):

15.3.1.5. Գնման մասնակիցներին (հավանական մատակարարներին (կապալառուներին, կատարողներին)) մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության հասանելիության տրամադրման պայմանները:

15.3.1.6. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի վայրը, ամսաթվերը և ներկայացման սկզբի և ավարտման ժամանակը:

15.3.1.7. Մարքեթինգային հետազոտությունների անցկացման մասին հայտարարության և էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ փոփոխություններ մտցնելու Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունքի մասին տեղեկությունները, ցանկացած ժամանակ մինչև մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտը, բացառությամբ հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման և հայտերի հասանելիության բացման ամսաթվի և ժամի, գնման մասնակիցների առաջարկների ուսումնասիրման ամսաթվի տեղափոխման և մարքեթինգային հետազոտությունների արդյունքների ամփոփումը:

15.3.1.8. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետն երկարաձգելու և համապատասխանաբար հասանելիության բացման (հայտերի հասանելիության բացման) գործընթացի անցկացման ամսաթիվը և ժամը տեղափոխելու Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունքի մասին տեղեկությունները ցանկացած ժամանակ մինչև մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի (հայտերի հասանելիության բացման) բացման գործընթացի անցկացումը, ինչպես նաև մինչև գնման արդյունքների ամփոփումը, փոխելու գնման մասնակիցների առաջարկների ուսումնասիրման և մարքեթինգային հետազոտությունների արդյունքների ամփոփման ամսաթիվը:

15.3.1.9. Մարքեթինգային հետազոտությունների անցկացումից ցանկացած ժամանակ մինչև դրա արդյունքների ամփոփումը Պատվիրատուի (Կազմակերպչի) հրաժարվելու իրավունքի, ինչպես նաև մարքեթինգային հետազոտությունների արդյունքներով Պատվիրատուի պայմանագիր կնքելու պարտավորությունից հրաժարվելու մասին տեղեկությունները:

15.3.1.10. Գնման մասնակիցների առաջարկների ուսումնասիրման ամսաթիվը:

15.3.1.11. Մատնանշումը, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465 հոդվածների համաձայն մարքեթինգային հետազոտությունները չեն հանդիսանում սակարկություններ (մրցույթ, աճուրդ, առաջարկների հարցում, գնանշումների հարցում) կամ հասարակական մրցույթ կամ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1043-1047 հոդվածների համաձայն հասարակական մրցույթ և կազմակերպչի և Պատվիրատուի վրա չեն դնում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածներով սահմանված պարտականություններ:

15.3.1.12. Հայտերի բացման (մարքեթինգային հետազոտություններում մասնակցության էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված հայտերին հասանելիության բացման) ժամկետը (ամսաթիվը, ժամը):

15.3.1.13. Մարքեթինգային հետազոտությունների մասին հայտարարությունը կարող է պարունակել գնման մասնակիցների մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի նախապատրաստման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

15.4. Մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթեր

Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

15.4.1. Մարքեթինգային հետազոտության առարկայի նկարագրությունը համաձայն Պատվիրատուի կողմից գնման (լոտի) առարկա հանդիսացող ապրանքի (աշխատանքի, ծառայության) նկատմամբ սահմանված պահանջների:

15.4.2. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի բովանդակության, ձևի, ձևակերպման, կազմի, գործողության ժամկետի, դրա նախապատրաստման հրահանգների նկատմամբ պահանջները:

15.4.3. Գնման առարկան՝ նշելով մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալը, բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավոր չէ որոշել ապրանքի քանակը, աշխատանքների, ծառայությունների հստակ ծավալը:

15.4.4. Գնման մասնակիցների կողմից մատակարարվող գնման առարկա հանդիսացող ապրանքի նկարագրության, դրա գործառնությանը բնութագրերի (սպառողական հատկությունների), դրա քանակական և որակական բնութագրերի նկատմամբ պահանջներ, գնման մասնակիցների կողմից գնման առարկա հանդիսացող կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության նկարագրության, դրանց քանակական և որակական բնութագրերի նկատմամբ պահանջներ:

15.4.5. Ապրանքի մատակարարման, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության վայրը, պայմանները և ժամկետները (ժամանակահատվածները):

15.4.6. Պայմանագրի (լոտի գնի) նախնական (առավելագույն) գնի մասին տեղեկություններ, այդ թվում նաև դրա սահմանման կարգը (անհրաժեշտության դեպքում):

15.4.7. Ապրանքի, աշխատանքի, ծառայության վճարման ձևը, ժամկետները և կարգը:

15.4.8. Պայմանագրի գնի (լոտի գնի) ձևավորման կարգը (հաշվի առնելով կամ առանց հաշվի առնելու փոխադրման, ապահովագրման, մաքսային տուրքերի, հարկերի և այլ պարտադիր վճարների կատարման ծախսերը):

15.4.9. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման կարգը:

15.4.10. Հայտերի բացման կարգը (Էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված հայտերի հասանելիության բացում):

15.4.11. Գնման մասնակիցների նկատմամբ պահանջները և սահմանված պահանջներին իրենց համապատասխանության հաստատման համար գնման մասնակիցների կողմից տրամադրվող փաստաթղթերի ցանկը:

15.4.12. Գնման մասնակիցների կողմից էլեկտրոնային եղանակով մարքեթինգային

հետազոտությունների մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումների ներկայացման ձևերը, կարգը, սկզբի և ավարտման ամսաթվերը:

15.4.13. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերը մերժելու Մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի իրավունքի մասին տեղեկությունները էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին իրենց անհամապատասխանության դեպքում՝ նշելով այդպիսի մերժման համար ընդունելի հիմքերի ցանկը:

15.4.14. Առանց Կազմակերպչի լրացուցիչ առաջարկների արդյունքների ամփոփման օրվան նախորդող օրվա ցանկացած ժամանակ մինչև ժամը 15:00՝ իր կողմից առաջարկված հայտի գինը նվազեցնելու Մարքեթինգային հետազոտությունների մասնակցի իրավունքի մասին տեղեկություններ:

15.4.15. Մարքեթինգային հետազոտությունների անցկացումից ցանկացած ժամանակ առանց պատճառների բացատրության Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունքի մասին տեղեկությունները, ընդ որում չկրելով որևէ պատասխանատվություն գնման մասնակիցների առջև, ինչպես նաև մարքեթինգային հետազոտությունները ցանկացած ժամանակ առանց դրանց արդյունքներով պայմանագիր կնքելու Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունքի մասին տեղեկությունները:

15.4.16. Մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների առաջարկների ուսումնասիրման վայրը (թղթային եղանակով մարքեթինգային հետազոտությունների համար):

15.4.17. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի չափը, ձևը, գործողության ժամկետը, ապահովման տրամադրման կարգը և ժամկետն այն դեպքում, երբ Կազմակերպչի կողմից սահմանված են նման պահանջներ:

15.4.18. Պայմանագրի պայմանների չափը, ձևը, գործողության ժամկետը, կատարման ապահովման տրամադրման ժամկետը և կարգը, եթե Պատվիրատուի կողմից սահմանված են նման պահանջներ:

15.4.19. Պայմանագրի նախագիծը (մի քանի լուտերով մարքեթինգային հետազոտություններ անցկացնելու դեպքում՝ յուրաքանչյուր լուտի նկատմամբ պայմանագրի նախագիծը), որը հանդիսանում է մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության անբաժանելի մասը:

15.4.20. Մի քանի մասնակիցների առաջարկներն ընտրելու մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի իրավունքի մասին տեղեկությունները, մարքեթինգային հետազոտությունների արդյունքներով մի քանի պայմանագիր կնքելու Պատվիրատուի իրավունքի մասին տեղեկություններ (անհրաժեշտության դեպքում):

15.4.21. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերը կարող են պարունակել մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի պատրաստման համար գնման մասնակիցներին անհրաժեշտ այլ տեղեկություններ:

15.5. Մարքեթինգային հետազոտությունների անցկացման պայմանները

15.5.1. Պատվիրատուն, Կազմակերպիչը մարքեթինգային հետազոտությունների անցկացման մասին ծանուցումը տեղադրելուց հետո կարող են ուղարկել մարքեթինգային հետազոտությունների հավանական մասնակիցներին մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հրավերներ:

15.5.2. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերը ծանոթանալու համար պետք է հասանելի լինի Ինտերնետ ցանցի կայքում առանց վճարի գանձման:

15.5.3. Կազմակերպիչը պարտավոր է պատասխանել գնման մասնակցի պարզաբանումների հարցման համար դրանում սահմանված ժամկետից ոչ ուշ ստացված էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի պարզաբանմանը վերաբերվող ցանկացած գրավոր հարցմանը:

15.5.4. Մինչև մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտը, Պատվիրատուն (Կազմակերպիչը) կարող է մտցնել մարքեթինգային հետազոտությունների մասին հայտարարության և էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ փոփոխություններ: Մինչև մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի բացման (էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի հասանելիության բացման) գործընթացի անցկացման սկիզբը, Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի երկարաձգել մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետը և համապատասխանաբար, տեղափոխել հայտերի բացման (հայտերի հասանելիության բացման) գործընթացի անցկացման ամսաթիվը և ժամը: Մինչև մարքեթինգային հետազոտությունների արդյունքների ամփոփումը Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի փոխել գնման մասնակիցների առաջարկների ուսումնասիրման և մարքեթինգային հետազոտությունների արդյունքների ամփոփման ամսաթիվը:

15.5.5. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերով (պատվերով, թղթային եղանակով հարցումով) կարող են նախատեսվել մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների այլընտրանքային առաջարկների ներկայացման պայմաններ:

15.5.6. Գնման մասնակիցների կողմից մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի, թղթային եղանակով հարցման) անբաժանելի մասը հանդիսացող պայմանագրի նախագծի փոփոխման առաջարկների, դրա առանձին պայմանների ներկայացումը չի թուլատրվում:

15.6. Մարքեթինգային հետազոտությունների անցկացումից հրաժարում

15.6.1. Պատվիրատուն, Կազմակերպիչը իրավունք ունեն հրաժարվել մարքեթինգային հետազոտությունների անցկացումից, ինչպես նաև ցանկացած ժամանակ ավարտել մարքեթինգային հետազոտությունների գործընթացն առանց դրա արդյունքներով պայմանագիր կնքելու, ընդ որում Պատվիրատուն, Կազմակերպիչը չեն հատուցում

մարքեթինգային հետազոտությունների մասնակցին իր կողմից մարքեթինգային հետազոտությունների գործընթացներում մասնակցության հետ կապված կրած ծախսերը:

15.6.2. Մարքեթինգային հետազոտությունների անցացումից հրաժարվելու մասին հայտարարությունը Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից ուղարկվում է գնման մասնակցին թղթային ձևով կամ Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղադրվում է էլեկտրոնային հարթակում, ինչպես նաև տեղեկատվական համակարգում այն դեպքում, երբ սույն Կարգի համաձայն մարքեթինգային հետազոտությունների մասին ծանուցումը տեղադրված է տեղեկատվական համակարգում:

15.6.3. 15.6.2. կետի համաձայն մարքեթինգային հետազոտությունների անցկացումից հրաժարվելու մասին ծանուցումը ուղարկելուց (տեղադրելուց) հետո, Կազմակերպիչը գնման մասնակցի գրավոր հարցումով վերադարձնում է մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի ապահովումը, եթե այն ներկայացվել էր էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանությամբ (պատվերով, թղթային եղանակով հարցումով) նախատեսված կարգով մասնակցի կողմից:

15.7. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացում

15.7.1. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության համար, գնման մասնակիցը ներկայացնում է ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին թղթաբանությամբ սահմանված պահանջների համաձայն մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի ձևով գնման (լոտի) առարկա հանդիսացող պայմաններով իր առաջարկները:

15.7.2. Մասնակիցը կարող է փոփոխել, լրացնել կամ ետ կանչել մարքեթինգային հետազոտություններում մասնակցության իր հայտն այն ներկայացնելուց հետո պայմանով, որ Կազմակերպիչը կստանա առաջարկի փոխարինման, լրացման կամ ետ կանչելու մասին գրավոր ծանուցում մինչև մարքեթինգային հետազոտությունների մասին ծանուցման մեջ սահմանված մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտը:

15.7.3. Հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո ստացված մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտը չի ուսումնասիրվում:

15.7.4. Այն դեպքում, եթե դա նախատեսված է էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանությամբ (պատվերով, թղթային եղանակով հարցումով), մարքեթինգային հետազոտությունների մասնակիցն էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերով (թղթային եղանակով հարցումով) սահմանված կարգով մինչև գնման արդյունքների ամփոփման օրվան նախորդող օրվա ժամը 15:00 իրավունք ունի նվազեցնելու իր կողմից հայտարարված գինը՝ ներկայացնելով էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի, թղթային եղանակով հարցման) պահանջների

համաձայն ձևակերպված նոր առևտրային առաջարկ:

15.7.5. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում, էլեկտրոնային հարթակի (մասնագիտացված տեղեկատվական համակարգի կամ Ինտերնետ-հարթակի) օպերատորը կամ Կազմակերպիչը (թղթային եղանակով մարքեթինգային հետազոտությունների, ինչպես նաև 15.12 կետում նշված մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում) տրամադրում է գնման մասնակցին նրա նույնականացման համարը և հայտնում է դրա մասին գնման մասնակցին մարքեթինգային հետազոտությունների անցկացման ընթացքում կազմվող արձանագրության ստորագրման ամսաթվից առաջ:

15.8. Հայտերի բացում. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի հասանելիության բացում

15.8.1. Թղթային եղանակով մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի բացումն իրականացվում է Կազմակերպչի կողմից մարքեթինգային հետազոտությունների մասին հայտարարության մեջ սահմանված ժամկետում:

15.8.2. Էլեկտրոնային հարթակի օպերատորը, էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության մեջ սահմանված ժամկետում ապահովում է բոլոր հայտերի և դրանցում առկա փաստաթղթերի և տեղեկությունների գնման Կազմակերպչի հասանելիության միաժամանակյա բացում:

15.8.3. Գնման մեկ մասնակցի կողմից մարքեթինգային հետազոտություններում մասնակցության երկու և ավելի հայտ ներկայացնելու դեպքում, պայմանով, որ նախկինում մարքեթինգային հետազոտություններում մասնակցության ներկայացված հայտերը այդ մասնակցի կողմից ետ չեն կանչվել, գնման այդ մասնակցի այն մարքեթինգային հետազոտությունների նկատմամբ ներկայացված մարքեթինգային հետազոտություններում մասնակցության բոլոր հայտերը չեն ընդունվում ուսումնասիրության:

15.8.4. Այն դեպքում, եթե մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտին չի ներկայացվել մարքեթինգային հետազոտություններում մասնակցության որևէ հայտ, Կազմակերպիչն իրավունք ունի մարքեթինգային հետազոտությունները չկայացած ճանաճելու:

15.8.5. Մարքեթինգային հետազոտությունները չկայացած ճանաչելու դեպքում, Կազմակերպիչն իրավունք ունի անցկացնել կրկնակի մարքեթինգային հետազոտություններ, իսկ կրկնակի մարքեթինգային հետազոտություններ անցկացնելուց հրաժարվելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի կնքել պայմանագիր միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ՝ համաձայն 17.1.8 կետի:

15.8.6. Այն դեպքում, եթե մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ներկայացման ժամկետի ավարտին ներկայացվել է մարքեթինգային հետազոտություններում մասնակցության միայն մեկ հայտ, ապա մարքեթինգային հետազոտություններում մասնակցության այդ հայտը բացվում է, իրականացվում է դրա վերլուծություն, ուսումնասիրություն և գնահատում մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանությամբ սահմանված կարգով:

15.9. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի վերլուծություն, ուսումնասիրություն և գնահատում

15.9.1. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի վերլուծությունը, ուսումնասիրությունը և գնահատումը կարող են իրականացվել միաժամանակ կամ հերթականությամբ:

15.9.2. Կազմակերպիչը իրականացնում է մարքեթինգային հետազոտություններում մասնակցելու հայտերի էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի, թղթային եղանակով հարցման) պահանջներին համապատասխանության վերլուծություն, այդ թվում նաև՝

մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի առարկայի էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի թղթային եղանակով հարցման) մեջ նշված գնման առարկային համապատասխանության, այդ թվում նաև քանակական ցուցանիշներով (մատակարարվող ապրանքի քանակ, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալ);

էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին թղթաբանությամբ սահմանված փաստաթղթերի առկայության և պատշաճ ձևակերպման;

էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին փաստաթղթերի մեջ առկա պայմանագրի նախագծի պայմաններին գնման մասնակցի համաձայնության առկայության;

մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի ապահովման առկայության, եթե էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին փաստաթղթերի մեջ սահմանված է այլ պահանջ;

Պատվիրատուի, Կազմակերպչի կողմից սահմանված մարքեթինգային հետազոտությունների (պայմանագրի) նախնական (առավելագույն) գնից մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտում առկա պայմանագրի (գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գնով առաջարկի չբարձացման:

15.9.3. Կազմակերպչի կողմից անցկացվում է մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների մասին տեղեկատվության ստուգում, այդ թվում նաև էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին թղթաբանության մեջ սահմանված պարտադիր պահանջներին և մանակիցների նկատմամբ այլ պահանջներին նրանց համապատասխանության ստուգում, իրականացվում է մասնակցի վճարունակության և աշխատանքային հեղինակության գնահատում՝ կորպորատիվ պաշտպանության ծառայությունը:

15.9.4. Կազմակերպիչն իրավունք ունի մարքեթինգային հետազոտությունների մասնակիցներից պահանջելու նրանց կողմից ներկայացված մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի դրույթների պարզաբանման

տրամադրում:

15.9.5. Կազմակերպիչը մարքեթինգային հետազոտությունների մասնակցի գրավոր համաձայնությամբ կարող է մասնակցի հայտի մեջ ուղղել ակնհայտ թվաբանական և քերականական սխալները:

15.9.6. Բառերով և թվերով արտահայտված գումարների միջև անհամապատասխանությունների դեպքում՝ նախապատվությունը տրվում է բառերով արտահայտված գումարին:

15.9.7. Մեկանգամյա գնահատումը քանակի վրա բազմապատկելու արդյունքում ստացված մեկանգամյա գնահատման և ընդհանուր գումարի միջև հակասությունների առկայության դեպքում, առավելություն ունի մեկանգամյա գնահատումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կազմակերպչի կարծիքով բացարձակ ակնհայտ է կատարվել է կոպիտ սխալ մեկանգամյա գնահատման մեջ տասնորդական կոտորակի նշան դնելը: Նման դեպքերում առավելություն ունի ընդհանուր գինը, իսկ մեկանգամյա գնահատումը պետք է ուղղվի:

15.9.8. Կազմակերպիչը իրավունք ունի ուշադրություն չդարձնելու մանր թերությունների, անհամապատասխանությունների և անճշտությունների վրա, որոնք էական ազդեցություն չունեն մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների կողմից առաջարկվող պայմանների և մարքեթինգային հետազոտությունների մասնակցի հնարավորությունների վրա՝ կապված պայմանագրով պարտավորությունների կատարման հետ:

15.9.9. Հայտերի վերլուծության և մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների մասին տեղեկատվության ստուգման արդյունքներով Կազմակերպիչը մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովին է ներկայացնում տեղեկատվություն որոշում ընդունելու համար, այդ թվում նաև մարքեթինգային հետազոտությունում մասնակցության հայտերի մերժման առաջարկներ՝ 1.5.կետի համաձայն էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին թղթաբանության մեջ սահմանված պահանջներին մարքեթինգային հետազոտությունների մասնակցի անհամապատասխանության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, եթե մասնակցի կողմից առաջարկված պայմանագրի (գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գինը գերազանցում է էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին թղթաբանության կամ մարքեթինգային հետազոտությունների անցկացման մասին հայտարարության մեջ նշված, մարքեթինգային հետազոտությունների առարկայի (պայմանագրի) նախնական (առավելագույն) գինը, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին թղթաբանության մեջ նշված այլ հիմքերով:

15.9.10. Կազմակերպչի կողմից անցկացված մարքեթինգային հետազոտությունների հայտերի վերլուծության և մասնակիցների մասին տեղեկատվության ստուգման արդյունքներով, մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովն իրավունք ունի մերժել մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտը հետևյալ

դեպքերում՝

15.9.10.1. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի առարկայի անհամապատասխանությունն էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների (պատվերի, թղթային եղանակով հարցման) մասին թղթաբանության մեջ նշված գնման առարկային, այդ թվում նաև քանակական ցուցանիշներով (մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքների ծավալի, մատուցվող ծառայությունների քանակի անհամապատասխանություն):

15.9.10.2. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերով (պատվերների, թղթային եղանակով հարցումով) սահմանված փաստաթղթերի բացակայության կամ այդ փաստաթղթերում մարքեթինգային հետազոտությունների մասնակցի կամ գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին ոչ հավաստի տեղեկությունների առկայության:

15.9.10.3. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի բացակայության, եթե էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ սահմանված է այդ պահանջը:

15.9.10.4. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ առկա պայմանագրի նախագծի պայմանների հետ մարքեթինգային հետազոտությունների մասնակցի անհամաձայնության:

15.9.10.5. Պայմանագրի (լրտի) սահմանված նախնական (առավելագույն) գինը գերազանցող պայմանագրի (գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գնի (լրտի գնի) առաջարկի առկայության:

15.9.10.6. Մարքեթինգային հետազոտությունների մասնակցի կողմից Կազմակերպչին, Կազմակերպչի գրավոր հարցումով մարքեթինգային հետազոտություններում մասնակցության նրա կողմից ներկայացված հայտի դրույթների գրավոր պարզաբանումներ չներկայացնելու, այդ թվում նաև ակնհայտ քերականական սխալների, բառերով և թվերով արտահայտված գումարների միջև հակասությունների, մեկանգամյա գնահատումը քանակի վրա բազմապատկելու արդյունքում ստացված ընդհանուր գումարի և մեկանգամյա գնահատման միջև հակասությունների ուղղման հետ անհամաձայնության:

15.9.10.7. Անբարեխիղճ մատակարարների ռեեստրներում մարքեթինգային հետազոտությունների մասնակցի մասին տեղեկությունների առկայության, եթե էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ համաձայն 1.5.2.2. կետի սահմանված է եղել նման պահանջ՝ նշելով անբարեխիղճ մատակարարների համապատասխան ռեեստրը:

15.9.10.11. Այն դեպքում, եթե գնման մասնակցի կողմից ներկայացված մրցակցային գնմանը մասնակցելու հայտում ոչ հավաստի տեղեկությունների, գնման մասնակցի, ինչպես նաև պայմանագրի կատարման համար իր կողմից ներգրավվող գնումների մասնակիցների, համակատարողների (ենթակապալառուների) նկատմամբ էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերով (պատվերով, թղթային

եղանակով հարցումով) սահմանված պահանջների, մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերով (պատվերով, թղթային եղանակով հարցումով) գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների նկատմամբ սահմանված պահանջներին անհամապատասխանության հայտնաբերման դեպքում:

15.9.10.12. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ կարող են սահմանվել սույն Կարգին չհակասող մասնակիցների հայտերի մերժման լրացուցիչ հիմքեր:

15.9.13. Այն դեպքում, եթե մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի վերլուծության և մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների մասին տեղեկատվության ստուգման արդյունքներով մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի կողմից մերժվել են մարքեթինգային հետազոտություններում մասնակցության բոլոր հայտերը, մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովն ընդունում է այդ մարքեթինգային հետազոտությունները չկայացած ճանաչելու մասին որոշում:

15.9.14. Այն դեպքում, եթե էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանությամբ (պատվերով, թղթային եղանակով հարցումով) նախատեսված է երկու և ավելի լոտ, մարքեթինգային հետազոտությունները ճանաչվում են չկայացած միայն այն լոտի նկատմամբ, որով ընդունվել է այդ լոտի նկատմամբ մարքեթինգային հետազոտություններում մասնակցության բոլոր հայտերի մերժման մասին որոշում:

15.9.15. Այն դեպքում, եթե մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի վերլուծության արդյունքներով մարքեթինգային հետազոտություններում մասնակցության միայն մեկ հայտ չի մերժվել, ապա մարքեթինգային հետազոտություններում մասնակցության այդ հայտը գնահատվում է էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանությամբ (պատվերով, թղթային եղանակով հարցումով) սահմանված կարգով:

15.9.16. Պայմանագրի առավելագույն շահավետ կատարման որոշման նպատակով անցկացվում է մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ուսումնասիրում և գնահատում: Այն դեպքում, եթե ընդունվել է մարքեթինգային հետազոտություններում մասնակցության մերժման մասին որոշում, ուսումնասիրվում և գնահատվում են միայն մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերը, որոնք չեն մերժվել:

15.9.17. Կազմակերպիչը (Դեպարտամենտ, գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանում) իրավունք ունի մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի ուսումնասիրմանը, գնահատմանը և համադրմանը ներգրավել մասնագետների՝ Կազմակերպչի պրոֆիլային ստորաբաժանումներին, Պատվիրատուին, գնման առարկային մասնագիտական գիտելիքներին տիրապետող կողմնակի անձանց:

15.9.18. Այն դեպքում, եթե մարքեթինգային հետազոտություններում մասնակցության

հայտերի ներկայացման ժամկետի ավարտին ներկայացվել է միայն մեկ հայտ, ապա մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովն իրավունք ունի ճանաչելու մարքեթինգային հետազոտությունները չկայացած:

15.9.19. Մարքեթինգային հետազոտությունների մասով Հանձնաժողովը յուրաքանչյուր հայտին տալիս է հերթական համար՝ պայմանագրի կատարման պայմանների շահութաբերության աստիճանի դրանցում առկա պայմանագրի կատարման պայմանների նվազեցման կարգով:

15.9.20. Այն դեպքում, եթե մարքեթինգային հետազոտությունների մի քանի մասնակից ներկայացրել են նույն առաջարկները (շահութաբերության աստիճանով գնման), ապա նվազագույն հերթական համարը տրվում է վերջին առաջարկը ավելի շուտ ներկայացրած մասնակցի հայտին:

15.10. Մարքեթինգային հետազոտություններում մասնակցության արդյունքների ամփոփում

15.10.1. Մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների առաջարկների ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա, մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի կողմից կարող են ընդունվել հետևյալ որոշումները՝

մարքեթինգային հետազոտությունների մասնակիցների կողմից առաջարկված քանակից ապրանքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) մատակարարման առավելագույն բարենպաստ պայմանների ընտրության մասին;

մարքեթինգային հետազոտություններում մասնակցության բոլոր հայտերի մերժման, մարքեթինգային հետազոտությունները չկայացած ճանաչելու մասին;

մարքեթինգային հետազոտությունների անցկացումից հրաժարվելու մասին;

մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերի լրացուցիչ առաջարկների հավաքագրման և լրացուցիչ գնահատման անցկացման մասին:

Մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որում, գնման (գնման առարկայի և միջոցի, Կազմակերպչի, Պատվիրատուի անվանումը, գնման անցկացման համարները և հայտարարման ամսաթվերը) մասին ընդհանուր տեղեկություններից բացի պետք է լինեն հետևյալ տեղեկությունները՝

15.7.5. կետի համաձայն տրված մասնակցի նույնականացման համարը (առանց (իրավաբանական անձի) անվանումը և գնվելու վայրը, (ֆիզիկական անձի համար) այդ մասնակիցների ազգանունները, անունները, հայրանունները նշելու);

ընդունված որոշման մասին;

Լավագույն հայտը որոշելու մասին որոշում ընդունելու դեպքում նշվում է գնման մասնակցի 15.7.5. կետի համաձայն տրված նույնականացման համարը և մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտ ներկայացրած մասնակցի լավագույնը ճանաչված առաջարկի գինը:

15.10.2. Մարքեթինգային հետազոտությունների անցկացման ընթացքում կազմվող արձանագրությունները Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղադրվում են տեղեկատվական համակարգում, այդ արձանագրությունները ստորագրելու օրվանից ոչ ոչ

քան երեք օր հետո:

15.10.3. Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերով (պատվերով, թղթային եղանակով հարցումով) սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպիչը ծանուցում է մասնակցին իր առաջարկի ընտրության մասին, պայմանագրի կատարման մասին, որպես մարքեթինգային հետազոտությունների արդյունքներով առավել շահութաբերը:

15.11. Մարքեթինգային հետազոտությունների արդյունքներով պայմանագրի կնքում և կատարում

15.11.1. Պայմանագիրը կնքվում է մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի արձանագրության համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի, թղթային եղանակով հարցումով) մեջ նշված պայմաններով: Մարքեթինգային հետազոտությունների արդյունքներով կնքվող պայմանագրի գինը, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մեկանգամյա դրույքաչափերը պետք է ձևակերպված լինեն սույն Կարգով և մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության պահանջների համաձայն, չեն կարող գերազանցել մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի մեջ Պատվիրատուի (Կազմակերպիչի) կողմից սահմանված պայմանագրի գնի (լոտի գնի) նախնական (առավելագույն) գինը/ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մեկանգամյա դրույքաչափերը, ինչպես նաև մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի արձանագրության և մատակարարի (կապալառուի, կատարողի), ում հետ կնքվում է պայմանագիրը, մարքեթինգային հետազոտությունում մասնակցության հայտի բովանդակության մեջ նրա կողմից ներկայացված վերջին առևտրային առաջարկի մեջ նշված պայմանագրի/ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մեկանգամյա դրույքաչափերի գինը, և կարող են կողմերի համաձայնությամբ նվազեցվել:

15.11.2. Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, մարքեթինգային հետազոտությունների արդյունքներով պայմանագիրը կարող է կնքվել մարքեթինգային հետազոտությունների արդյունքների ամփոփման օրվանից ոչ շուտ քան 10 (տաս) օր հետո կամ այն դեպքում, եթե նախատեսված է մարքեթինգային հետազոտությունների արդյունքների տեղադրումը Ինտերնետ տեղեկատվական և հեռուստահաղորդակցման ցանցի կայքում՝ այդպիսի տեղադրման օրվանից:⁶

15.11.3. Մասնակիցը, որի պայմանագրի կատարման հայտում նշված պայմանները Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանությամբ (պատվերով, թղթային եղանակով հարցումով) և/կամ մարքեթինգային հետազոտությունների արդյունքների մասին ծանուցման մեջ սահմանված ժամկետի ընթացքում առավելագույն շահավետ են ճանաչվել, պետք է Պատվիրատուին ներկայացնի Էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի, թղթային եղանակով հարցման), այդ թվում նաև դրա անբաժանելի մասը հանդիսացող պայմանագրի նախագծի մեջ առկա պայմաններով նրա կողմից ստորագրված պայմանագրի տեքստը:

15.11.4. Մասնակիցը, որի պայմանագրի կատարման հայտում նշված պայմանները պայմանագրով սահմանված ժամկետում առավելագույն շահավետ են ճանաչվել, պետք է

Պատվիրատուին ներկայացնի պայմանագրի ապահովում, այն դեպքում, եթե էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ սահմանված է այդպիսի պահանջ: Պայմանագրի կատարման ապահովումը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանության (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ նախատեսված չափով և ձևով:

15.11.5. Այն դեպքում, եթե առավելագույն շահավետ ճանաչված պայմանագրի կատարման պայմանները պարունակող մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտը ներկայացրած մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել Պատվիրատուին 15.11.1 կետի համաձայն պատրաստված, նրա կողմից ստորագրված պայմանագրի նախագիծ, կամ պայմանագրի կատարման ապահովում, եթե այդ պահանջը սահմանված է եղել էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերով (պատվերով, թղթային եղանակով

⁶ 15.11.2. կետի թպահանջները կիրառվում են բոլոր պայմանագրերի նկատմամբ, այդ թվում՝ 18 և 19 բաժիններով սահմանված առանձնահատկություններով անցկացված մարքեթինգային հետազոտությունների արդյունքում կնքվող պայմանագրերի:

առաջարկների հարցումով), այդ մասնակիցը համարվում է խուսափած պայմանագրի կնքումից:

15.11.6. Այն դեպքում, եթե առավելագույն շահավետ ճանաչված պայմանագրի պայմանները պարունակող մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտը ներկայացրած մասնակիցը խուսափել է պայմանագիր կքելուց, կամ չի ներկայացրել պայմանագրի կնքման ապահովում, եթե էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի (պատվերի, թղթային եղանակով հարցման) մեջ սահմանված է եղել այդպիսի պահանջ, Պատվիրատուն անհապաղ տեղեկացնում է Կազմակերպչին այդ փաստերի մասին: Կազմակերպիչը պետք է պահանջի մասնակցի կողմից մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի ապահովում, եթե այդ ապահովումը նախատեսված է եղել էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանությամբ (պատվերով, թղթային եղանակով հարցումով): Մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովն իրավունք ունի վերանայել մարքեթինգային հետազոտությունների արդյունքները և որոշել այլ լավագույն հայտը կամ Կազմակերպիչը հայտարարում է նոր մարքեթինգային հետազոտություններ:

15.11.7. Այն դեպքում, եթե մի քանի լուտերով լավագույն են ճանաչվել մարքեթինգային հետազոտությունների նույն մասնակցի հայտերը՝ այդ մասնակցի հետ ամեն լուտով պետք է կնքվի առանձին պայմանագիր:

15.11.8. Պայմանագրի կատարումն իրականացվում է իր պայմանների, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

15.12. Փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացման առանձնահատկությունները

15.12.1. Պատվիրատուն իրավունք ունի անցկացնել էլեկտրոնային կամ թղթային

եղանակով փակ մարքեթինգային հետազոտություններ՝ հրավիրելով գնմանը մասնակցելու մասնակիցների սահմանափակ քանակ, միաժամանակ տեղեկատվական համակարգում մարքեթինգային հետազոտությունների մասին տեղեկատվության տեղադրմամբ կամ առանց տեղադրման:

15.12.2. Փակ մարքեթինգային հետազոտության անցկացման դեպքում հավանական մասնակիցների ցանկը ձևավորում է Գազապրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմինը՝ գնման Նախաձեռնողի առաջարկով:

15.12.3. Փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում կիրառվում են մարքեթինգային հետազոտությունների համար սույն Կարգով սահմանված նորմերը և կանոնները՝ հաշվի առնելով 15.12. կետի պահանջները:

15.12.4. Փակ մարքեթինգային հետազոտությունների արդյունքների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում ձևակերպվող փաստաթղթերը, փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացման ընթացքում ստացված տեղեկատվությունը զանգվածային լրատվամիջոցներում հրապարակման և հանրային տիրույթում Ինտերնետ ցանցում տեղադրման ենթակա չէ:

15.12.5. Փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, որոնց մասին տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք, մարքեթինգային հետազոտություններում մասնակցության են հրավիրվում միայն պետական գաղտնիք համարվող տեղեկություններին համապատասխան թույլատվություն ունեցող մասնակիցները:

15.12.6. Փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում, էլեկտրոնային եղանակով թղթաբանությունը (պատվերը, թղթային եղանակով առաջարկների հարցումը) տրամադրվում է միայն փակ մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հրավիրված մասնակիցներին:

15.12.7. Փակ մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտերը ընդունվում են միայն Կազմակերպչի կողմից փակ մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հրավիրված անձանցից, որոնց Կազմակերպչի կողմից տրամադրվել է էլեկտրոնային եղանակով մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանություն (պատվեր, թղթային եղանակով առաջարկի հարցում):

15.12.8. Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի հրաժարվել փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացումից, ինչպես նաև ցանկացած ժամանակ ավարտել մարքեթինգային հետազոտություններն առանց դրա արդյունքներով պայմանագիր կնքելու, ընդ որում Պատվիրատուն (Կազմակերպիչը) չի վերադարձնում մարքեթինգային հետազոտությունների մասնակցին մարքեթինգային հետազոտությունների գարծընթացներում մասնակցության հետ կապված կրած ծախսերը:

15.12.9. Կազմակերպիչը ուղարկում է մարքեթինգային հետազոտությունների անցկացումից հրաժարվելու մասին ծանուցումները Կազմակերպչի կողմից փակ մարքեթինգային հետազոտություններում մասնակցելու հրավիրված գնման բոլոր մասնակիցներին:

15.12.10. Մասնակիցներին փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացումից հրաժարվելու մասին ծանուցելուց հետո, Կազմակերպիչը մարքեթինգային հետազոտությունների մասնակցի գրավոր հարցումով վերադարձնում է նրա կողմից ներկայացված մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտը, եթե այդ հարցումը ներկայացվել է թղթային եղանակով, ինչպես նաև վերադարձնում է մարքեթինգային հետազոտություններում մասնակցության հայտի ապահովումը, եթե այն ներկայացվել է մասնակցի կողմից մարքեթինգային հետազոտությունների մասին թղթաբանությամբ սահմանված կարգով:

15.12.11. Փակ մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում չի թույլատրվում աուդիո- և վիդեոձայնագրման իրականացում:

15.12.12. Փակ մարքեթինգային հետազոտությունների գործընթացի շրջանակներում Հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը`

15.12.12.1. Կնքել պայմանագիր այն անձի հետ, որից ստացվել է լավագույն առաջարկը:

15.12.12.2. Վարել լրացուցիչ բանակցություններ մասնակիցների հետ` պայմանագրի կատարման լավագույն պայմանները ստանալու համար, այդ թվում նաև ավելի ցածր գնով:

15.12.12.3. Անցկացնել նոր մարքեթինգային հետազոտություններ լրացուցիչ մասնակիցներ փնտրելու նպատակով:

15.12.12.4. Պայմանագրի կնքմանը խոչընդոտող հանգամանքների առկայության դեպքում ավարտել մարքեթինգային հետազոտությունների գործընթացն առանց պայմանագրի կնքելու:

15.12.12.5. Չկայացած ճանաչել փակ մարքեթինգային հետազոտությունները:

15.12.13. Սպրանքների մատակարարում (աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում) իրականացնելու հնարավորության մասին և պայմանագրի կատարման պայմանների մասին գնման հավանակ մասնակիցներին ուղարկելու միջոցով փակ մարքեթինգային հետազոտություններն անցկացվում են թղթային եղանակով: Այդ գնման արդյունքներով կազմվում է մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի արձանագրություն` անցկացրած գնահատման մեթոդով լավագույն առաջարկի ընտրության մասին որոշմամբ:

15.12.14. Մասնագիտացված տեղեկատվական համակարգերում կամ Ինտերնետ հարթակներում պատվերը տեղադրելու միջոցով փակ մարքեթինգային հետազոտությունների և համապատասխան առաջարկների ստացումն իրականացվում է այդ տեղեկատվական համակարգերի կամ Ինտերնետ հարթակների ֆունկցիոնալի օգտագործմամբ: Այդպիսի գնման արդյունքներով կազմվում է մարքեթինգային հետազոտությունների Հանձնաժողովի արձանագրություն` անցկացրած գնահատման մեթոդով լավագույն առաջարկի ընտրության մասին որոշմամբ:

15.13. Կետը հանված է:

16. ՈՉ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐ: ԱՃՈՒԴՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ

16.1. Պատվիրատուն իրավունք ունի անցկացնելու ոչ այլընտրանքային գնում հետևյալ

դեպքերում՝

16.1.1. Ապրանքների մատակարարումները, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը դասվում են բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության ոլորտին և բացակայում է մատակարարի (կապալառուի, կատարողի) այլընտրանքը:

16.1.2. Պայմանագիրը կնքվում է էլեկտրական էներգիայի մատակարարման երաշխավորող մատակարարի հետ:

16.1.3. Աշխատանքները կամ ծառայությունները կատարվում են (մատուցվում են) բացառապես գործադիր իշխանության մարմինների կողմից՝ համաձայն նրանց լիազորությունների կամ նրանց ստորադաս պետական հաստատությունների, պետական ունիտար ձեռնարկությունների, այլ պետական և մունիցիպալ ծառայությունների մատուցմանը մասնակցող, պետական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ և պարտադիր ծառայությունների մատուցման համար օրենքների համաձայն գործադիր իշխանության մարմինների կողմից ներգրավված կազմակերպությունների կողմից, որոնց համապատասխան լիազորությունները սահմանվում են ՀՀ նորմատիվ իրավական ակտերով:

16.1.4. Իրականացվում է ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղագծերի, ջերմամատակարարման, գազամատակարարման (բացառությամբ հեղուկացված գազի վաճառքի ծառայությունները) ծառայությունների մատուցում, ՀՀ օրենսդրության համաձայն կարգավորվող գներով (սակագներով) միացում ինժեներատեխնիկական ապահովման ցանցերին:

16.1.5. Կնքվում է չափման միջոցների ցանկում ընդգրկված չափման միջոցների ստուգման ծառայությունների մատուցման պայմանագիր, որոնց ստուգումն իրականացվում է միայն ՀՀ օրենսդրությամբ հաստատված չափումների միասնականության ապահովման ոլորտում հավատարմագրված պետական չափագիտական կենտրոնների կողմից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չափումների միասնականության ապահովման ոլորտում հավատարմագրված պետական չափագիտական կենտրոնների հետ:

16.1.6. Կնքվում է կոշտ կոմունալ (կենցաղային) թափոնների օգտահանության ծառայությունների մատուցման պայմանագիր:

16.2. Պատվիրատուն իրավունք ունի իրականացնել ապրանքների գնում ոչ մրցակցային գնման միջոցով «աճուրդով գնումներ»՝ Պատվիրատուի մոտ ապրանքների, որոնց վաճառքը իրականացվում է վաճառողների կողմից անվճարութնակության (սնանկության) գործընթացների, պետական (մունիցիպալ) գույքի սեփականաշնորհման գործընթացների, կատարողական վարույթի շրջանակներում կազմակերպվող աճուրդներին ձեռք բերման կարիքի առկայության դեպքում:

16.3. Տեղեկատվական համակարգում ոչ այլընտրանքային գնման և աճուրդով գնումների մասին տեղեկատվության տեղադրումն իրականացվում է Պատվիրատուի կողմից՝ նշելով գնման առարկան: Ոչ այլընտրանքային գնման իրականացման դեպքում արձանագրությունների ձևակերպում չի պահանջվում:

17. ԳՆՈՒՄՆԵՐ ՄԻԱԿ ՄՍՏԱԿԱՐԱՐԻՑ (ԿԱՊԱԼԱՌՈՒԻՑ, ԿՍՏԱՐՈՂԻՑ)

17.1. Պատվիրատուն իրավունք ունի իրականացնելու ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնում միակ մատակարարից (կապալառուից, կատարողից), երբ տնտեսական, ժամանակավոր կամ օբյեկտիվ պատճառներով մրցակցային գնման անցկացումը նպատակահարմար չէ: Այդպիսի գնումները կարող են անցկացվել հետևյալ դեպքերում՝

17.1.1. Կետը հանված է:

17.1.2. Կնքվում է էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագիր:

17.1.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության (տվյալ պայմաններում արտակարգ և անխուսափելի հանգամանքների) հետևանքով առաջացել է որոշ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, տեխնաձին վթարների լիկվիդացման, շտապ բժշկական միջամտության անհրաժեշտության կարիք, ինչպես նաև դրանց առաջացման սպառնալիքը կանխելու նպատակով, որի հետ կապված շատ ժամանակ պահանջող գնումների այլ միջոցների օգտագործումը նպատակահարմար չէ:

17.1.4. Իրականացվում է որոշ հեղինակների տպագիր կամ էլեկտրոնային հրատարակությունների գնում, էլեկտրոնային հրատարակությունների թույլտվության տրամադրման ծառայությունների մատուցում կրթական հաստատությունների, գրադարանների, գիտական կազմակերպությունների, հրատարակիչների մոտ այդպիսի տպագիր և էլեկտրոնային հրատարակությունների գործունեությունն ապահովելու համար:

17.1.5. Կնքվում է կենդանաբանական այգի, թատրոն, կինո, կրկես, թանգարան, ցուցահանդես, մարզական, մշակութային կամ կրթական միջոցառումներ այցելելու պայմանագիր:

17.1.6. Իրականացվում է աշխատակցին գործուղման (գործուղման վայր մեկնելու և ետ վերադառնալու, բնակելի տարածքի վարձակալության, տրասպորտային սպասարկման, սննդի ապահովման), հերթապահության ուղարկելու հետ կապված ծառայությունների գնում:

17.1.7. Մրցույթը կամ աճուրդը չկայացած են ճանաչվել և մրցույթին (աճուրդին) մասնակցության գնման գործընթացի միայն մեկ մասնակցի հայտը չի մերժվել և պայմանագիրը կնքվում է այդ մասնակցի հետ:

17.1.8. Մրցակցային գնմանը/մարքեթինգային հետազոտություններին մասնակցելու համար չի ներկայացվել որևէ հայտ կամ մրցակցային գնմանը/մարքեթինգային հետազոտություններին չի թույլատրվել որևէ հայտ և մրցակցային գնումը/ մարքեթինգային հետազոտությունները ճանաչվել են չկայացած, ընդ որում պայմանագիրը կարող է կնքվել Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ համաձայնեցմամբ և միայն մրցակցային գնման/մարքեթինգային հետազոտությունների մասին փաստաթղթերի բովանդակության մեջ ընդգրկված պայմանագրի նախագծով սահմանված

պայմաններով, մրցակցային գնման/մարքեթինգային հետազոտությունների անցկացման դեպքում սահմանված պայմանագրի նախնական (առավելագույն) գինը չգերազանցող գնով:

17.1.9. Պայմանագրի գինը (պայմանագրով ապրանքի, աշխատանքների, ծառայությունների արժեքը) չի գերազանցում «Գազպրոմ» ՀԲԸ-ի կամ Գազպրոմ Խմբի Ընկերության կողմից առանց մրցակցային գնումների անցկացման կնքվող պայմանագրերի համար «Գազպրոմ» ՀԲԸ-ի հրամանով սահմանված առավելագույն գինը:

Պայմանագրի (գնման առարկայի) գինը որոշելու նպատակով Պատվիրատուն կարող է տեղադրել (ուղարկել) գնային առաջարկի ներկայացման տեղեկատվության հարցում՝ համաձայն 4.5.5.1. կետի:

17.1.10. Կնքվում է «Գազպրոմ» ՀԲԸ տնօրենների Խորհրդի Նախագահի, «Գազպրոմ» ՀԲԸ տնօրենների Խորհրդի Նախագահի մասնակցությամբ անցկացվող արտագնաց միջոցառումների (հյուրանոցային, տրանսպորտային սպասարկում, համակարգչային սարքավորման շահագործում, սննդի ապահովում) ապահովման հետ կապված ծառայությունների մատուցման պայմանագիր:

17.1.11. Կնքվում է պայմանագիր մատակարարի (արտադրողի) կամ նրա միակ դիլերի հետ, որը իրականացնում է մատակարարված սարքավորման շեֆ-մոնտաժում, պատվիրատուին մատակարարված ապրանքների երաշխիքային և ընթացիկ սպասարկում (երաշխիքային ժամանակահատվածում):

17.1.12. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի հետ կնքվում է քաղաքացիաիրավական պայմանագիր՝ իր անձնական աշխատանքի օգտագործմամբ աշխատանքներ կատարելու, ծառայություններ մատուցելու համար (փաստաբանի ծառայություններ, դասախոսական ծառայություններ, էքսկուրսավարի ծառայություններ, գրականության կամ արվեստի ստեղծագործությունների ստեղծման ծառայություններ, համերգային կամ թատերական գործունեություն իրականացնելիս կատարման ծառայություններ, վերգետնյա գազատարների ներկում, գազի հաշվիչների տեղադրում և փոխարինում (փականագործի և եռակցողի ծառայությունների մատուցում), գազ սպառողների մոտ ազդանշանային սարքերի և վթարային անջատման կափույրների տեղադրում և փոխարինում, ԷՊԿ կայանների անոդային հողակցիչների տեղադրում, գազատարների սպասարկման ծառայությունների մատուցում, առանձին նախագծային աշխատանքների կատարում (այդ թվում՝ բնակչության ներտնային գազամատակարարման նախագծերի կազմում, գեոդեզիա, երկրաբանություն և այլն), աշխատողների և ապրանքների տեղափոխման ապահովման ծառայություններ, փաստաթղթերի կազմման ծառայություններ, փաստաթղթերի օտար լեզուներով թարգմանության ծառայություններ, բեռնման և բեռնաթափման ծառայություններ, տրանսպորտային միջոցների լվացման և դրանց վրա մանր վերանորոգումների իրականացման ծառայություններ, ձեռքով հողային աշխատանքների իրականացում, քարթրիջների լիցքավորում, խորհրդատվական ծառայություններ, համակարգչային օպերատորի ծառայություններ, մանր ընթացիկ վերանորոգումների և ներտնային շին-մոնտաժային աշխատանքների իրականացում:

Սույն կետով կնքվող քաղաքացիաիրավական պայմանագրի գումարը չի կարող գերազանցել 12.0 մլն. ՀՀ դրամը:

17.1.13. Կնքվում է գազի առուվաճառքի, գազի կոնդենսատի, նավթի արտաբորսայական պայմանագիր հետագա վերավաճառքի կամ վերամշակման համար, երբ վաճառողի պայմաններով գործարքի պայմանները չեն կարող հրապարակավ հայտարարվել:

17.1.14. Կնքվում է պայմանագիր ՀՀ սահմաններից դուրս գազի տարանցման և սեղմման համար, գազի պահեստարանների և գազի պահեստարանների ամրագրման ծառայությունների մատուցման պայմանագիր իրավաբանական անձի հետ:

17.1.15. Իրականացվում են կապիտալ շինարարական օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման, հեղինակների հսկողության, համապատասխան հեղինակների կողմից հեղինակային վերահսկողության գնումների ծառայություններ:

17.1.16. Կնքվում է անհատապես սահմանված անշարժ գույքի վարձակալության կամ առուվաճառքի պայմանագիր:

17.1.17. Կնքվում է հովանավորվող գովազդի տարածման ծառայությունների մատուցում նախատեսող պայմանագիր, որով հովանավոր է հանդիսանում «Գազպրոմ» ՀԲԸ-ն և/կամ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն:

17.1.18. Կնքվում է էլեկտրոնային հարթակի օպերատորի հետ պայմանագիր:

17.1.19. Անցկացվում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում ոչ մրցակցային կամ ցածր մրցակցային շուկայում, ինչպես նաև սահմանափակ մրցակցային պայմաններում: Այդ գնումը կարող է անցկացվել Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ համաձայնեցմամբ՝ պատվիրատուի կողմից պարզաբանման ներկայացման դեպքում, որ ապրանքները (աշխատանքները, ծառայությունները) պահանջվող քանակով և ժամանակին կարող են մատակարարվել (կատարվեն, մատուցվեն) միայն մեկ մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից և մրցակցային գնման անցկացումը նպատակահարմար չէ:

17.1.20. Գազպրոմ Խմբի Ընկերության կողմից, որի հետ ստորագրված է մրցակցային գնման/մարքեթինգային հետազոտությունների արդյունքներով պայմանագիր, կնքվում է պայմանագիր նաև ենթամատակարարի (ենթակապալառուի, համակատարողի) հետ այդ գնմանը մասնակցելու իր հայտում Գազպրոմ Խմբի այդ Ընկերության կողմից նշված պայմաններով (գնում, ծավալով):

17.1.21. Կնքվում է մտավոր գործունեության արդյունքի կամ համապատասխան իրավահաստատող փաստաթղթով (արտոնագրով, սերտիֆիկատով) հաստատված նույնականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունքին տիրապետող մատակարարի (կատարողի, կապալառուի) մոտ մտավոր գործունեության արդյունքների գնման պայմանագիր:

17.1.22. Կնքվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի վճարային պարտավորությունների աջակցման և սպասարկման մասով ծառայությունների գնման պայմանագիր:

17.1.23. Կնքվում է ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագիր օտարերկրյա իրավաբանական անձի հետ, երբ օտարերկրյա գործընկերների մասնակցությամբ էլեկտրոնային եղանակով մրցակցային գնման անցկացումն անհանրին է տեխնիկական և կազմակերպչական պատճառներով:

17.1.24. Կետը հանված է:

17.1.25. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ապրանքների մատակարարման և/կամ սերվիսային սպասարկման, ապրանքի արտադրողի կամ նրա կողմից լիազորված այլ անձի հետ ապրանքի վերանորոգման պայմանագրի կնքում, ի կատարումն՝ նախկինում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ լիազորված անձանց որոշման կարգը, գնի համաձայնեցման կարգը, մատակարարման ընդհանուր պայմանները սահմանող շրջանակային պայմանագրի (համաձայնագրի):

17.1.26. «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության Նախագահի կողմից ընդունվել է որոշում կնքել միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագիր, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի պաշտոնատար անձի դիմումի հիման վրա՝ միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ պայմանագիր կնքելու անհրաժեշտության հիմնավորումով:

Որպես այդպիսի հիմնավորում ապրանքային շուկաներում կարող են նախատեսվել այլ եղանակով գնում անցկացնել չթույլատրող ապրանքի, աշխատանքի կամ ծառայությունների շրջանառության պայմանները, այդ թվում նաև սահմանափակ մրցակցության առկայությունը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք վկայում են, որ միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ գնումը տնտեսական արդյունավետության տեսանկյունից նախընտրելի է պատվիրատուի համար կամ օբյեկտիվ պատճառներով դրա անցկացումը այլ ձևով նպատակահարմար չէ:

Այս դեպքում մինչև պայմանագրի կնքումը Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմինը տալիս է առաջարկները «Գազպրոմ» ՀԲԸ Խորհրդի Նախագահին տվյալ պայմանագրով գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնով, որից հետո «Գազպրոմ» ՀԲԸ Խորհրդի Նախագահը վերջնականապես հաստատում է այդ պայմանագրի գինը:

Միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) «Գազպրոմ» ՀԲԸ Խորհրդի Նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի հետ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու մասին որոշման ընդունումը չի թույլատրվում:

17.1.27. Վարկային կազմակերպության հետ կնքվում է «Գազպրոմ» ՓԲԸ պարտավորությունների ապահովման բանկային երաշխիքների տրամադրման պայմանագիր:

17.1.28. Կնքվում է բանկային հաշվի բացման, էլեկտրոնային հաշվարկների («Բանկ-հաճախորդ») համակարգերի օգտագործման, հաշվարկա-դրամարկղային սպասարկման պայմանագիր, ներառյալ՝ ինկասացիայի, կորպորատիվ բանկային քարտերի թողարկման և սպասարկման ծառայությունները:

17.1.29. «Գազպրոմ» ՀԲԸ Խորհրդի Նախագահի կողմից ընդունվել է որոշում ՀՀ տարածքից դուրս գրանցված օտարերկրյա վարկային կազմակերպության (բանկի) հետ «Գազպրոմ» ՀԲԸ, Գազպրոմ Ընկերության Խմբին ֆինանսավորման (վարկի) տրամադրման ֆինանսական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու մասին:

17.1.30. Լրատվամիջոցների խմբագրության (հրատարակչի, հեռարձակողի) հետ

կնքվում է ՀՀ նորմատիվ իրավական ակտերի պահանջների համաձայն հրապարակման ենթակա տեղեկատվական նյութերի տեղադրման պայմանագիր:

17.1.31. Իրականացվում է Գազպրոմ Խմբի Ընկերություն չհանդիսացող կազմակերպության հետ պայմանագրի կատարման համար Պատվիրատուին անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում, որոնց պայմաններով նախատեսվում է նշված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման Պատվիրատուի կողմից կրած ծախսերի ամբողջական հատուցում (փոխհատուցում) այդ կազմակերպության կողմից:

17.1.32. Բազմաբնակարան շենքում տարածքների սեփականատերերի ընդհանուր ժողովի որոշման կամ բնակարանային օրենսդրության համաձայն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից անցկացվող բաց մրցույթի հիման վրա կառավարող ընկերության հետ կնքվում է բազմաբնակարան շենքի կառավարման պայմանագիր, եթե բազմաբնակարան շենքում տարածքը հանդիսանում է Պատվիրատուի սեփականություն:

17.1.33. Կնքվում է թեստավորման լաբորատորիայի հավատարմագրման չափանիշներին համապատասխանության հաստատման ծառայությունների մատուցման պայմանագիր պետական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ և պարտադիր ծառայությունները Պատվիրատուին մատուցելու նպատակով ընտրությունն անցած հավատագրման փորձագետի աշխատանքի հիմնական վայրը հանդիսացող փորձագիտական կազմակերպության կամ փորձագիտական ընկերության հետ, որի հետ այդ փորձագետը նշված օրենքի համաձայն աջակցում է Պատվիրատուին ծառայությունների մատուցման համար:

17.1.34. «Գազպրոմ» ՀԲԸ որոշմամբ կնքվում է պարտավորության մեջ (Պատվիրատուի փոփոխվելու մասին) անձանց փոփոխվելու մասին համաձայնագիր:

17.2. Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմինն իրավունք ունի անցկացնելու միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից կնքվող պայմանագրերի գների ձևավորման և հիմնավորման կարգի վերլուծություն:

17.3. Միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) մոտ գնման մասին տեղեկատվությունը չի տեղադրվում տեղեկատվական համակարգում: Միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) մոտ գնման իրականացման դեպքում արձանագրությունների ձևակերպում չի պահանջվում:

18. Կետը հանված է:

19. Կետը հանված է:

20. Կետը հանված է:

**21. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

21.1. Էլեկտրոնային եղանակով ոչ մրցակցային գնումը առևտրային հարթակի օգտագործմամբ անցկացվում է Պատվիրատուի հետ մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պայմանագիրը կնքելու իրավունքի համար գնման մասնակիցների միջև մրցակցությունը ապահովող դրանում նախատեսված գնման

գործընթացների օգտագործմամբ:

21.2. Սույն բաժնի նպատակների համար օգտագործվում են հետևյալ եզրույթները և հասկացությունները՝

Հայտ – օֆերտա կամ հրապարակային օֆերտա գնի և մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) այլ պայմանների մասին տեղեկատվության հարցում,

Մատակարարի (կապալառուի, կատարողի) ծանուցում – Պատվիրատուին հասցեագրված և օֆերտա չհաղիսացող մատակարարի (կապալառուի, կատարողի) նույնական ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) կամ դրանց բացակայության դեպքում նմանատիպ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին տեղեկատվությունը պարունակող Հայտի պատասխան,

Նույնական ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ) – 4.5.2. կետի համաձայն նույնական ճանաչվող ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ),

Նմանատիպ ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ) – 4.5.3. կետի համաձայն նմանատիպ ճանաչվող ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ,

Տեղեկատու- ապրանքների, աշխատանքների, ծառայությունների մասին, որոնք կարող են վաճառվել Առևտրային հարթակի միջոցով տեղեկատվություն պարունակող տեղեկատու:

21.3. Առևտրային հարթակի ֆունկցիոնալի օգտագործմամբ գնման նախապատրաստման և իրականացման դեպքում, Պատվիրատուն և գնման մասնակիցները առաջնորդվում են հետևյալով՝

Պատվիրատուն տեղադրում է Հայտը և Առևտրային հարթակում գրանցված և այնտեղ իրենց գնացուցակները տեղադրած մատակարարների (կապալառուների, կատարողների) ցանկից իրականացնում է Հայտի կատարման պատրաստակամության մասին ծանուցած (այսուհետ՝ Ծանուցում) մատակարարի (կապալառուի, կատարողի) ընտրություն,

Առևտրային հարթակում մատակարարների (կապալառուների, կատարողների) գրանցման կանոնները տեղադրված են Ինտերնետ տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցում,

Գրանցված մատակարարը (կապալառուն, կատարողը) պարտավոր է ժամանակին մտցնելու փոփոխություններ գրանցման ժամանակ իր կողմից Առևտրային հարթակում ներկայացված տեղեկություններում՝ այդ փոփոխությունների օրվանից 5 (հինգ) օրվա ընթացքում,

Առևտրային հարթակում աշխատանքի կանոնները (կանոնակարգը), այդ թվում նաև ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնի մասին տեղեկություններ պարունակող գնացուցակների ձևերը մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից տեղադրված են Ինտերնետ տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցում:

21.4. Պատվիրատուն՝

իրականացնում է անհրաժեշտ ապրանքի (աշխատանքի, ծառայության) տեսակների ընտրություն,

ձևավորում է Հայտը և ուղարկում է այն Առևտրային հարթակում իրենց գնացուցակները

տեղադրած մատակարարներին (կապալառուներին, կատարողներին),

իրականացնում է մատակարարի (կապալառուի, կատարողի) Ծանուցումների հավաքագրում և ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մատակարարման պայմանների մասին դրանցում առկա տեղեկատվության վերլուծություն,

ճշտում է մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) մասին տվյալները՝ լրացուցիչ հարցում ուղարկելու միջոցով (անհրաժեշտության դեպքում),

ձևակերպում է մատակարարին (կապալառուին, կատարողին) նախնական պատվերը:

21.4.1. Հայտը իր մեջ ներառում է հետևյալ տեղեկությունները՝

1) տեղեկատվից ապրանքի, աշխատանքի, ծառայությունների անվանումը և դրա նկարագրությունը և բնութագրերը,

2) չափման միավորը;

3) ապրանքի, աշխատանքների, ծառայությունների քանակը,

4) ապրանքի, աշխատանքի, ծառայության բեռնման նվազագույն նորման,

5) ապրանքի, աշխատանքների, ծառայությունների արժեքը՝ նշելով ավելացված արժեքի հարկը մատակարարի (կապալառուին, կատարողի) գնացուցակում նշված ապրանքի, աշխատանքի, ծառայության մեկ միավորի գնի համաձայն,

6) վայրը (հասցեն) և առաքման (ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պայմանները,

7) վճարման պայմանները և կարգը,

8) հատուկ պայմաններ, մեկնաբանություններ (անհրաժեշտության դեպքում),

9) ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման,

ծառայությունների մատուցման ժամկետը,

10) մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից Ծանուցումների ընդունման ժամկետը,

11) Պատվիրատուի համար առաջնահերթ կետերը և ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պայմանների նկատմամբ առանձին պահանջները:

12) Պատվիրատուին հետաքրքրող նույնական ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) կամ դրանց բացակայության դեպքում նմանատիպ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մեկ կամ ավել կետերի գնի մասին հայտը՝ ներառյալ ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ծախսերը (անհրաժեշտության դեպքում):

21.4.2. Հայտում սահմանված մատակարարների (կապալառուների, կատարողների) Հայտարարությունների ընդունման ժամկետը չպետք է լինի Հայտը ուղարկելու օրվանից 2-ից պակաս և 5 աշխատանքային օրից ավել:

21.4.3. Մատակարարը (կապալառուն, կատարողը) ի պատասխան Հայտի կարող է ներկայացնել Ծանուցում ինչպես բոլոր, այնպես էլ կետերի մի մասով: Ծանուցման ձևակերպման դեպքում, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնի մասին տեղեկությունների ներառումը ըստհայտում Պատվիրատուի կողմից նշված կետերի,

պարտադիր է համարվում:

21.4.4. Մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) տվյալների ճշգրտման մասին Պատվիրատուին հարցումը (Լրացուցիչ հարցում) ստացած մատակարարը (կապալառուն, կատարողը) այն ուղարկելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի ձևակերպելու մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) մասին ճշգրտված տվյալներ: Այն դեպքում, եթե մատակարարը (կապալառուն, կատարողը) չի ձևակերպել սույն կետում նշված ժամկետում ճշգրտված տվյալներ, Լրացուցիչ հարցումը չեղարկվում է և մատակարարից (կապալառուից, կատարողից) ճշգրտված տվյալները չեն ընդունվում:

21.4.5. Ծանուցումների ուսումնասիրման արդյունքներով Պատվիրատուն ինքնուրույն ընտրում է մատակարարի (կապալառուի, կատարողի), ում առաջարկը մեծ հաշվով համապատասխանում է Հայտի պահանջներին և Պատվիրատուի շահերին և որը համապատասխանում է Պատվիրատուի պահանջներին, որից հետո ձևակերպում է նախնական պատվեր և ուղարկում է այն հաստատման տվյալ մատակարարին (կապալառուին, կատարողին):

21.4.6. Մատակարարը (կապալառուն, կատարողը) նախնական պատվերը ստանալու դեպքում ուսումնասիրում է այն և ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ հաստատում է նախնական պատվերը կամ մերժում է այն:

21.4.7. Մատակարարը պարտավոր է նախնական պատվերի վերաբերյալ որոշում կայացնել Պատվիրատուի կողմից նախնական պատվերը ուղարկելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին տեղեկացնել Պատվիրատուին նույն ժամկետում:

21.4.8. Պատվիրատուն իրավունք ունի մատակարարից (կապալառուից, կատարողից) հաստատված պատվերը ստանալու դեպքում հաստատել այն Առևտրային հարթակի միջոցով կամ մերժել պատվերի հաստատումը՝ առանց մերժման պատճառը նշելու, այս դեպքում Պատվիրատուն չի կրում որևէ պատասխանատվություն մատակարարի (կապալառուի, կատարողի) դիմաց:

22. ԱՌԱՆՁԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22.1. Սույն Դրույթի պահանջները կիրառվում են սույն բաժնով սահմանված առանձնահատկություններով հարաբերությունների նկատմամբ կապված՝

22.1.1. Պատվիրատուի կողմից օտարերկրյա իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրի կատարման հետ, որի առարկան է հանդիսանում ՀՀ սահմաններից դուրս ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը,

22.1.2. Պատվիրատուի կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման իրականացում իր հետ փոխկապակցված անձանցից,

22.1.3. Իր գործունեությունը օտարերկրյա պետության տարածքում իրականացնելու նպատակով, օտարերկրյա պետության տարածքում գրանցված Գազպրոմ Իմբի Ընկերության ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման հետ:

22.2. Պատվիրատուները իրականացնում են 22.1. կետում նշված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումներ (սույն բաժինը կիրառելու նպատակով այսուհետ տեքստում՝ Գնումներ), իրենց պահանջմունքները ապրանքներում, աշխատանքներում, ծառայություններում ժամանակին և ամբողջությամբ բավարարելու նպատակով՝ գնի, որակի և հուսալիության և դրամական միջոցների օգտագործման արդյունավետության անհրաժեշտ ցուցանիշներով:

22.3. Գնումները անցկացվում են մարքեթինգային հետազոտություններ եղանակով, եթե Գնումների պլանավորման փուլում 6.2.1, 6.2.2 կետերով նախատեսվածների ցանկից գնման այլ եղանակ չի սահմանվել Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից:

22.4. Պատվիրատուները կազմակերպում և անցկացնում են Գնումները առանց 1.7 կետով նախատեսված գնումների տեղեկատվական ապահովման նկատմամբ պահանջների, այդ թվում նաև տեղեկատվական համակարգում, ինչպես նաև պայմանագրերի ռեեստրում փաստաթղթերի տեղադրման մասին պահանջների գործածման:

22.5. Գնումների պլանավորումը իրականացվում է գնումների պլանների կազմման եղանակով ոչ պակաս քան 1 (մեկ) տարի ժամկետով, ԷԳԱՀ-ում այդպիսի պլանի ձևի նկատմամբ Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից սահմանված պահանջների համաձայն:

22.6. Կազմակերպիչը (Պատվիրատուն) տեղադրում է Գնումների մասին տեղեկատվությունը ԷԳԱՀ-ում, ինչպես նաև էլեկտրոնային հարթակում՝ էլեկտրոնային եղանակով այդ գնումը անցկացնելու դեպքում:

22.7. Կետը հանված է:

22.8. Կետը հանված է:

22.9 Կետը հանված է:

22.10. Մարքեթինգային հետազոտությունների անցկացման միջոցով Պատվիրատուի հետ փոխկապակցված անձանց մոտ գնումը իրականացվում է 15 բաժնով նախատեսված կարոններով:

22.11 Կետը հանված է:

22.12. Պատվիրատուի հետ փոխկապակցված անձանց մոտ գնումների անցկացման կարգի և ձևի նկատմամբ լրացուցիչ պահանջները կարող են սահմանվել «Գազպրոմ» ՀԲԸ առանձին ներքին նորմատիվ ակտով:

22.13. Պատվիրատուն իրավունք ունի անցկացնել ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում իր հետ փոխկապակցված անձի մոտ առանց մարքեթինգային հետազոտությունների անցկացման (կետ 22.10), 16 բաժնող, 17.1 կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, եթե՝

22.13.1. Գազպրոմ Խմբի Ընկերության կողմից իրականացվում է «Գազպրոմ» ՀԲԸ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնում նրա հետ Փոխկապակցված ձանաչված անձի հետ:

22.13.2. Կնքվում է գազի արդյունահանման, փոխադրման, պահպանման, վերամշակման ծառայությունների մատուցման պայմանագիր «Գազպրոմ» ՀԲԸ դուստր

ընկերություններ հանդիսացող Պատվիրատուի հետ Փոխկապակցված ճանաչված անձանց հետ, որոնց կանոնադրական կապիտալի 100% պատկանում է «Գազպրոմ» ՀԲԸ, կամ գազի արդյունահանում, փոխադրում, պահպանում, վերամշակում իրականացնող, որոնց արտադրական օբյեկտները կազմում են գազամատակարարման համակարգի մաս և գտնվում են նրանց մոտ սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքերով, «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերությունների դուստր ընկերությունների հետ, պայմանով, որ «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերությունների այդ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալի 100% պատկանում է «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերություններին «Գազպրոմ» ՀԲԸ հետ համատեղ:

22.13.3. Կնքվում է հեղուկ ածխաջրածինների արդյունահանման, փոխադրման, պահպանման, վերամշակման ծառայությունների մատուցման պայմանագիր «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերություններ հանդիսացող Պատվիրատուի հետ Փոխկապակցված ճանաչված անձանց հետ, որոնց կանոնադրական կապիտալի 100% պատկանում է «Գազպրոմ» ՀԲԸ, կամ հեղուկ ածխաջրածինների արդյունահանում, փոխադրում, պահպանում, վերամշակում իրականացնող, և որոնց արտադրական օբյեկտները գտնվում են նրանց մոտ սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքերով, «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերությունների դուստր ընկերությունների հետ, պայմանով, որ «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերությունների այդ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալի 100% պատկանում է «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերություններին «Գազպրոմ» ՀԲԸ հետ համատեղ:

22.13.4. Կնքվում է ներդրումային պայմանագիր, որով որպես ներդրող է հանդես գալիս «Գազպրոմ» ՀԲԸ:

22.13.5. Պատվիրատուի հետ Փոխկապակցված անձինք ճանաչված «Գազպրոմ» ՀԲԸ և Գազպրոմ Խմբի Ընկերության միջև կնքվում է շարժական գույքի վարձակալության կամ առուվաճառքի պայմանագիր, անշարժ գույքի և/կամ շարժական գույքի կոնսերվացիայի, կոնսերվացիայից հանելու, լիկվիդացման ծառայությունների մատուցման պայմանագիր»:

22.13.6. Պատվիրատուի հետ փոխկապակցված անձ ճանաչված «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերության հետ, որի կանոնադրական կապիտալի 100% պատկանում է «Գազպրոմ» ՀԲԸ կամ «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերությունների դուստր ընկերությունների հետ, պայմանով, որ «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերությունների այդ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալի 100% պատկանում է «Գազպրոմ» ՀԲԸ դուստր ընկերություններին «Գազպրոմ» ՀԲԸ հետ համատեղ կնքվում է աշխատանքների (ծառայությունների) հետևյալ տեսակների գնման պայմանագիր՝

22.13.6.1. Կապի ծառայությունների՝

տեղական և ներքին հեռախոսային կապի,

հեռահաղորդակցման կապի ծառայությունների, այդ թվում նաև Ինտերնետ ցանցի,

արբանյակային կապի,

միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի ծառայություններին, «Գազպրոմ» ՀԲԸ կապի ցանցի ռեսուրսներին հասանելիության տրամադրում, կապի ցանցի ռեսուրսներին հասանելիության կետերի ստեղծում և սպասարկում,

տվյալների փոխանակման ցանցում կապի ծառայությունների, այդ թվում նաև ձայնային տեղեկատվության փոխանցման նպատակներով (IP-հեռախոսակապ),

կապի ուղիների տրամադրում,

Գազպրոմ Խմբի Ընկերության հեռահաղորդակցության ցանցերին միանալու ծառայությունների տրամադրում,

շարժական ռադիոհեռախոսային (բջջային) կապի:

22.13.6.2. Կապալառուների (կատարողների) սեփական տեխնիկական կենտրոնների բազայում կապի սարքավորման սպասարկման և վերանորոգման աշխատանքների (ծառայությունների):

22.13.6.3. Տեղեկատվական-տեխնիկական ապահովման ծառայությունների՝ «Գազպրոմ» ՀԲԸ ծրագրային ապահովման օգտագործման իրավունքի կորպորատիվ լիցենզային համաձայնագրերի գործակալի ուղեկցման ծառայությունների; Ժամանակավոր օգտագործման տրամադրման և օգտատերերի և ծայրամասային սարքավորումների աշխատանքային տեղերի հաշվողական տեխնիկայի միջոցների համատեխնիկական սպասարկման ծառայությունների,

օգտագործման իրավունքի տրամադրման և ծրագրային ապահովման տեխնիկական աջակցության,

կենտրոնական հաշվողական համալիրի, տեղեկատվական հաշվողական համակարգերի, «Գազպրոմ» ՀԲԸ հաստատող կենտրոնների և տեղեկատվության պաշտպանության համակարգերի տվյալների մշակման կենտրոնների համատեխնիկական սպասարկման,

«Գազպրոմ» ՀԲԸ և Գազպրոմ Խմբի Ընկերության և տվյալների փոխանակման ոլորտային համալիրների տեղեկատվական կառավարման համակարգերի աջակցության, շահագործման և ուղեկցման:

22.13.6.4. «Գազպրոմ» ՀԲԸ և ՀՀ տարածքում տեղեկայված դրա դուստր ընկերությունների լիցենզավորված տարածքներում երկրաբանական հետախուզական աշխատանքների (նաֆթի և գազի գտնվելու վայրի փնտրում, գնահատում և հետախուզում), ինչպես նաև նախագծման, նախագծերի ուղեկցման, երկրաբանական հետախուզական աշխատանքների արդյունքների ընդհանրացման աշխատանքների, երկրաբանական մոդելների ստեղծման ծննդավայրերի, պաշարների գործառնական հաշվարկի, լիցենզավորված տարածքների երկրաբանական կառուցվածքի մոդելի թարմացման, սեյսմիկ տեղեկատվության և որոնողահետախուզական աշխատանքների արդյունքների հավաքագրում, համակարգում, պահպանում:

22.13.6.5. «Գազպրոմ» ՀԲԸ շինարարական օբյեկտների նկատմամբ տեխնիկական հսկողության կազմակերպման ծառայություններ:

22.13.6.6. Գազպրոմ Խմբի Ընկերության պահանջումների համար Կենտրոնացված մատակարարումների կազմում նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումների կազմակերպման ծառայություններ:

22.13.6.7. «Գազպրոմ» ՀԲԸ և դրա դուստր ընկերությունների օբյեկտներում տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպման ծառայություններ:

22.13.6.8. «Գազպրոմ» ՀԲԸ օբյեկտների դիագնոստիկական հետազոտման աշխատանքների կազմակերպման ծառայություններ:

22.13.6.9. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ օբյեկտներում գազի, հրդեհների, արդյունաբերական անվտանգության և աշխատանքի պաշտպանության ապահովման, վթարների կանխման և վերացման, պլանային գազի վտանգավոր և վերանորոգման և վերականգնման աշխատանքների իրականացման աշխատանքներ (ծառայություններ)

22.13.6.10. Էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման ինքնաշխատ համակարգի (ԷԱՀԻՀ) շահագործման և դրա տեղեկատվության պահպանման ծառայություններ. Էլեկտրաէներգիայի գնում՝ իր սեփական ցանցերում կորուստները փոխհատուցելու համար:

22.13.6.11. Երկաթուղային տրանսպորտով տրանսպորտային ծառայությունների՝ մատակարարում վագոնների մաքրում սեփական լոկոմոտիվային մեքենաների միջոցով:

22.13.6.12. Չափագիտական ապահովման ծառայություններ:

22.13.6.13. Ածխաջրածնային հումքի և դրա վերամշակման արտադրանքի արտահանման վաճառքի կոմիսիոն ծառայություններ:

22.13.6.14. Զերմամատակարարման ծառայություններ չկարգավորված գներով (կողմերի համաձայնությամբ որոշված գներ):

22.13.7. Կնքվում է պայմանագիր Փոխկապակցված անձի հետ «Գազպրոմ» ՀԲԸ կարգադիր փաստաթղթերի («Գազպրոմ» ՀԲԸ բաժնետերերի Ընդհանուր ժողովների արձանագրությունների, «Գազպրոմ» ՀԲԸ տնօրենների Խորհրդի որոշումների, «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության որոշումների, ինչպես նաև «Գազպրոմ» ՀԲԸ հրամանների և հանձնարարականների «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության Նախագահի ստորագրության) կամ «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության Նախագահի որոշումների կամ Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի որոշման համաձայն:

22.13.8. Փոխկապակցված անձի հետ պայմանագիր կնքելու դեպքում տեղական նորմատիվ ակտերի կամ «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության Նախագահի որոշման համաձայն, մինչև պայմանագրի կնքումը Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմինը «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության Նախագահին տալիս է առաջարկ գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնով, այդ պայմանագրի վերջնական գինը որոշելու համար:

22.13.9. Կնքվում է գազի, գազի կոնդենսատի, նավթի արտաբորսային առուվաճառքի պայմանագիր հետագա վերավաճառքի կամ վերամշակման համար, երբ վաճառողի պայմաններով գործարքները չեն կարող հրապարակավ հայտարարվել:

22.14. Կետը հանված է:

23. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23.1. Պայմանագրի կողմերը իրավունք ունեն գնման արդյունքներով կնքված

պայմանագրում մտցնելու պայմանագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ (այսուհետ՝ փոփոխություններ և լրացումներ), ինչպես նաև լուծելու գնման արդյունքներով կնքված պայմանագիրը՝ օրենսդրությամբ և այդ պայմանագրով նախատեսված կարգով և հիմքերով:

23.2. Գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալի, գնի և պայմանագրով պարտավորությունների կատարման ժամկետի և այլ պայմանների, որոնք ազդում են կամ կարող են ազդել պայմանագրի նշված դրույթների վրա փոփոխումը, ինչպես նաև պայմանագրի լուծումը ենթակա է պարտադիր նախնական համաձայնեցման Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ, իր կողմից նախատեսվախ դեպքերում և իր կողմից սահմանված կարգով:

24 ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

24.1 Ցանկացած անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, Կազմակերպչի, Հանձնաժողովի գործողությունները (անգործություններ):

24.2 Պատվիրատուի, Կազմակերպչի, Հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

Հավելված 1 «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ապրանքների, աշխատանքների,
ծառայությունների գնումների մասին կարգի
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հետ փոխկապակցված անձանց ցանկ

№	Փողկապակցված անձի անվանումը	ՀՎՀՀ/ Գրանցման համար
1	«Տրանսգազ» ՍՊԸ	03520262
2	«Ավտոգազ» ՍՊԸ	00842235
3	«Բութան» ՍՊԸ	03520169
4	«Արմավիրի գազմաշ» ՍՊԸ	04412243
5	«Կորպորատիվ տեխնոլոգիական կապի միջոցների և համակարգերի շահագործման և սպասարկման» ՍՊԸ	00875945
6	«Գազպրոմ» ՀԲԸ	7736050003
7	«Էյ-ի-Ջի Սերվիս» ՍՊԸ	00930884

